

4362
24588
24587

891.71

S-80



187

ԼԵԻՈՆ ՏՕԼՍՏՅՈՅԻ
ԿՐԷՅՑԵՐԵԱՆ ՍՕՆԱՏ



ՔԱՐԳՄԱՆԵՑ

ԽՈՐԷՆ ԾԱՅՐ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՏԵՓԱՆԷ



12003

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԿԸ ԵՆ ՎԻՄԱԿԸ Գ. ՊԱՂՏԱՏԵԱՆ

Սուրբսն համալ մասկուի, թիւ 14.

1898

89104 ԼԵՒՈՆ ՏՕԼՍՏՅԻ

S-804

ԿՐԷՅՅԷՐԵԱՆ ՍՕՆԱՏ



ՔԱՐԳՄԱՆԵՑ

ԽՈՐԷՆ ԾԱՅՐ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՏԵՓԱՆԷ



Printed in Turkey

7080

معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ԵՒ ՎԻՄԱԳՐ. Գ. ՊԱՂՏԱՏԻՆԱՆ

Սուղբսն հարևաւ անսսկսի, քիւ 14.

1893

1346

Մ Ի Խ Օ Ս Գ

Ոմանք կարող են օտարտաի համարել, որ ես ցանկացել եմ Լ. Տօլստոյի այս երկն Հայերէն թարգմանել: Սակայն թարգմանեցի, որովհետեւ սորա մէջ աւետարանական վարդապետութիւն կայ: Տօլստոյն բարձր խղճմտանքի եւ բարձր տաղանդի զարհուրելի ոյժով հանուժէ կենսական աղբից ցեխի մէջ խրված բարոյական խնդիրներ, նոցա տեղաւորուժէ պատշաճաւոր տեղ, ստուգուժէ եւ մարբուժէ նոցանով մարդկային բարդ գոյութեան բոլոր կողմերը: Մարդկային իմաստութիւնը բազմաթիւ տեղեկութիւններն անխտիր ժողվելու մէջ չէ բովանդակվում, հապա այստեղ, ինչպէս ամէն քանի մէջ, կարեւոր են խոհականութեան եւ խղճմտանքի վերահիմնված առաջնորդող սկզբունքը: Իսկ մարդուն հարկաւոր բոլոր գիտութիւններից ամենազլխաւոր գիտութիւնն այն է, թէ ինչպէս ապրելու է, որքան հնարաւոր է սակաւ չարիք եւ շատ բարիք գործելով: Տօլստոյն, իր իղէալական գաղափարները մշակելով, մի տեսակ զրդեցուցիչ բարոյական գեանաշարժ առաջացրեց, ինչպէս ստուժէ Շէրրը: Տօլստոյն այն բարոյագէտներից է, որ անհատին բարւորելով կամենուժէ, ձգտուժէ ամբողջ հասարակութիւնը բարեբոխել: Մարդկութեան ամենալսեմ կատարելատիպը (իղէալ) խելքի, գիտութեան, տաղանդի եւ բարձր բարոյականութեան թագաւորութիւնն է: Տօլստոյի բարոգածը իղէալն է: Իսկ այժմ իղէալներն ընդունելի չեն: Ներկայ գործնական մարդն ստուժէ իղէալներն անհասանելի են, հետեւաբար ինչ պէտք է նոցա մտայն նասել խօսել, Գործնական մարդու կարծիքով, իղէալիստը անմիտ բառի քաղաքավարի համանիշնէ: Ժամանակակից գործնական մարդն իր եւ ին է նուիրում իր կեանքը, ամենայն ներելի եւ աններելի միջոցներով, մանաւանդ հեշտ միջոցներով ձեռք բերել զրամ, զըրամ եւ դարձեալ զրամ: Իսկ զրամի—մեր ժամանակիս տխուր բնադրոշմի—մտաին Տօլստոյն արդէն ասել է թէ պէտք է այրել: Ընդ հակառակն իղէալը նորանով նշանաւոր, ցանկալի եւ անհրաժեշտ է կեանքի համար, որ նա անհասանելի է: Նշանաւոր է ոչ թէ իղէալը, այլ մարդու հոգեկան ոյժերի յաւիտենական ձգտումն եւ ուղղութիւնը



1012
39

2011

դէպի իդէալը: Առանց իդէալների է որ կեանքը «ունայնուժիւն» է դառնում: Իդէալներ չունենալով է, որ կեանքը դատարկ է երեւում եւ մարդիկ միայն նգովումեն եւ հառաչում, ինչպէս երբեմն աղօթում էին: Լաւ է սակը Դէկարտը թէ « լաւագոյն մարդիկ միայն իրանց լաւագոյն մտքեր են ներշնչում մարդիկներին»: Եւ Տօլստօյն հաղորդումէ մեզ իր հոգու ամենամանկագին գանձը իր ըմբռնած ամենատուրբ խօսքը: Եւ հարկաւորէ ոչ միայն լսել, հապա եւ կատարել նորա խօսքը, համաձայն առաքելական պատուէրին:

Տօլստօյն շատ մեծ վարպետ է ուրիշների հոգիներ Ստիանցելու, նա Զանաչումէ թէ մանուկի հոգին, թէ հին բարձր աստիճանաւորի հոգին, թէ օրիորդի մտքերն եւ զգացմունքը, թէ արձակուրդ ստացած արքեջօղ զինուորի հոգեկան շարժմունքը: Ընթերցողը կարդումէ եւ այս բոլորը նորան զարմնալի կերպով նոր էւ շատ ճշմարիտ է երեւում:

Ռուսական ամբողջ գրականութեան մէջ չէ եղել եւ չկայ ոչ մի երկ, որ նոյնչափ աղմուկ, զրգիւ, յուզմունք, հարցասիրութիւն, նաեւ հակառակութիւն յարուցանէր թէ աշխարհական թէ հոգեւորական ամեն դասակարգերի մէջ, որչափ Տօլստօյի այս փոքր զըրքոյվը - նիւթը չափազանց մօտ է մարդկային սրտին եւ կեանքին: Ուստի այս երկն եվրօպական բոլոր զիսուոր լեզուներով թարգմանվեցաւ (Գերմաներէն երկու անգամ):

Բոլորովին սխալվում են որոնք կարծումեն թէ այս զըրքոյկի մէջ Տօլստօյն մարդկութեան ոչնչանայն է բարոզում: Նա պարզապէս ասումէ, որ աւռուստրեան ձեւը հնացելի պէճֆե ռոտոզել իսկ վերջաբանի մէջ նա բացատրումէ անհրաժեշտ ժուժկալութեան պահանջը միայն իբրեւ կատարելատիպ (իդէալ), իբրեւ բարձրագոյն նպատակ, որին թէպէտ եւ ամենքը պարտաւոր են ձգտել, բայց իւրաքանչիւրն իր կարողութեան չափ, Յիսուսի խօսքին համաձայն. թէ «ոչ ամենքեան բովանդակեն զայս, այլ որոց տուեալ է»: Սօնատի մէջ նա խստութեամբ եւ դառնապէս հարուածումէ ամուսնութեամբ բօջարկված անդադար անառակութիւնը: Սօնատի մէջ նա նկարագրումէ թշուառութիւնների, խարէութիւնների, տանջանքների, անգութ ատելութեան եւ ամուսնութեան սովորական հետեւանք կազմող անխուսափելի կրկնակի անառակութիւնների անվերջ մի շարք: Եւ այս շատ լաւ յաջողած է Տօլստօյին, որովհետեւ նա խորին կերպով ճանաչումէ մարդկային սիրտը:

Կրէյցերեան Սօնատը Թարգմանել շատ հեշտ չէր: որովհետեւ Տօլստօյի ոճը բոլորովին առանձին, յատուկ, անթարգմանելի ձեւեր եւ դարձուածներ ունի: Ռուսերէն կարդացողը զիտէ, որ նա իր սոջտօ (այն որ), սովօ չէվօ (նորա-որի), սոմու չէմու (նորան որին), պօտօմու պօչէմու (նորա համար, որի համար), տէմ չէմ (նորանով որով) եւ այլն, այնպիսի հրաշալի ոճեր է զոյացնում, որոնք անթարգմանելի են: Կան տողեր, որտեղ երեք անգամ գործէածված չտօ (П. D) իւրաքանչիւր տողում եւ հրաշալի մի դարձուած կազմելով բացատրումէ իմաստը: Սա տօլստօյաբանութիւն է: Միեւնոյն ժամանակ անյաղթելի ոյժ ունի նորա ոճը, որ ակամայ տիրապետումէ եւ իր խոր ազդեցութեան տակ է ձգում մարդուն: Ես աշխատեցի հասկանալի, մաքուր եւ կանոնաւոր լեզուով Թարգմանել առանց հեռանալու բնագրի շարադասութենից: Գրքոյկիս հետաքրքիր բովանդակութիւնը զուցէ մի նշանաւոր ծառայութիւն մատուցանէր նորանով եւս, որ Թուրքարնակ Հայ ընթերցողները սիրէին ընտելանալ Հայկական արեւելեան լեզուին եւ գրականութեան:

Գրքոյկիս տպագրութեան ծախսը շնորհապարտ յօժարութեամբ եւ բարեխրութեամբ յանձն առաւ վճարել Թէոդոսիացի Հայաղն երիտասարդ պատուական Պ. Ալէքսանդր Ալթունչին, մանաւանդ որ վաճառման բոլոր արդիւնքը պիտի գործադրվի յօգուտ Կիլիկիայի երկսեռ Հայ վարժարանների, «Հայոց Միացեալ ընկերութեան» խորհրդի տնօրէնութեամբ:

Ղրիմի Ս. Խաչի վանք
1892, Նոյեմբեր 12:
ԽՈՐԷՆ ԾԱՅՐ. ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ

ԿՐԷՅՑԵՐԵԱՆ ՍՕՆԱՏ



Ա.

Իսկ ես ձեզ կատեմ. ով կնոջ կնայէ
նորան ցանկանալու համար, նա արդէն
ենութիւն արեց իր արտի մէջ նորա հետ:
(Մատթ . Ե. 28):

Վազօն ներս ու դուրս էին անում մերձաւոր
տեղեր գնացողները, իսկ երեքը գնումէին ինձ պէս
կառախմբի առաջին կայարանից. տգեղ եւ հասակն
առած ծիօզ մի տիկին, մանչված դէմքով, կէս արա-
կան վերարկուով եւ փոքրիկ գլխարկով — նորա ծա-
նօթ զրուցասէր քառասնամեայ մի պարոն կոկիկ
նոր իրեղէններով, — եւ դարձեալ մենակ նստած,
կարճահասակ, չափազանց ջղային, միջին տարիքով
մի մարդ, որի անորոշ գոյնով փայլուն աչքերը զար-
մանալի կերպով դէպի իրան էին քարշում եւ արագ
արագ մի առարկայից միւսն էին շրջում: Այս պա-
րոնը բոլոր ժամանակ ճանապարհորդներից ոչ ոքի
հետ չէր ծանօթանում, կարծես թէ ջանք էր անում
խուսափել: Դրացիների նորան խօսք ուղղելիս, նա
կարճ եւ կտրուկ պատասխան էր տալիս եւ սկսում էր
յառած աչքով լուսամտից նայիլ: Սակայն ինձ թու-
ում էր թէ նա մենակութենից ճանձրանում էր:

Նա տեսաւ, որ ես այդ հասկանումեմ, եւ երբ մեր աչքերն յաճախ միմեանց էին պատահում, որովհետեւ մենք նստած էինք միմեանց դէմ, նա երես էր դարձնում եւ ինձ հետ խօսելուց խուսափումէր :

Երբ երեկոյեան դէմ մեծ կայարանի մօտ մեր կառախումբը կանգ առաւ, կոկիկ իրեղինների տէրը, փաստաբանը, ինչպէս վերջն իմացայ, իր Հարեւան կնոջ հետ կայարան իջան թէյ խմելու : Այդ միջոցին վագօն մտան քանի մի նոր անձներ եւ նոցա թուում բարձր, ածիլված, կնճիռներով մի ծերունի, անտարակոյս մի վաճառական էր, լայն մուշտակ եւ բարձր գլխարկ հագած : Վաճառականը նստաւ տիկնոջ եւ փաստաբանի հանդէպ եւ նոյն ժամայն սկսեց խօսակցել մի երիտասարդի հետ, որ առեւտրական գործակատար պիտի լինէր եւ որը նոյնպէս այն կայարանում վագօն մտաւ : Սկզբից գործակատարն ասաց վաճառականին թէ տեղը բռնված է, իսկ ծերունին պատասխանեց թէ նա մինչեւ առաջիկայ կայարանը միայն գնալու է : Եւ սորանով նոցա խօսակցութիւնն սկսվեցաւ :

Ես կողմնակի էի նստած, եւ որովհետեւ կառախումբը կանգնած էր այն բողբոջներ, երբ ոչ ոք չէր խօսում, նոցա խօսակցութիւնն ականջիս էր հասնում մասամբ : Նոքա խօսում էին նախ գների եւ առեւտրի վերա : Իրանց մի ծանօթի անուն տուին եւ սկսեցին Նիժեգորոզի տօնավաճառի մասին խօսել : Գործակատարը կամենում էր պարծենալ մինի քէֆերով տօնավաճառում, բայց ծերունին միջոց չըտուեց նորան եւ ընդմիջելով ինքն սկսեց պատմել

Կուճակինում իր մասնակցութեամբ եղած քէֆերի մասին : Նա ըստ երեւոյթին պարծենում էր իր մասնակցութեամբ եւ ենթադրելով, որ այս պատմելով ամենեւին չէ խանգարում իր ներկայ ծանրաբարոյ կերպարանն ու ձեւերը, հպարտ հպարտ պատմում էր թէ ինչպէս նոյն ծանօթի հետ, միանգամ արբած, Կուճակինում այնպիսի մի բան էին արել, որը հարկ եղաւ ականջին պատմելու, առ որ գործարձակատարը բարձրաձայն ծիծաղեց, իր երկու դեղին ատամները ցոյց տալով : Սօսակցութիւնն հետաքրքիր չէր ինձ համար, եւ ես վագօնից դուրս եկայ փոքր ինչ շրջելու : Իրան մէջ հանգիպեցան փաստաբանը տիկնոջ հետ :

— Չէք համար, ասաց ինձ փաստաբանը, այս բոլորիս երկրորդ զանգակ կխփեն :

Արդարեւ հաղիւ հասց մինչեւ վագօնի վերջը, եւ արդէն զանգակը լսվեցաւ : Երբ վերադարձայ, փաստաբանը տիկնոջ հետ տաք տաք խօսումէին : Վաճառականը լուռ նստած էր նոցա դէմ :

— Յետոյ նա ուղղակի յայտնեց իր մարդուն, ժպտելով ասաց փաստաբանը, երբ ես նորա մօտով էի անցնում, թէ նա չէ կարող, եւ չէ կամենում ապրիլ նորա հետ, որովհետեւ . . .

Եւ նա սկսեց պատմել, բայց ես չսեցի, որովհետեւ անցնում էին կառախմբի վերակացուն եւ մի նոր ճանապարհորդ : Երբ լուրթիւն տիրեց եւ ես նորից լսեցի փաստաբանի ձայնը, խօսակցութիւնը մասնաւոր դէպքից ընդհանուր դիտողութիւնների էր փոխվել :

— Այնուհետեւ առաջանումէ անհամաձայնու-

Թիւն, դրամական դժուարութիւններ, վէճեր, եւ ամուսինները բաժանվում են, ասաց փաստաբանը: Հին ժամանակ այս չկար: Այնպէս չէ՞, դարձաւ զրուցաւէր փաստաբանը ծերունի վաճառականին, ցանկանալով նորա մասնակցութիւնն այս խօսակցութեան: Բայց այդ միջոցին գնացքը շարունակեց իր ընթացքը եւ ծերունին առանց պատասխանելու, զըլխարկը հանեց, երեք անգամ երեսը խաշակնքեց եւ մի բան չչնչեց: Երբ վերջացրեց, պինդ ծածկեց իր զլխարկը եւ ասաց. առաջ եւս կար, պարոն, բայց քիչ էր: Այժմեան ժամանակին նայելով, չէ կարելի, որ այս չլինի: Ծառ շատ են լուսաւորվել:

Փաստաբանը մի ինչ որ պատասխանեց ծերուկին, բայց գնացքն առաւել արագ ընթանալով, արդէն ոստոստումէր եւ չէի կարողանում լսել, բայց հետաքրքրաշարժ էր իմանալ թէ ինչ էր ասում ծերունին, եւ ես աւելի մօտ նստայ: Իմ դրացիս, ջըղային պարոնը, նոյնպէս հետաքրքրվեցաւ եւ առանց տեղից շարժվելու լսումէր:

— Հապա ի՞նչի համար վատ է լուսաւորութիւնը, հազիւ ժպտելով ասաց տիկինը: Միթէ առաւել լաւ է այնպէս ամուսնանալ, ինչպէս հին ժամանակ, երբ նշանված հարսն ու փեսան եւ ոչ իսկ տեսնում էին միմեանց, շարունակեց տիկինը, շատ կանանց յատուկ սովորութեամբ պատասխանելով ոչ թէ իր խօսակցի խօսքերին, այլ այն խօսքերին որոնք ենթադրումէր թէ նա պիտի ասէր:

Զգիտէին, սիրում են արդեօ՞ք, կարող են արդեօ՞ք սիրել, բայց պսակվումէին ում հետ պատահումէր, եւ ամբողջ կեանքում տանջվում էին: Ուրեմն

ձեր խօսքով այս աւելի լաւ է, ասաց տիկինը, դարձնելով խօսքը ինձ եւ փաստաբանին եւ ամենից սակաւ ծերունուն, որի հետ խօսումէր:

— Արդէն չափազանց լուսաւորվել են, կրկնեց վաճառականը, արհամարհական հայեացք ձգելով տիկնոջը եւ անպատասխան թողնելով նորա հարցը:

— Յանկալի կը լինէր իմանալ թէ ինչպէս էք բացատրում դուք լուսաւորութեան եւ ամուսնական անհամաձայնութեան կապը, քմծիծաղով ասաց փաստաբանը:

Վաճառականը կամենում էր մի բան ասել, բայց տիկինն ընդմիջեց նորան:

— Ոչ, այդ ժամանակն արդէն անցել է, ասաց տիկինը:

Բայց փաստաբանը կանգնեցրեց նորան:

— Ոչ. թոյլ տուէք նորան իր միտքը յայտնել:

— Որովհետեւ երկիւղ չկայ, ասաց ծերունին:

— Հապա ի՞նչ անելու է, երբ ամուսնացնում են այնպիսիներին, որոնք միմեանց չեն սիրում: Ոչ ապաքէն միայն կենդանիներին կարելի է զուգաւորել, տիրոջ կամքի համաձայն, իսկ մարդիկ իրանց հակումն, յարումն ունին, շտապումէր խօսել տիկինը, նայելով փաստաբանին եւ ինձ, նաեւ գործակատարին, որը իր տեղից վերկացած եւ նստարանի մէջքին յենվելով, ժպտելով լսումէր խօսակցութիւնը:

— Զուր էք այդպէս ասում, տիկին, ասաց ծերուկը:

Կենդանին անասունէ, իսկ մարդուն տուած է օրէնք:

— Հապա ուրեմն ի՞նչպէս ապրելու է մարդու հետ, երբ չկայ սէր, ասաց տիկինը քաջալերվելով ընդհանուր ուշադրութենից եւ համակրութենից :

— Առաջ այդ չէին քննում, ազդեցիկ ձայնով ասաց ծերուկը : Միայն այժմ այդ սովորութիւն մտաւ ինչպէս ինչ, կինն ասումէ . « Ես քեզ կ'իթոզնեմ » : Տեսէք ռամիկների մէջ եւս մտել է այս նորածեղութիւնը . առ քեզ, ասումէ, քո եղած չեղածը, իսկ ես կերթամ սիրականիս հետ կապրիմ » : « Հապա արի հասկացրու : Կնոջ մէջ, առաջին գործը, երկիւղ պիտի լինի :

Գործակատարը նայեց փաստաբանին, տիկնոջ եւ ինձ բռնելով իր ժպիտը եւ պատրաստ լինելով եւ ծաղրելու եւ հաւանելու վաճառականի խօսքը, նայելով թէ ինչպէս կընդունավի : -

— Ի՞նչ երկիւղ ասաց տիկինը :

— Ահա ի՞նչ երկիւղ . կինը պիտի վախենայ իր մարդուց : Ահա ի՞նչ երկիւղ :

— Պարոն, այդ ժամանակն անցաւ :

— Ոչ, տիկին, այդ ժամանակ չէ կարող անցնել : Ինչպէս որ ստեղծվեցաւ կինը — Եւան մարդու կողքից, այնպէս եւ պիտի մնայ մինչեւ աշխարհի կատարածը, ասաց ծերուկը, այնպէս խիստ եւ յաղթանակաբար թափ տալով գլուխը, որ գործակատարը նոյն ժամայն վճռեց, թէ յաղթութիւնը վաճառականին է եւ բարձր ձայնով ծիծաղեց :

— Դուք — տղամարդիկներդ էք այդպէս դատում, ասաց տիկինը, չկամենալով յաղթվել եւ մեզ նայելով, ինքներդ ձեզ ազատութիւն էք տուել, իսկ կնոջը կամենումէք վերնատանը պահել : Եւ ձեզ ամեն բան թոյլատրումէք :

— Այր մարդու գործն ուրիշ է :

— Ուրեմն այր մարդուն, ձեր կարծիքով, ամեն բան թոյլատրելի է :

— Թոյլտուութիւն ոչ ոքից չկայ, բայց միայն թէ այր մարդուց տան մէջ ոչ ինչ աւելանալու չէ : Իսկ կինը դիւրաբեկ անօթ է, շարունակումէր հակացնել վաճառականը : Վաճառականի յորդորական ձայնը կարծես յաղթում էր ունկնդիրներին, եւ տիկինն անգամ ճնշված էր զգում իրան, բայց դեռ եւս անձնատուր չէր լինում :

— Այո, բայց կարծումեմ թէ դուք պիտի համաձայնէք, որ կինը մարդ է եւ ունի զգացմունք, ինչպէս այր մարդը : Հապա ի՞նչ պիտի անէ նա, եթէ չէ սիրում իր այր մարդուն :

— Չէ՛ սիրում, խստիւ կրկնեց վաճառականը, յօնքերը կնձռած : Փոյթ չէ, կսիրէ : Այս անսպասելի փաստն աւելի հաւանեց գործակատարը եւ հաւանութեան մի ձայն արձակեց :

— Ոչ, չի սիրի, ասաց տիկինը, եթէ չկայ սէր : Ոչ ապաքէն բռնի սիրել տալ անկարելի է :

— Հապա, երբ կինը դաւաճանում է իր ամուսնին, այն ժամանակ ի՞նչ անելու է, ասաց փաստաբանը :

— Այդ պիտի չլինի, ասաց ծերունին, դորան հակել պէտք է :

— Իսկ եթէ պատահումէ, այն ժամանակ ի՞նչ անելու է, չէ որ պատահումէ :

— Ուրիշներին եթէ պատահումէ, մեզ չէ պատահում, ասաց ծերուկը : Իսկ եթէ մի յիմար մարդ չէ կարող կառավարել իր կնոջ, այնպիսուն տեղն է :

Այնու ամենայնիւ խայտառակութիւն անելու չէ : Սիրումես թէ չես սիրում, բայց տունը պէտք չէ քանդել : Ամեն մին կարող է իր կնոջ սանձել : Սորա համար տրված է նորան իշխանութիւն : Միայն յիմարը չէ կարող :

Ամենքը լուեցին : Գործակատարը շարժվեցաւ , գարձեալ առաջ եկաւ եւ չկամենալով ուրիշներից յետ մնալ , ժպտելով սկսեց .

— Այո , ահա մեր տղային նոյնպէս մի խայտառակութիւն պատահեց , քննել չափազանց դժուարէ : Նորան եւս վիճակվեցաւ այնպիսի կին , որ անուղղայ էր : Եւ սկսեց իր գործը : Իսկ տղան համեստ էր եւ զարգացած : Նախ հաշուապահի հետ սկսեց : Տղան համոզումէր առանց ազմուկի : Կինը չզաղարեց : Ամեն տեսակ գարշութիւն էր անում : Սկսեց նորանից փողը դողանալ : Տղան նորան ծեծեց եւս : Ինչ արդիւնք . կինն աւելի վատթարացաւ : Չմկրտվածի , հրեայի հետ , ներեցէք , սկսեց խաղեր խաղալ : Հապա տղան ինչ պիտի անէր : Չգեց նորան բոլորովին : Այնպէս եւ ապրումէ ամուրի : Իսկ կինը թափառումէ :

— Որովհետեւ նա յիմար է , ասաց ծերուկը : Եթէ նա առաջին սկզբից նորան թոյլ չտար , այլ կարգին դասէր , կինը ի հարկէ կմնար : Պէտք չէ սկզբից արձակ թողնել կնոջը : Մի՛ հաւատա ձիուն դաշտի մէջ , իսկ կնոջը տան մէջ :

Այս միջոցին անցաւ կառախմբի վերակացուն տոմսակներ հարցնելու մինչեւ տոաջիկայ կայարանը : Ծերունին իր տոմսակը տուեց :

— Այո , սկզբից պէտք է զսպել իրական սեռը ,

ապա թէ ոչ , ամեն բան կփչանայ :

— Իսկ ձեզ կունալինում սիրուն կանանց հետ քէֆ անել կարելի է , ժպտելով ասաց փաստաբանը :

— Դա ուրիշ խնդիր է , ասաց խստութեամբ ծերուկը : Թողութիւն արէք , աւելացրեց նա վերկենալով : Փաթաթվեցաւ , բարձրացրեց գլխարկը եւ եւ իր պայուսակն առած դուրս գնաց :

Բ.

Ծերուկը դուրս գնաց թէ չէ , սկսվեցաւ քանի մի անձների ընդհանուր խօսակցութիւն :

— Հին օրէնքի մարդ է ծերուկն , ասաց գործակատարը :

— Ահա կենդանի Դօմօտրօյ , ասաց տիկինը : Ինչ վայրենի գաղափար ունի կնոջ եւ ամուսնութեան վերա :

— Այո , մենք հետու եւք եւրօպական հայեացքից ամուսնութեան մասին , ասաց փաստաբանը : Նախ կնոջ իրաւունքներ յետոյ քաղաքական ամուսնութիւն , այնուհետեւ պսակի լուծումն , որ դու եւս չլուծված խնդիր է :

— Բայց գլխաւորն այն է , եւ այս չեն հասկանում այսպիսի մարդիկ , ասաց տիկինը , որ առանց սէրի ամուսնութիւնն ամուսնութիւն չէ , որ միայն սէր է սրբագործում պսակը եւ թէ ճշմարիտ պսակն միայն այն է , որ սրբագործումէ սէրը :

Գործակատարը լսումէր եւ ժպտում , ցանկանալով միտք պահել որքան հնար էր աւելի այս խելացի խօսակցութիւններից իր գործածութեան համար :

— Այդ ո՞ր սէրն է սրբագործում պսակը, յանկարծ ասաց ջղային պարոնի ձայնը, որն աննկատելի կերպով մօտեցել էր մեզ: Նա կանգնած էր, ձեռները նստարանի մէջքի վերա դրած եւ երեւումէր շատ յուզված. նորա դէմքը կարմիր էր, ճակատի երակն ուռել էր եւ այտի մկանունքը գողգողումէր: Այդ ի՞նչ սէրն է որ սրբագործում է պսակը, կրկնեց նա:

— Ի՞նչպէս թէ ի՞նչ սէր, ասաց տիկինը: Ամուսինների սովորական սէրը:

— Այդ ի՞նչպէս կարող է սովորական սէրը սրբագործել պսակը, շարունակեց ջղային պարոնը: Նա յուզվում էր, կարծես բարկանումէր եւ կամենումէր տիկնոջն անհաճոյ բան ասել: Տիկինը զգումէր այս եւ նոյնպէս յուզվում:

— Ի՞նչպէս: Շատ պարզ, ասաց տիկինը:

Ջղային պարոնը նոյն ժամայն վերադարձրեց այս խօսքը:

— Ոչ, պարզ չէ:

— Նա ասում է, միջամտեց փաստաբանը, մատնանիչ անելով տիկնոջը, թէ ամուսնութիւնը պիտի առաջանայ նախ հակումից, սէրից, ինչպէս կամենում էք անուանեցէք, եւ եթէ կայ այդպիսի մի բան առ ձեռն պատրաստ, այդ դէպքում միայն պսակը կարող է լինել այսպէս ասած մի նուիրական գործ: Եւ յետոյ այն ամեն պսակը, որի հիմքը բնական հակումն կամ սէր չէ, բարոյապէս ոչինչ պարտադիր պայման չունի: Այսպէս եմ հասկանում արդեօք, դարձաւ նա դէպ ի տիկինը:

Տիկինն իր գլխի շարժմամբ հաւանութիւն ցոյց

տուեց իր մտքի բացատրութեանը:

— Այնուհետեւ . . . կամենումէր իր խօսքը շարունակել փաստաբանը: Բայց ջղային պարոնը երեւումէր, որ ջանք էր անում իրան զսպելու եւ թոյլ չտալով փաստաբանին իր խօսքն աւարտել, սկսեց:

— Այո, բայց ի՞նչ պէտք է հասկանաք սէր ասելով, որով միայն սրբագործվում է պսակը:

— Իւրաքանչիւրը գիտէ թէ ի՞նչ է սէրը, ասաց տիկինը:

— Բայց անա ես չգիտեմ եւ ցանկանում եմ իմանալ թէ ի՞նչպէս էք որոշում:

— Ի՞նչպէս: Շատ պարզ, ասաց տիկինը, բայց սկսեց մտածել: Սէ՛րը: Սէ՛րը բացարձակ նախապատուութիւն տալ նէ մի մարդուն կամ մի կնոջ արիչներէց աւելի, ասաց տիկինը:

— Նախապատուութիւն ո՞րքան ժամանակով: Մի ամսով, երկու օրով, կէս ժամով, առանձին մի շարախնդրութեամբ ասաց պարոնը:

— Ոչ, ներեցէք, երեւում է դուք այն չէք ասում:

— Ոչ, իմ ասածս իսկապէս այն է, մի մարդուն կամ մի կնոջ նախապատուութիւն տայն ուրիշներէց աւելի, բայց միայն ես հարցնում եմ թէ այդ նախապատուութիւնն ո՞րքան ժամանակ պիտի տեսէ:

— Ո՞րքան ժամանակ: Երկար ժամանակ, ամբողջ կեանքն երբեմն:

— Այդ միայն սիրապատումների (բոմանների) մէջ է: Իսկ կեանքի մէջ ոչ երբէք: Կեանքի մէջ այդ միւսի նախապատուութիւնը միւսից աւելի վնասում է տարիներով, աւելի յաճախ ամիսներով, կամ թէ շաբաթներով, օրերով, ժամերով:

7
2
1017
39



— Ահ, ի՞նչ էք ասում: Ոչ: Ոչ, ներեցէք, մի ձայնով ասացինք մենք երեքս: Մինչեւ անգամ գործակատարը չհաւանօղ մի ձայն հանեց:

— Այո, գիտեմ, մեզանից աւելի բարձր էր խօսում նա, զուք ասումէք այն, ինչ որ կարծւումէ թէ կայ, իսկ ես ասումեմ այն, ինչ որ իսկապէս կայ: Իւրաքանչիւր մարդ տածումէ զէպի ամեն մի սիրուն կին եւ ամենից նուազ զէպի իր կինն այն, ինչ որ զուք սէր էք անուանում: Սորա մասին է ասում առածն եւս, եւ չէ ստում թէ «ուրիշի կինը միշտ աւելի հաճելի է իր սեփականից»:

— Ոչ, զուք սարսափելի բաներ էք ասում: Բայց չէ՞ որ կայ մարդիկների մէջ այն զգացումն, որը սէր է կոչւում եւ որը տեւումէ ոչ թէ ամիսներ եւ տարիներ, այլ ամբողջ մի կեանք:

— Ոչ, չկայ: Եթէ ենթադրենք եւս թէ Մենելայոս նախապատումէ Հեղինէին ամբողջ կեանքում, Հեղինէն արդէն նախապատուեց Պարիսին, եւ միշտ այնպէս է եղել եւ է աշխարհիս մէջ: Եւ չէ կարող այլապէս լինել, ինչպէս որ անկարելի է, որ երկու սրտեռի հատիկներ միմեանց կողքին մնային, երբ գնումէ բարձրած սայլը: Բացի սորանից այս տեղ անհաւատարմութիւնը չէ միայն, այլ անշուշտ եւ Հեղինէի յագենալն եւս կայ Մենելայոսից կամ ընդհակառակն: Բոլոր տարբերութիւնն այն է միայն, որ մին շուտ է յագենում, միւսն աւելի ուշ: Միայն յիմար սիրապատումների մէջ են գրում թէ նոքա միմեանց սիրում են ամբողջ կեանքում: Եւ միայն մանուկներ կարող են սորան հաւատալ: Ամբողջ կեանքում սիրել մի մարդուն կամ մի կնոջ միեւ-

նոյն է ասել թէ մի մոմ կարող է ամբողջ կեանքում վառ մնալ:

— Բայց զուք միշտ մարմնական սէրի մասին էք խօսում: Մի՞թէ չէք ենթադրում զաղափարների միութեան, հոգեւոր կապակցութեան վերա հիմնըված սէր:

— Ի՞նչի չենթադրել, բայց այդ զէպքում հարկ չկայ միասին քնելու (ներեցէք անյարմար ոճիս): Ապա թէ ոչ, գաղափարների միութիւնը չէ պատահում պառաւնների, այլ միշտ սիրունների եւ երիտասարդների մէջ, ասաց նա եւ անախորժ ձեւով ծիծաղեց: Այո, ես պնդումեմ, որ սէրը, իսկական սէրը չէ սրբագործում պսակը, ինչպէս սովոր ենք այս հասկանալ, ամբողջ կեանքի համար, այլ ընդհակառակն նա քանդումէ պսակը:

— Բայց, ներեցէք, ասաց փաստաբանը, փաստը հակասումէ ձեր ասածին: Մենք տեսնումենք, որ ամուսնութիւնների կան, որ բոլոր մարդկութիւնը կամ նորա մեծամասնութիւնը ապրումէ ամուսնական կեանքով, եւ շատերը ազնուաբար են վարում երկարատեւ ամուսնական կեանք:

Ջղային պարոնը չարախնդրութեամբ ծիծաղեց:

— Ուրեմն ի՞նչ էք ասում: Դուք ասումէք թէ ամուսնութիւնները սէրի վերա են հիմնված: Եւ երբ ես կասկած եմ յայտնում սէրի գոյութեան մասին, բացի զգայական սէրից, զուք ինձ ապացուցանումէք սէրի գոյութիւնը ամուսնութիւններով: Բայց նոյն իսկ ամուսնութիւնը մեր ժամանակում խաբէութիւն եւ բռնաբարութիւն է:

— Ոչ, ներեցէք, ասաց փաստաբանը, ես միայն

ասումեմ թէ եղել են եւ կան ամուսնութիւններ :

— Բայց ի՞նչպէս եւ ի՞նչի կան : Նոքա կային եւ կան այն մարդիկներ ի համար , որոնք ամուսնութիւն համարում են մի խորհրդաւոր բան , խորհուրդ , որը պարտաւորեցնում է Աստուծու առաջ : Նոցա համար կան ամուսնութիւններ , իսկ մեզ համար չկան , եւ կայ միայն կեղծաւորութիւն եւ բռնաբարութիւն : Եւ ահա մենք այդ զգումները եւ դժբանից ազատվելու համար , ազատ սէր ենք քարոզում : Իրապէս ազատ սէր չարողը ոչ այլ ինչ է , եթէ ոչ հրաւեր դէպի յետ դառնալն , դէպի սեռեր խառնակելն — ներեցէք ինձ , ասաց տիկնոջը — դէպի խառնակ մեղքը : Մաշվեղէ հիւն հիւմք , կարկաւոր եւ նոր հիւմք գտնեղ , եւ ոչ թէ անառակութիւն քարոզել :

Նա այնպէս էր տաքանում , որ ամենքը լռեցին եւ նայում էին նորան :

— Ահա այս միջավայրի դրութիւնը սարսափելի է : Մարդիկ զգում են , որ կարելի չէ խառնակ մեղքը թողատրել , պէտք է որեւիցէ կերպով սեռական յարաբերութիւններ որոշել , բայց սորա համար հիմքը չկայ բացի հին հիմքից , որին ոչ ոք չէ հաւատում : Մարդիկ ամուսնանում են , հին սովորութեամբ , չեն հաւատում իրանց արածին , եւ առաջ է գալիս կամ խաբէութիւն , կամ բռնաբարութիւն : Երբ խաբէութիւն է , առաւել հեշտ տանվում : Այլը եւ կինը միայն խարում են մարդիկներին , թէ նոքա միամուսնութեամբ են ապրում , մինչդեռ ապրում են բազմակուսութեամբ եւ բազմայրութեամբ : Սա վատ է , բայց թողնենք : Իսկ երբ ինչպէս որ ամենից յաճախ է

լինում , այլը եւ կինը պարտաւորութիւն են դրել իրանց վերա միասին ապրելու ամբողջ կեանքում եւ իրանք չզգիտեն ինչի , ինչ բանի համար , եւ երկրորդ ամսից յետոյ արդէն ցանկանում են բաժանվել եւ այնու ամենայնիւ միասին են ապրում , այն ժամանակ այս դառնում է այն զարհուրելի դժոգքը , որի պատճառով եւ արբեւում են , եւ ատրճանակին են դիմում եւ մեռցնում եւ թունաւորում իրանց եւ միմեանց : Ամենքը լռեցին : Մի ընդհանուր տաղտկութիւն էր զգացվում :

— Այո , տաղտկելի միջնադէպեր են պատահում ամուսնական կեանքի մէջ : Ահա , օրինակ , Պօզդնիչէվի գործը , ասաց փաստաբանը ցանկանալով դադարեցնել անվայել տաք խօսակցութիւնը :

Ինչպէս նախանձութենից սպաննեց իր կնոջը , կարգացել էք արդե՞օք :

Տիկինն ասաց , որ չէ կարգացել : Զղային պարտնը ոչինչ չասաց եւ գունաթափվեցաւ :

— Դուք , տեսնում եմ , իմացաք իմ ով լինելու . — յանկարծ ասաց նա :

— Ոչ , պատիւ չունիմ :

— Մեծ պատիւ չէ : Ես Պօզդնիչէվն եմ :

Լուրթիւն տիրեց : Նա կարմրեց , կրկին դեղնեց :

— Դէ՛հ , միեւնոյն է , ասաց նա : Բայց եւ այնպէս ներեցէք : Ես ձեզ նեղութիւն չեմ տայ : Եւ գնաց իր տեղը :

Գ.

Ես եւս վերադարձայ իմ տեղս : Պարտնը տիկնոջ հետ միմեանց ականջում շշնջում էին : Ես նստած

էի Պօղոսիչէվի կողքին եւ լուս էի : Ես կամենում էի խօսակցել նորա հետ , բայց չգիտէի ինչից սկսեմ , եւ այսպէս անցուցինք մի ժամ մինչեւ կայարանը : Հետեւեալ կայարանում պարոնը տիկնոջ հետ եւ գործակատարն եւս դուրս գնացին , եւ մենք միայնակ մնացինք ամբողջ վաղօճում Պօղոսիչէվի հետ :

— Խօսում են ահաւասիկ : Եւ սուտ են խօսում կամ չեն հասկանում :

— Այսինքն այդ ի՞նչ բանի մասին էք ասում :

— Դարձեալ միեւնոյն բանի մասին :

Նա արմուկները դրեց իր ծնկերի վերա եւ ձեռներով սեղմեց աչքերի եւ ականջի մէջ տեղի իրանունքը :

— Սէ՛ր , ամուսնութի՛ւն , ընտանի՛ք : բոլորը սուտ է , սուտ է , սուտ է . . .

Նա վերկացաւ , լսպտերի վարադոյրը քարչեց եւ յենվելով բարձի վերա պառկեց եւ աչքերը խփեց : Այսպէս պառկած մնաց մի րոպէ :

— Ձեզ անհաճոյ չէ՞ ինձ հետ նստել , իմ ով լի՛նելս իմանալով :

— Ոչ , ոչ :

— Դուք չէ՞ք կամենում քնել :

— Ամենեւին չեմ կամենում :

— Ուրեմն կամենումէ՞ք — ես ձեզ իմ կեանքս կպատմեմ :

Այս միջոցում անցաւ կառախմբի վերակացուն : Նա նայում էր վերակացուն զայրացած աչքերով եւ այն ժամանակ միայն սկսեց , երբ նա գնաց : Իսկ յետոյ պատմելիս նա այլեւս ոչ մի անդամ կանգ չառաւ , մինչեւ անգամ նոր մտնող ճանապարհորդ-

ները եւս չէին ընդհատում նորան : Պատմելու միջոցին նորա դէմքը քանի մի անգամ բոլորովին փոփոխվում էր , այնպէս որ նախկին դէմքին ամենեւեւ չէր նմանում , թէ աչքերը , թէ բերանը , թէ ընչացքը , նաեւ մօրուքը իսպառ ուրիշ բան էր լինում , գեղեցիկ , սրտաշարժ , նոր դէմք դառնալով : Եւ այս փոփոխութիւնները գոյանում էին կիսալոյսի մէջ յանկարծ , եւ հինգ րոպէ մի դէմք էր լինում , եւ ամենեւին կարելի չէր նախկին դէմքը տեսնել , իսկ յետոյ անյայտ կերպով ուրիշ էր դառնում , եւ նոյնպէս անհնարին էր լինում նորան փոխվել :

Դ.

Ուրեմն ես կպատմեմ ձեզ իմ կեանքս եւ բոլոր իմ զարհուրելի պատմութիւնս : Չարհուրելի , արդարեւ զարհուրելի : Ամբողջ պատմութիւնն աւելի զարհուրելի է քան թէ նորա վախճանը :

Նա լուեց , սրբեց ձեռներով ծածկված երեսը եւ սկսեց .

Եթէ պատմեմ , ուրեմն պատմելու է բոլորն սկզբից , պէտք է ասեմ թէ ի՛նչպէս եւ ինչի ես ամուսնացայ եւ ինչ էի ամուսնութենից առաջ : Նախ կասեմ ձեզ թէ ես ով եմ : Ես հարուստ , դաշտաբնակ ազնուականի — նախկին մի ազնուապետի — որդի եմ , եւ համալսարանի աշակերտ կանդիդատ , իրաւաբան : Ամուսնացայ երեսնամեայ հատակա փոքր ինչ անցած , բայց ամուսնանալուս մասին ասելուց առաջ , պէտք է ասեմ թէ ինչպէս էի ապրում առաջագոյն եւ ինչպէս էի նայում ընտանեկան կեանքին :

Նախ քան ամուսնանալս ես ապրում էի, ինչպէս
 ապրում են մեր շրջանի բոլոր օրինաւոր կոչված
 մարդիկը այսինքն անառակութեամբ, եւ նոյնպէս,
 ինչպէս մեր շրջանի մարդիկների մեծագոյն մասը,
 անառակութեամբ ապրելով, համոզված էի, թէ մար-
 դիկների մէջ ես բացառիկ բարոյական մարդ եմ:
 Այս այսինքն այն, որ ես ինձ բարոյական էի համա-
 բուժում, առաջանումէր նորանից, որ մեր ընտանիքի
 մէջ չկար այն առանձին, մասնաջիտական ապակա-
 նութիւնն, որը սովորական էր կալվածատէրերի
 շրջանում, եւ թէ այս պատճառով, կրթված լինե-
 լով այնպիսի ընտանիքի մէջ, որտեղ ոչ հայրը ոչ
 մայրը չէին դաւաճանում միմեանց, ես մանուկ հա-
 սակիցս գուրգուրումէի ամենալսեմ եւ բանաստեղ-
 ծական ընտանեկան կեանքի իղձը: Իմ կինս պիտի
 լինէր կատարելութեան տիպ: Մեր փոխադարձ սէրը
 շատ վսեմ պիտի լինէր: Ես միշտ այսպէս էի մտա-
 ծում եւ բոլոր ժամանակ զովում էի ինձ այսպիսի
 վսեմ մտքերի համար: Եւ միեւնոյն ժամանակ մի
 տանն տարի մնացի հասակս առած, առանց ամուս-
 նանալ շտապելու եւ վարումէի իմ առած ծանրա-
 բարոյ, խոհեմ ամուրի կեանքը, որով ես պարծե-
 նում էի մինչեւ անգամ իմ հասակակիցների եւ ըն-
 կերակիցների առաջ, որոնք մատնուած էին զանա-
 զան մասնագիտական անառակութիւններին: Ես կա-
 նանց չէի հրապուրում, անբնական ճաշակներ չու-
 նէի, սորանից կեանքի գլխաւոր նպատակ չէի չի-
 նում, այլ անձնատուր էի լինում անառակութեանը
 վայելուչ, ընդհանրապէս ընդունված ձեւերով, եւ
 միամտաբար հաւատացած էի թէ բոլորովին բարո-

յական մարդ եմ: Այն կանայքը, որոնց հետ մտեր-
 մանում էի, իմ չէին, եւ նոցա մասին ես ամենե-
 ւին փոյթ չունէի բացի վայելչութենից, որ տալիս
 էին նոքա ինձ: Եւ այստեղ ինձ ոչինչ անձոռնի բան
 չէր երեւում: Ընդհակառակն ես այն հանգամանքն,
 որ սրտով չէի կապվում նոցա հետ, այլ դրամ էի
 վճարում նոցա, իսկապէս այս էի համարում իմ բա-
 րոյականութիւն: Ես խուսափում էի այն կանանցից
 որոնք երեխայի մայր դառնալով կամ սիրահարվե-
 լով ինձ, կարող էին կապել ինձ: Բայց գուցէ երե-
 խաներ եւս կային, գուցէ սիրահարութիւն եւս կար,
 իսկ ես այնպէս էի ձեւացնում, իբր թէ չկան . . .
 Եւ այսպէս ապրելով, ինձ բարոյական մարդ էի հա-
 մարում: Ես չէի հասկանում թէ անառակութիւնը
 որեւիցէ ֆիզիքականի մէջ չէ բովանդակվում, թէ
 ոչինչ ֆիզիքական անձոռնութիւն դեռ եւս անա-
 ռակութիւն չէ, այլ թէ ճշմարիտ անառակութիւնն
 այն է, երբ քեզ ազատ ես համարում բարոյական
 յարաբերութիւններից զէպի այն կինն, որի հետ ֆի-
 զիքական մերձաւորութիւն ունիս: Այդ ազատու-
 թիւնն ահա ես ինձ արժանաւորութիւն էի համա-
 բուժում: Յիշում եմ թէ ինչպէս տանջվում էի միան-
 դամ, չկարողանալով վճարել կնոջը, որն երեւի սի-
 բելով ինձ, անձնատուր եղաւ: Ես հանգստացայ
 միայն այն ժամանակ, երբ ուղարկեցի նորան դրամը,
 սորանով ցոյց տալով թէ բարոյապէս ես ոչնչով
 կապված չեմ համարում ինձ նորա հետ:

— Դուք գլուխդ մի՛ շարժէք իբր թէ համաձայն
 էք ինձ հետ, յանկարծ գոչեց նա վերաս: Ոչ ապա-
 քէն այս գործն ես լաւ գիտեմ: Դուք ամենքդ,

դուք եւս, եթէ սակաւագիւտ բացառութիւն չէք կազմում, միւսնոյն հայեացքներ ունիք, ինչ որ ես ունէի: Եթէ դուք համաձայն էք, այդ այժմ միայն, իսկ առաջ դուք այդպէս չէիք մտածում: Ես եւս չէի մտածում, եւ թէ ինձ ասէին այն, ինչ որ այժմ ես ձեզ եմ ասում, չէր լինի այն, ինչ որ ինձ եղաւ: — Բայց մի եւ նոյն է, ներեցէք ինձ շարունակեց, սակայն բանն այն է, որ սա սարսափելի, սարսափելի դործ է: Մոլութեան եւ ապականութեան այն անգունդը, որի մէջ ապրումենք կանանց իսկական խնդրի վերաբերմամբ . . .

— Այսինքն դուք ի՞նչ էք հասկանում կանանց իսկական խնդիր ասելով:

— Խնդիրն այն է թէ ի՞նչ է այդ մարդիկներին դուրս առանձնապէս կազմակերպված էակը եւ թէ նա ինքն եւ այդ մարդիկ ի՞նչպէս պիտի նայեն նոյն էակին:

Ե.

Այո, ես տամ տարի ապրումէի շատ անձոնի ապականութեան մէջ մաքուր, վսեմ սէր փափաքելով եւ նոյն իսկ այդ սէրի անուշով: Այո, ես կամենում եմ պատմել թէ ինչպէս սպանեցի իմ կնոջս եւ այս պատմելու համար, պիտի պատմեմ թէ ես ինչպէս ապականվեցայ, անառակացայ: Ես նորան սպանեցի նախ քան իրան ճանաչելս, ես սպանեցի կնոջն առաջին անգամ, երբ չփրկելով նորան մօտեցայ, եւ այն ժամանակ արդէն սպաննած

էի իմ կնոջս: Այո, միայն չափազանց չարչարվելուց, չափազանց տանջվելուց յետոյ, ինչպէս ես տանջվեցայ, այս կերպով միայն հասկացայ թէ որ տեղ է ամեն բանի արմատը, հասկացայ ինքս ինձ, իմ սեփական եւ մեր հատարակական մեղքը: Ուրեմն տեսնում էք, ահա ինչպէս եւ ե՛րբ սկսվեցաւ այն, ինչ որ հասցրեց ինձ իմ անբաղդութեանը: Այս սկսվեցաւ երբ մօտ 16 տարեկան էի: Այս պատահեց, երբ ես դեռ դիմնագիծնի մէջ էի, իսկ իմ մեծ եղբայր համալսարանի առաջին դասընթացի ուսանող էր: Ես դեռ կանանց չգիտէի, բայց, ինչպէս մեր շրջանի բոլոր անբաղդ մանուկներն, արդէն անմեղ պատանի չէի: Արդէն երկրորդ տարի էր ինչ որ ապականված էի տղաներից, արդէն ոչ թէ որ եւ իցէ կին, այլ կինը, որպէս մի քաղցր ինչ, կինը, ամեն մի կինը . . . արդէն տանջում էր ինձ: Իմ առանձնութիւններս անմաքուր էին: Ես տանջվում էի, անչուշտ դուք եւս տանջվում էիք, եւ այսպէս տանջվում են մեր պատանիների 99⁰/₁₀: Սարսափում էի, չարչարվում էի, աղօթում էի եւ ապականվում էի: Ես արդէն անառակացած էի երեւակայութեամբ եւ իրապէս, բայց վերջին քայլը դեռ եւս չէի արած: Ես կորնչում էի միայնակ, բայց դեռ առանց սպանելու մի ուրիշմարդկային էակին: Ես դեռ եւս կարող էի փրկվել: Եւ ահա եղբօրս ընկերը, զուարճասէր ուսանողը «լաւ տղայ» այսինքն ամենամեծ ապաշնորհը մեզ թէ խմել թէ թուղթ խաղալ սովորեցնողը, մի կերութեամբ յետոյ համոզեց գնալ այն տեղ: Գնացինք: Եղբայրս նոյնպէս անմեղ էր եւ այն դիշերն ապականվեցաւ: Եւ ես 16 տարեկան տղաս ապականեցի

ինքս ինձ եւ գործակից եղայ քոյր-կնոջ ապականելու, ամենեւին հասկանալով արածս: Ես մեծերից ոչ ոքից չէի լսել, թէ այս իմ արածը վատ լինէր: Արդարեւ այս կար պատուիրանների մէջ, սակայն ոչ ապաքէն պատուիրանները պէտք են միայն նորա համար, որ պատասխանեն կրօնուսուցչին հարցաքննութեան ժամանակ, եւ այնքան շատ եւս պէտք չեն, եւ ոչ երբէք այնչափ, որչափ պէտք է լատինական ա՛ գործածելու պատուիրանը թէական նախադասութիւնների մէջ: Ուրեմն այն հատակաւոր մարդիկներից, որոնց կարծիքն յարգումէի, ես ոչ ոքից լսած չէի, որ սա վատ գործ լինէր: Ընդ հակառակն, իմ յարգած մարդիկներից լսած էի, թէ սա լաւ գործ է: Ես լսած էի թէ իմ կոիւներս եւ չարչարանքները կհանդարտվին սորանից յետոյ, ես այս լսած էի եւ կարգացել: Լսել էի մեծերից թէ առողջութեան համար սա լաւ է, իսկ ընկերներից լսել էի թէ սորա մէջ մի տեսակ արժանաւորութիւն, կարծութիւն կայ: Այնպէս որ առ հասարակ բացի լաւից այստեղ ոչինչ էր երեւում: Հիւանդութեան վտանգը — Բայց այս եւս նախատեսված էր... Բժիշկներն եւս ռոճիկ են ստանում, որ սորան հսկեն: Այսպէս եւ վայել է: Նոքա հաստատումն թէ անառակութիւնն օգտաւէտ է առողջութեանը, եւ նոքա են որ հիւանդութեան կանոնաւոր, օրինաւոր անառակութիւն: Ես ճանաչում եմ այնպիսի մայրերին, որոնք հոգ են տանում այս մտքով իրանց որդիների առողջութեան մասին: Իսկ գիտութիւնը պոռնկանոցներ է ուղարկում նոցա:

— Ի՞նչի համար գիտութիւնը, ասացի ես:

— Հապա ի՞նչ են բժիշկները: Գիտութեան քրքմեր են: Ո՞վ է ապականում կանանց բարքը, սովորեցնելով չծնելու միջոցներ: Ո՞վ է ապականում պատանիների բարք, հաստատելով թէ սա հարկաւոր է առողջութեան համար: — Նոքա: Ո՞վ է բռնաբարում սիֆիլիս ամենամեծ ուրախութեամբ: Նոքա:

— Հապա ի՞նչի չբժշկեն սիֆիլիսը:

— Ահա նորա համար, որ սիֆիլիս բժշկելը միեւնոյնէ թէ անառակութիւնն ապահովել, միեւնոյն է թէ ընկեցիկ մանուկների պատասպարան հիմնել:

— Ոչ, բայց այնու ամենայնիւ . . .

— Այո, եթէ միայն սիֆիլիս բժշկելու համար վատնված ջանքերի հարիւրերորդ մասը գործադրված լինէր անառակութիւն բժշկելու, վաղուց սիֆիլիսի անունն եւս չէր լինի: Ապա թէ ոչ, ջանքերը գործադրվում են ոչ թէ անառակութիւնն արմատախիլ անելու, հապա նորան խրախուսելու, անառակութեան անվտանգութիւնն ապահովելու: Բայց բանն այս չէ: Բանն այն է, որ ինձ պատահեց իմ անկման զարհուրելի գործը ոչ թէ այն պատճառով, որ յայտնի մի կնոջ բնական հրապոյրին ենթարկվեցայ, ոչ, ոչ մի կին չհրապուրեց ինձ, այլ ես ապականվեցայ նորա համար, որ ինձ չըջապատող չըջանը իմ անկումն համարումէր — ոմանք առողջութեան համար օգտաւէտ եւ շատ օրինաւոր գործողութիւն, ոմանք — ամենաբնական եւ ոչ միայն ներելի, այլ եւ անմեղ զուարճութիւն երիտասարդի համար, ինչպէս որ պատահումէ ոչ միայն մեր դասակարգում, հապա ամեն դասերում, նոյն իսկ գիւղական դասում տասից իննին, զուցէ եւ աւելի:

Ես մինչեւ անգամ չէի հասկանում, թէ այստեղ ապականութիւն կայ, եւ պարզութեամբ սկսել էի անձնատուր լինել մասամբ վայելչութիւններին, մասամբ կարիքներին, այնպէս էի սկսել խմել, ծխել: Բայց այնու ամենայնիւ այս առաջին անկման մէջ մի ինչ որ առանձին եւ որտուշարժ բան կար: Յիշում եմ, ինձ նոյն ժամայն, նոյն տեղ, սննեակից դուրս չեկած, մի տխրութիւն պատեց այնպէս որ կամենում էի լալ, լալ իմ անմեղութեան կորստի վերա, ընդ միշտ խանգարված յարաբերութեանս վերա դէպի կինը: Այո, յարաբերութիւններ դէպի կինը խանգարվեցան յաւիտեան: Արդէն այն ժամանակից մաքուր յարաբերութիւն դէպի կինը չունեցայ եւ չէի կարող ունենալ: Ես դարձայ այն, ինչ որ ասումեն պոռնիկ: Իսկ պոռնիկ լինելն այն ֆիզիքական գրութիւնն է, որ նման է ափիոն խմողի, արբեցողի, չափազանց ծխողի գրութեանը. ինչպէս որ ափիոն խմողը, արբեցողը չափազանց ծխողը արդէն կանոնաւոր մարդ չէ, նոյնպէս եւ իբ վայելչութեան համար քանի մի կանանց զիտացող մարդն արդէն կանոնաւոր մարդ չէ, այլ ընդ միշտ փշացած պոռնիկ: Ինչպէս որ արբեցողին, ափիոն խմողին կարելի է նոյն ժամայն ճանաչել դէմքից, ձեւերից, ճիշդ նոյնպէս եւ պոռնիկին: Պոռնիկը կարող է իրան զսպել պատերազմով, բայց հասարակ, պարզ, մաքուր յարաբերութիւն, եղբայրական յարաբերութիւն դէպի կինը նա արդէն երբէք ունենալու չէ: Նայելով թէ մարդն ինչպէս է նայում, զննում երիտասարդ կրնոջը. նոյն ժամայն կարելի է պոռնիկ մարդուն ճանաչել: Եւ սոյն օրից ես պոռնիկ դարձայ, եւ այնպէս եւս մնացի:

2.

— Այո, այսպէս է: Յետոյ շարունակվեցաւ, այնուհետեւ ամեն տեսակ խտորմունք եղան: Տէր Աստուած, երբ մտաբերումեմ իմ ամեն գարշութիւններս այս կողմից, սարսափ է տիրում ինձ: Ես իմ մասին այսպէս եմ մտաբերում, մինչդեռ ընկերներս ծաղրում էին իմ այսպէս ասած անմեղութիւնս: Հապա ե՛րբ լսումէս ոսկեայ երիտասարդների, ըսպանների, փարիզցիների մասին . . . Եւ այս ամեն պարոնները, եւ ես, երբ մենք երեսնամեայ անառակներս, հոգու վերա հարիւրաւոր բազմատեսակ, սարսափելի յանցանքներ ունենալով կանանց վերաբերմամբ, երբ մենք, երեսնամեայ անառակներս, մտնում ենք մաքրագարդված, լուացված, ամբիված, անոյշ հոտ քսած մեր վերա, մաքուր ճերմակեղէնով, ֆրակով կամ համազգեստով, մի հիւրասենեակ կամ երեկոյթ իրեւ մաքրութեան նշան, հիանալի է . . . : Ո՛հ գարշելի գործ: Բայց կգայ վերջապէս ժամանակը, երբ կը խայտառակուին այս գարշութիւնը եւ ստութիւնը: Ուրեմն, ա՛հ այսպէս էի ապրում ես մինչեւ երեսնամեայ հասակս, ոչ մի բոպէ չթողնելով ամուսնանալու եւ ամենավսեմ, մաքուր ընտանեկան կեանք հիմնելու զիտաւորութիւնս եւ այս տեսակէտից հետամուտ էի այս նպատակիս յարմարող օրիորդներին: Ես չաղախվումէի անառակութեան թարախի մէջ եւ միեւնոյն ժամանակ զիտում էի օրիորդներին, որոնք իրանց մաքրութեամբ ինձ համար արժանի լինէին: Շատե-

րին եւ մերժեցի իսկապէս նորա համար, որ նոքա բաւական մաքուր չէին ինձ համար: Վերջապէս զբտայ այնպիսի օրիորդին, որի արժանի համարեցի ինձ: Սա առաջագոյն շատ հարուստ, բայց մնանկացած Պէնզացի մի կալվածատէրի երկու աղջիկներից մին էր: Ճշմարիտն ասեմ, առանց սուտը թաքցնելու, ինձ որսումէին եւ բռնեցին: Մայրիկը, հայրիկը չկար, ամեն տեսակ դարաններ էր գործում եւ դարաններից մին, նաւակներով զբօսանքը, յաջողութիւն ունեցաւ: Մի երեկոյ, մեր նաւակով զբօսնելուց յետոյ, երբ լուսնեակ գիշերով տուն էինք վերադառնում, եւ ես նստած էի նորա կողքին եւ հիանումէի նորա բարեկազմ կերպարանքի սեղմված սեղմիրանի (կօրսէ) եւ նորա ծամերի վերա, եւ յանկարծ վճռեցի թէ այս նա է: Ինձ թուումէր այն երեկոյին, թէ նա հասկանումէ ամեն բան, ինչ որ եւ մտածումեմ եւ զգումեմ, եւ թէ իմ մտածումս եւ զգացածս ամենալսեմ բաներ են: Բայց մտածածքս ճիշդ այն էր միայն, որ սեղմիրանը մանաւանդ յարմար ունէր նորան, նոյնպէս եւ ծամերը եւ թէ նորա մօտ սնցուցած օրից յետոյ, կամենումէի առաւել մօտ մերձաւորութիւն: Ես յափշտակված վերադարձայ տուն եւ վճռեցի, որ նա կատարելութեան ծայրն էր եւ թէ այս պատճառով արժանի է իմ կիներս լինելու, եւ հետեւեալ օրն առաջարկութիւն արի: Ոչ, կամքը ձերն է, մենք ստութեան այնպիսի անգնդի մէջ ենք ապրում, որ եթէ մեր գլխին կայծակ չխփէ, ինչպէս իմ գլխիս, մենք չենք կարող սթափովել: Հապա այս ինչ խառնափնդորութիւն է: Հազար ամուսնացող տղամարդիկներից ոչ

միայն մեր շրջանում, այլ անբաղդաբար ժողովրդի մէջ եւս, հաղիւ թէ զանուի մին, որը առաջագոյն պատկված չլինէր արդէն տաննանգամ: (կան այժմ, ճշմարիտ է, լսած եմ, մաքուր, զգացող եւ իմացող երիտասարդներ, որոնց համար այս խնդիրը կատակ չէ այլ մեծ գործ է: Աստուած օգնական լինի նոցա: Իսկ իմ ժամանակ հազարից այդպիսի մին չկար): Եւ ամենքն այս դիտեն եւ կեղծումեն իբր թէ չգիտեն: Բոլոր սիրապատումների մէջ մանրամասնօրէն նկարագրուած են հերոսների զգացմունքը լճակները թփերը, որոնց չուրջ նոքա պտտումեն, բայց հերոսների մեծ սէրը զէպի որեւիցէ օրիորդն նկարագրելիս ոչինչ չէ գրում այն մասին, թէ ինչ է եղել հետաքրքրաշարժ հերոսի հետ առաջագոյն ոչ մի խօսք չկայ նորա այցելութիւնների մասին յայտնի տներում, աղախինների, խոհարարուհիների, ուրիշների կանանց մասին: Իսկ եթէ կան այսպիսի անպատշաճ սիրապատումներ, չեն տայ օրիորդների ձեռքը: Ամենքն օրիորդների առաջ եւ վերջապէս իրանք իրանց առաջ կեղծումեն իբր թէ չկայ այն ինչ որ մեր քաղաքների եւ մինչեւ անգամ գիւղերի կեանքի կէտն է կազմում այսինքն անստակութիւնը իբրեւ կեանքի վայելչութիւն, որին ամենքը մասնակցումեն: Եւ այնպիսի ջանքով են կեղծում, որ վերջապէս իրանք սկսումեն հաւատալ: Իսկ խեղճ օրիորդներն հաւատումեն սորան բոլորովին լրջօրէն: Այսպէս հաւատումէր եւ իմ անբաղդ կինս: Մտաբերումեմ որ ես, արդէն նշանված լինելով, ցոյց տուի նորան յիշատակարանս, որից նա կարող էր իմանալ գոնէ փոքր ինչ իմ անցեալս, գլխաւորապէս

իմ ունեցած վերջին մերձաւորութիւնս , որի մասին նա կարող էր ուրիշներէից իմանալ ուստի կարեւոր էի համարում նորան ասելու : Մտաբերումեմ նորա զարհուրանքը , յուսահատութիւնը եւ չիտթութիւնը , երբ նա իմացաւ եւ հասկացաւ : Ես տեսայ , որ նա կամենումէր ինձ թողնել այն ժամանակ : Եւ ի՛նչ բաղաւորութիւն կլինէր այս մեզ համար : Նա լռեց :

— Բայց ոչ , այսպէս առաւել լաւ է , այս առաւել լաւ է , բացաքանչեց : Ինձ այսպէս լաւ է : Բայց բանն այս չէ : Կամենումէի ասել թէ այստեղ խաբված են միմիայն անբաղդ օրիորդները : Իսկ մայրերն այս գիտեն , մանաւանդ գիտեն այն մայրերն , որոնք իրանց մարդիկների ձեռով են կրթված : Եւ կեղծեւորութէ հաւատումեն մարդիկների մաքրութեանը , իրօք բողոքովին այլապէս են ներդրծում : Նոքա գիտեն թէ ինչ թակարդով կարելի է բռնել տղամարդիկներին իրանց եւ իրանց աղջիկների համար : Մենք միայն տղամարդիկս չգիտենք նորա համար , որ չենք կամենում իմանալ — իսկ կանայք շատ լաւ գիտեն — որ ամենալսեմ , մեր բանաստեղծական ասված սէրը կախումն ունի ոչ թէ բարոյական արժանիքներից , այլ Ֆիզիքական մերձաւորութենից եւ միանգամայն գլխի զարդերից , գոյնից , հագուստի ձեւից :

Ասացէք փորձառու պնձասէր կնոջը , որը ուխտելէ հրապուրել տղայ մարդուն — ո՞րն է աւելի իրան ընդունելի . այն , որ իր հրապուրելի անձի ներկայութեամբ ինքն յանդիմանովի իրբեւ ստախօս , անգութ , նաեւ անառակ , թէ այն , որը նոյն մարդու առաջ դուրս գայ անձեւ եւ տգեղ հագուստով : Իւրաքանչիւր կինն առաջին պայմանը միշտ նախապատիւ

կը համարէ : Նա գիտէ որ մեզ պէս մարդը միշտ սուտ է խօսում բարձր զգացմունքի մասին , — մարդուն հարկաւոր է միայն մարմինը , ուստի նա կը ներէ ամեն կեղտոտութիւններին , «Իսկ անձոռնի , անձաշակ , անձեւ հագուստի համար չպիտի ներէ» : Պըճնասէր կինը հասկանումէ այս անգիտակցաբար , ինչ պէս կենդանիները :

Սորա համար են այս զգուելի սեղմիրանները , բարձիկներն ետեւից , այս մերկ ուսերը , ձեռները , գրեթէ ծծերը : Կանայքը , մանաւանդ տղամարդիկների դպրոցն աւարտածները շատ լաւ գիտեն , որ խօսակցութիւններ վսեմ առարկաների մասին կարող են միշտ լինել , իսկ այր մարդուն հարկաւոր է մարմինը եւ այն ամենն , ինչ որ հանդէս է հանում մարմինը ամենախափուսիկ ձեւերով : Այս եւ լինումէ իսկ եւ իսկ : Հապա եթէ մի կողմ թողնենք այն պայմանակա՞ն բացատրութիւններն , թէ ինչի եւ ինչ բանի համար է այս լինում , գլխաւորապէս եթէ մի կողմ թողնենք այս անձոռնի սովորութիւնը , որը մեզ համար երկրորդ բնութիւն է դարձել , եւ նայենք մեր բարձր , նոյն եւ ստորին դասակարգերի կեանքին , ինչպէս որ կայ , իր ամենայն անամօթախածութեամբ , — կտեսնենք , որ սա մի ընդհանուր պոռնկանոց է : Դուք համաձայն չէ՞ք : Թոյլ տուէք , ես կապացուցանեմ , ստումէր նա , ընդհատելով ինձ :

— Ասումէք թէ կանայքը մեր հասարակութեան մէջ ուրիշ հոգերով են ապրում քան թէ պոռնկանոցների կանայքը , իսկ ես ասումեմ , թէ ոչ , եւ կապացուցանեմ : Եթէ մարդիկ տարբեր են կեանքի նպատակներով , կեանքի ներքին բովանդակութեամբ ,

այս տարբերութիւնն անշուշտ կը յայտնվի արտաքուստ եւս, արտաքինով եւս տարբեր կլինի, սակայն նայեցէք այն թշուառներին, անարգվածներին եւ բարձրադիր տիկիներին միեւնոյն արդուզարդեր, միեւնոյն ձեւեր, միեւնոյն անոյշ իւղեր, միեւնոյն ձեռների, ուսերի, կուրծքի մերկութիւն եւ մէջքի սեղմումն, միեւնոյն ցանկութիւն դէպի ակներ եւ թանկագին գեղեցիկ իրեղէններ, միեւնոյն զուարճութիւններ, պարեր, երաժշտութիւն եւ երգեցողութիւն: Ինչպէս որ նոքա են հրապուրում ամեն միջոցներով, նոյնպէս եւ սոքա: Ոչինչ զանազանութիւն չկայ: Իսկ եւ իսկ որոշելով պէտք է ասել, որ կարճ միջոցի պոռնիկները սովորաբար անարգված են, երկար միջոցի պոռնիկներն յարգված են:

Այո, ահա այսպէս որսացին ինձ այս սեղմիրանները, ծամերը եւ ետեւի բարձիկները:

է.

Իսկ ինձ որպալ հեշտ էր, որովհետեւ ես կրթված էի այն պայմանների մէջ, որտեղ ջերմութեամբ հասունացած վարունգների նման, արուեստագործվում են սիրահարվող երիտասարդներ: Չէ որ մեր գրգռիչ չափազանց մնունը, Ֆիզիքական կատարեալ անգործութեան հետ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ցանկատարութեան կանոնաւորված բորբոքումն:

Մեր աշխարհի այր մարդիկ պահպանվում են կերակրուվում ինչպէս ցուլեր: Արժէ միայն ծածկել փրկարար կափարիչը այսինքն եթէ անառակ երիտասարդը փոքր ինչ ժուժկալ կեանք վարէ, եւ նոյն

ժամայն առաջ կգան սարսափելի անհանգստութիւն եւ զրգռումն, որոնք մեր հասարակական կեանքի արհեստական պայմանների մէջով անցնելով սիրահարութիւն են արտադրում: Մեր ամեն սէրերն եւ ամուսնութիւնները մեծ մասամբ սննդի պայմաններէն են առաջանում: Դուք զարմանումէ՞ք: Սակայն պէտք է զարմանանք թէ ի՞նչի այս չենք տեսնում: Ինձանից ոչ հեռու, այս զարնան, երկաթուղու վերա ուսմիկներ էին բանում: Հասարակ շինականի սովորական մնունը յայտնի է. հաց, բոզա (կվաս) սոխ — նա կենդանի է, արթուն է, առողջ է, կատարումէ թեթեւ դաշտային գործեր: Վարձվումէ երկաթուղու վերա աշխատելու, նորա մնունը լինումէ. հաջար (կաշա) եւ մի ֆունտ միս: Բայց այս միսը նա սպառումէ 16 ժամեայ աշխատութեամբ երեսուն պուդ կրօղ ձեռնասալով: Եւ ճիշդ այնպէս վայելէ իրան: Իսկ մենք ուտումենք 2 ֆունտ միս, թռչուններ, եւ ամեն տեսակ տաքացնող կերակուրներ եւ խմիչքներ: Ո՞ւր է գնում այս բոլորը: Զգայական ծայրայեղութիւններ աւելացնելու: Եւ եթէ գնումէ այն ճեղ — փրկարար կափարիչը բաց է ամեն բան բարեյաջող է: Բայց ծածկեցէք կափարիչը, ինչպէս որ ես էի ծածկում ժամանակաւորապէս, ահա նոյն ժամայն առաջ է գալիս զրգռումն, որը եթէ սիրապատումների, իրապատումների, ուսանաւորների, երաժշտութեան մէջով անցուցանվի, կգոյանայ ամենազուտ սիրահարութիւն: Ես եւս սիրահարուեցայ, ինչպէս ամենքը սիրահարվումն: Եւ ամեն բան առ ձեռն պատրաստ էր. թէ յափշտակմունք, թէ խանդաղատանք, թէ բանաստեղծու-

թիւն : Իսկապէս այս իմ սէրս սարքեցին մայրիկն եւ կարուհիները : Եթէ նաւակով զբօսանքը չլինէր, եթէ կարուհիների նրբամէջք ձեւեր չլինէին, այլ իմ կինս անպաճոյճ շրջազգեստ հագած ունենար եւ տանը նստած լինէր, ես չէի սիրահարովի, եւ ինձ չէին որսայ :

Ը.

Նայեցէք դեռ եւս աշխարհիս ստուծեանը այսինքն թէ ինչպէս են սարքում մեր ամուսնութիւնները : Բնականն ի՞նչ է : Օրիորդը հասակն առաւ, պէտք է նորան պսակել : Կարծես շատ պարզ բանէ, երբ աղջիկը տղեղ չէ եւ պսակվել ցանկացօղ մարդիկ կան : Բայց չէ : Հապա սկսվումէ ստախօսութիւնը : Հին ժամանակ երբ աղջիկն հասակն էր առնում, կեանքն աւելի ճանաչօղ, բոպէական սիրահարութեամբ չյափշտակվօղ, այլ եւ աղջկան իրանց անձի պէս սիրօղ ծնօղներն էին սարքում ամուսնութիւնը : Այսպէս է լինում, այսպէս էր լինում ամբողջ մարդկութեան — Չինացիների, Հնդկացիների, Մահմետականների մէջ, մեզանում ժողովրդի մէջ, այսպէս է լինում մարդկային ազգի, գոնէ նորա հարիւրից 99-ի մէջ : Միայն մենք անառակներ, հարիւրից մին, որ գուցէ եւ աւելի պակաս լինինք, տեսանք որ այս լաւ չէ եւ նորը հնարեցինք : Բայց թէ ի՞նչէ նորը : Նորն այն է, որ աղջիկները նստած են, իսկ մարդիկ շրջումեն եւ ընտրում կարծես շուկայում : Իսկ աղջիկները սպասում են եւ մտածում, բայց չեն համարձակում անել. «պարօն», ինձ, չէ, ինձ, ոչ

նորան, տես ինչ ուսեր, մէջք եւ այլն ունիմ :» Իսկ մենք մարդիկներս շրջումենք եւ ամենքին դիտում : Միեւնոյն ժամանակ խոսումենք կանանց իրաւունքների եւ այն ազատութեան վերա, որը մի կերպով ձեռք է բերվում լսարանների մէջ :

— Ուրեմն ի՞նչպէս անելու է, ասացի ես : Հապա ի՞նչ : Մի՞թէ կինը պիտի առաջարկութիւն անէ :

— Ես չգիտեմ ինչպէս : Միայն եթէ հաւասարութիւն էք կամենում, ուրեմն հաւասարութիւն պիտի լինի : Եթէ տեսան, որ ծնողների նշանախօսութիւնն նուստս բան է, ուրեմն սա հազար անգամ աւելի է : Այն տեղ իրաւունքներ եւ յաջողութիւն հաւասար են իսկ այս տեղ կինը ստրկունի է շուկայում, եւ բովնետեւ նա չէ կարող համաձայնել ստրկունի լինել եւ ինքն չէ կարող առաջարկութիւն եւս անել, ուստի ա՜նա եւ սկսվումէ այս միւս առաւել անճոռնի ստուծիւնը, որը երբեմն լոյս արեւ տեսնել, եւ երբեմն զուարճանալ է ասվում եւ ոչ այլ ինչ է, եթէ ոչ փեսայացուներին որսալը : Ասացէք որեւիցէ մօր կամ նոյն իսկ օրիորդին բացարձակ թէ նա զբաղած է միայն փեսացունին սրսալու, — Տէր Աստուած, ի՞նչ վիրաւորանք հասցրած կլինիք : Մինչդեռ նոքա ամենքը միայն սորանով են զբաղած եւ ուրիշ ոչինչ զբաղմունք չունին : Առաւել սարսափելին այն է, որ տեսնումես երբեմն դեռափիթիթ, խեղճ, անմեղ օրիորդներին միեւնոյն բանով զբաղած : Եւ գոնէ եթէ այս յայտնապէս կատարվէ, է՛հ մի բան էր, հապա միշտ խաբէութեամբ : Ա՛հ, տեսալիների ծագումն : Ո՛րքան հետաքրքրաշարժ է : . . . Ա՛հ, Լինին շատ է հետաքրքրվում նկարչութեամբ : Իսկ դուք կը լինիք

ցուցանանդէսում: Ո՛րքան հրահանգիչ է: . . . Իսկ եռաձի կառքեր . . . հապա թատրօնական ներկայացումն . . . իսկ սիմֆօնիա՞ն . . . ահ, ի՞նչ նշանաւոր բան է . . . իմ էլիզայիս խելքը գնումէ երաժշտութեան համար: Հապա ի՞նչի դուք այս համոզմունք չունիք . . . :

Մինչդեռ գլխի մէջ մի միտք ունին միայն. «առ, առ ինձ, իմ էլիզային: Ոչ, ինձ: Գոնէ փորձիր» . . .

Թ.

Գիտէք, յանկարծ ընդհատեց նա, կանանց այն տիրապետութիւնը, որից սանջվումէ աշխարհս, բոլորովին սորանից է առաջանում:

— Ի՞նչպէս, կանանց տիրապետութիւնը, ասացի ես: Ամենքը ողբումեն թէ նոքա իրաւունքներ չունին, թէ նոքա ճնշված են:

— Ի՛սկ այդ է, յարակցեց նա: Ի՛սկ այդ է, ինչ որ կամենումեմ ասել, դա է բացատրում այն, գերօրինակ երեւոյթը, որ մի կողմից կլինն անարգված է մինչեւ ամենաստոր աստիճան, միւս կողմից նա իշխում է: Բոլորովին այնպէս, ինչպէս Հրէաների մէջ է: Ինչպէս որ նոքա իրանց անարգվելը դրամական իշխանութեամբ են փոխանակում, նոյնպէս եւ կանայքը: «Հա, դուք կամենումէք, որ մենք վաճառականներ լինինք: Լաւ, մենք վաճառականներս կիշխենք ձեզ», ասումնն հրէաները: «Հա, դուք կամենումէք, որ մենք միայն հեշտասիրութեան առարկայ լինինք: Լաւ, մենք որպէս հեշտասիրութեան առարկայ, կատրկացնենք ձեզ» աս-

սումնն կանայքը: Կինը զուրկ է իրաւունքներից ոչ թէ նորանով, որ նա չէ կարող քուէ տալ կամ դատաւոր լինել: Այս գործերով զբաղելու մէջ չեն կանայնում նորա իրաւունքները: Հապա այն հանգամանքի մէջ, որ սեռական յարաբերութեան կողմից նա հաւասար լինէր մարդուն, իրաւունք ունենար օգուտ քաղելու մարդուց եւ հրաժարվելու նորանից, իր ցանկութեամբ ընտրելու մարդուն, եւ ոչ թէ ընտրվելու: Դուք ասումէք թէ սա անճոռնի բանէ: Լաւ: Այն ժամանակ թող տղամարդն եւս չունենայ այս իրաւունքները: Իսկ այժմ կինը զրկուած է մարդու ունեցած իրաւունքից: Եւ ահա, այս իրաւունքը փոխանակելու համար, կինը ներգործումէ մարդու հեշտասիրութեան վերա, հեշտասիրութեան միջոցով կինը նորան այնպէս է նուաճում, որ նա միայն ձեւի համար է ընտրում, իսկ իրօք ընտրողը կլինն է: Եւ միանգամ այս միջոցն ունենալով, նա չարաչար է գործ դնում եւ սարսափելի իշխանութիւն է ձեռք բերում մարդիկների վերա:

Հապա ո՞րտեղ է այդ առանձին իշխանութիւնն, հարցրի:

Որտե՞ղ է իշխանութիւնը: Ամենտեղ, ամենբանի մէջ: Մտէք ամեն մի մեծ քաղաքի մթերանոցները: Այնտեղ միլիօններ կան, գին դնել չէ կարելի մարդիկների թափած աշխատութիւններին: Բայց նայեցէք այս մթերանոցների տասից մինի մէջ կայ արդեօք մի որեւիցէ բան տղամարդու գործածութեան համար: Կեանքի բոլոր շոյալութիւնը կանայք են պահանջում եւ պահպանում: Հաշուեցէք բոլոր գործարանները: Նոցանից մեծադոյն մասը աս-

նօգուտ զարգարանքներ է պատրաստում կանանց համար : Միլիօնաւոր մարդիկ , սորուկների քանի մի սերունդ կորչումեն այս տաժանակիր աշխատութեան մէջ գործարաններում միմիայն կանանց հաճոյակատարութեան համար : Կանայք իբրեւ թագուհիներ պահոււմեն կաշկանդումի եւ ծանր աշխատութեան մէջ մարդկային ազգի տասից ինն մասը : Եւ այս ամենը նորանից է , որ նոցա ստորացրել են , զրկել են այր մարդիկների հաւասար իրաւունքներից : Եւ ահա նոքա վրէժխնդիր են լինում , ներգործելով մեր հեշտասիրութեան վերա , որսալով մեզ իրանց որոգայթների մէջ : Այո , բոլորը նորանից է : Կանայք իրանցից այնպիսի գործիք են շինել հեշտասիրութեան վերա ներգործելու , որ երիտասարդը , այլ եւ ծեր մարդն եւս չէ կարող անվրդով մնալ կնոջ նկատմամբ : Նայեցէք տօն օրը ժողովրդի մէջ եւ մեր երեկոյթներում եւ պարահանդէսներում . կինը գիտէ թէ ինչպէս է ներգործում , այդ կարող էք տեսնել նորա յաղթական ժպտից : Եւ ահա երիտասարդը կնոջ մօտենալուն պէս ենթարկվում է նորա քնեցնօղ խաշխաշին եւ մոլեքնումէ : Առաջ ես միշտ անհանդատութիւն էի զգում , երբ տեսնում էի զարգարուած կնոջը , թէ գիւղացուն կարմիր թաշկինակով եւ բազմածալ շրջազգեստով , եւ թէ մեր շրջանի տիկնոջ պարահանդէսի հազուատով , իսկ այժմ ես պարզապէս սարսափվումեմ , ես պարզապէս տեսնումեմ մարդիկների համար վըտանգաւոր եւ օրինազանց գործ եւ ցանկութիւն եմ ունենում ոստիկանի պաշտպանութիւնը կանչել վըտանգի դէմ , պահանջել , որ վերցնէին , հեռացնէին

վտանգաւոր առարկան : Եւ այս ամենեւին կատակ չէ : Ես համոզված եմ , որ կգայ ժամանակ , եւ գուցէ շատ շուտ , որ մարդիկ կհասկանան այս եւ կը զարմանան թէ ինչպէս էր կարող գոյութիւն ունենալ այնպիսի մի հասարակութիւն , որի մէջ թոյլ էին տրվում ընդհանուր հանգստութիւն վրդովեցնող այսպիսի վարմունքը , որոնք ուղղակի հեշտասիրութիւն են գրգռում եւ որոնք ներելի են համարում մեր տիկիները : Ոչ ապաքէն սա միեւնոյն է թէ դրօսարանների , ճանապարհների վերա ամենատեսակ որոգայթներ լարել . . . աւելի վատ է :

Ժ .

Ահա այսպէս եւ որսացին ինձ : Ես , ինչպէս սովորաբար ասում են—որբանարուած էի : Եւ ոչ միայն նորան էի համարում կատարելութեան ծայր , այլ ինձ եւս իմ նշանախօսութեան միջոցին կատարեալ մարդ էի հաշուում : Ոչ ապաքէն չկայ այնպիսի մի ապաշնորհ մարդ , որն որոնելով չգտնէր որեւիցէ կողմից իրանից աւելի ապաշնորհ մարդուն եւ չկարողանար պարծենալու առիթ գտնել եւ իրանից բաւական լինել : Ես եւս նոյնպէս . դրամի վերա չպըտակվեցայ — արծաթսիրութիւնը տեղիք չունէր այնպէս , ինչպէս իմ ծանօթներիս մեծամասնութիւնը պսակվում էր դրամի կամ ընտանեկան նոր յարաբերութիւնների համար : Ես հարուստ էի , նա աղքատ էր : Այո մին , — երկրորդ , ես նորանով էի պարծենում , որ ուրիշները պսակվումէին նոյն բազմակնութեամբ , ինչպէս որ ապրում էին ամուսնու-

Թեևից առաջ, իսկ ես պատկզելուց յետոյ պինդ պիտի պահէի միակնութիւնը եւ սորա համար հպարտանալուս վերջ չկար: Այո, ես սարսափելի խոզ էի եւ երեւակայում էի թէ հրեշտակ եմ: Իմ նշանախօսութեան ժամանակն երկար չտեւեց: Առանց ամաչելու չեմ կարողանում այժմ մտաբերել այս նշանախօսութեան ժամանակը: Ի՞նչ զարշելի բան էր: Չէ որ այդ տեղ զօրութեամբ է իմացվում հոգեւորը սէրը եւ ոչ զգայականը, հոգեւոր հաղորդակցութիւնը ուրեմն խօսքերով, խօսակցութեամբ, երոյցներով պիտի յայտնվէր այս հոգեւոր հաղորդակցութեանը: Այսպիսի ոչինչ չկար: Սարսափելի դժուար էր լինում խօսել, երբ մենք միայնակ էինք մնում: Այս մի տեսակ Սիդրիփեան աշխատութիւն էր Կհնարես մի բան ասելու, կասես, նորից պէտք էր լռել բան գտնելու, խօսելու բան չկար: Բոլորն, ինչ որ կարելի էր ասել մեզ սպասող կեանքի, կարգ ու սարքի նախագծերի մասին — արդէն ասված էր, իսկ յետո՛յ, եթէ մենք կենդանիներ լինէինք հասկանալի կը լինէր, որ մենք պիտի չխօսէինք, բայց այստեղ ընդհակառակն պէտք է խօսել եւ բան չունիս ասելու, որովհետեւ զբաղեցնումէ այն, ինչ որ խօսակցութիւններով չէ լուծվում: Սորա հետ դեռ եւս շաքարեղէններ քաղցրեղէններ ազանութեամբ ուտելու անճոռնի սովորութիւնը, հարսանիքի բոլոր զազրալի պատրաստութիւնները, բնակարանի, նընջարանի, անկողինների, բաճկոնների, գիշերազգեստների, ճերմակեղէնի, արդուզարդի մասին զրոյցները: Դուք հասկացէք, որ եթէ պատկզումն Դօմօստրօփի հիմամբ, (հնագոյն ծէսերով), ինչպէս որ ասումէր

այն ծերուկը, այն ժամանակ փետրալից բարձերը, օժիտը, անկողինները — այս բոլորը սրբագործված խորհրդի մանրամասնութիւններ են: Իսկ մեզանում, երբ տասն պատկզօղից հազիւ թէ լինի մին, որը ոչ թէ հաւատումէ խորհրդին (հաւատալ կամ չհաւատալ մեծ բան չէ), այլ չէ հաւատում նորան, ինչ որ խոստանումէ, երբ հարիւր մարդուց հազիւ թէ լինի մին, որն առաջագոյն ամուսնացած չլինի, եւ յիսունից մին, որն առաջուց չպատրաստուէր դաւաճանել իր կնոջը, երբ մեծամասնութիւնը նայումէ կեկեղեցի գնալուն իբրեւ յայտնի կնոջ միայն ձեռք բերելու առանձին պայմանին, — մտածեցէք թէ ի՞նչ զարհուրելի նշանակութիւն են ստանում այս դէպքում այն ամեն մանրամասնութիւնները: Կարծես մի առուտուր է կատարվում: Անմեղ օրիորդին վաճառումեն մի անառակի վերա եւ այս վաճառմանն ամենահաճոյական ձեւ են տալիս:

ԺԱ.

Այսպէս են ամուսնանում ամենքը, այսպէս ամուսնացայ ես եւս: Եւ եթէ միայն դիտենային մեղրալուսին երազօղ երիտասարդները թէ այն ի՞նչ յուսարեկութիւն է: Ամենայն ինչ պատրանք է: Բայց մի անյայտ պատճառով ամենքն հարկաւոր են համարում այս թաղցնել: Մի անգամ զատկի օրերին ես ամեն զբօսավայրեր այցելեցի եւ մտայ տեսնելու մօրուքով մի կնոջ եւ ջրի շունը: Յայտնվեցաւ, որ նա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ, կնոջ հագուստով, ուսերը մերկ այր մարդ, եւ ծովահորթի կաշին ծած-

կած չունը լողարանի մէջ լողալիս : Ասումեն հետաքրքրաշարժ չէր , բայց երբ ես դուրս էի գալիս , ինձ քաղաքավարութեամբ ճանապարհումէ առաջնորդողը եւ դառնալով դրան մօտ կանգնած ժողովրդին , ինձ մատնանիչ անելով ասաց . « Ես հարցրէք պարոնից , արժէ տեսնել թէ ոչ : Մտէք , մտէք , մի Ֆրանկ է մարդ գլուխ : » Ես քաշուեցայ ասելու թէ չարժէ տեսնել , իսկ առաջնորդոյն երեւի այս էր սպասում : Նոյն է պատահում երեւի նոցա եւս , որոնք փորձել են ամուսնութեան մեղրալուսնի բոլոր գարշութիւնը եւ չեն յուսահատեցնում ուրիշներին : Ես եւս չէի յուսահատեցնում ոչ ոքին , բայց այժմ չեմ հասկանում թէ ի՞նչի ճշմարտութիւնը չասեմ : Մեղրալուսնին ոչինչ հրապուրանք չունի , ընդհակառակն տաղտկութիւն , ամօթ , ցաւ , գարշութիւն , եւ գլխաւորապէս ճանձրոյթ , սարսափելի ճանձրոյթ : Այս նման է պատանու ծխել սկսելիս զգացածին , երբ սիրտը խառնվումէ , բերանից թուք է գալիս եւ կլանումէ նորան , ցոյց տալով իբր թէ շատ հաճելի է իրան : Սորա վայելչութիւնը , ինչպէս ծխելուն , եթէ լինելու է , յետոյ պիտի լինի : Ամուսինները պէտք է մշակեն իրանց մէջ այս արատը , որպէս զվայելչութիւն ստանան :

— Ի՞նչ արատ , ասացի ես : Ոչ սպաքէն դուք մարդկային ամենաբնական յատկութեան մասին էք խօսում :

— Բնական , ասաց նա : Բնական : Ոչ , ես ձեզ կասեմ ընդհակառակն , « այս անբնական է » : Եւ սորան համոզվեցայ ես , փջացած , ապականված մարդու Օրիորդի համար , իւրաքանչիւր չապականված օրիոր-

դի համար այս վերին աստիճանին անբնական է , ինչպէս երեխաների համար : Իմ քոյրս շատ դեռահաս հասակում ամուսնացաւ՝ երկու անգամ իրանից աւելի հասակն առած եւ անառակ մարդու հետ , մտաբերումեմ թէ ի՞նչպէս զարմացած մնացինք հարանիքի զիշեր , երբ նա գունաթափ , արտասուելով փախելէր նորանից եւ ամբողջ մարմնով դողդողալով յայտնումէր թէ նա ասել անգամ չէր կարող այն , ինչ որ կամենումէր նշանածն իրանից : Դուք ասումէք , բնական է : Բնական է ուտել : Եւ ուտելն ուրախութիւն է , զիւրին է , հաճելի է եւ ամօթ չէ նոյն իսկ սկզբից , իսկ այստեղ թէ գարշելի է , թէ ամօթալի է , եւ թէ ցաւաբեր է : Ոչ , այս անբնական է : Եւ չապականուած աղջիկը , ես հալվեցայ , միշտ ատումէ այս գործը : Անբիծ աղջիկը մի բան է միայն ցանկանում — զաւակներին : Զաւակներին — այո եւ ոչ թէ այր մարդուն :

— Հապա ի՞նչպէս պիտի շարունակվէր , ասացի զարմացմամբ , մարդկային ցեղը :

— Ի՞նչ հարկ կայ նորա շարունակվելուն , անականակ պատասխանեց նա :

— Ի՞նչպէս թէ ի՞նչ հարկ : Այսպէս մենք չէինք լինի :

— Ի՞նչ պէտք կայ մեզ լինելու :

— Ի՞նչպէս թէ ի՞նչ պէտք : Սպրեւու համար :

— Ի՞նչի համար սպրիլ : Ոչ սպաքէն Ծօպէնհաուէրներ , Հարդմաններ , եւ Բուտպալի բոլոր հետեօղներն հաստատումեն թէ բարորութիւնը չապրելն է : Եւ նոքա իրաւ են ասում , որ մարդկային բարորութիւնը հանդիպումէ ինքնաջնջման հետ :

Միայն թէ նոքա այնպէս չեն ստում. նոքա ասումեն թէ մարդկային ազգը պիտի ոչնչանայ. չարչարանքից ազատվելու համար, թէ նորա նպատակն ինքնաջնջումն է: Այս ճշմարիտ չէ. մարդկութեան նպատակը չէ կարող լինել չարչարանքներից ազատվելն ինքնաջնջմամբ, որովհետեւ չարչարանքները գործունէութեան հետեւանքնն, ուստի գործունէութեան նպատակը չէ կարող լինել նոյն գործունէութեան հետեւանքներն ոչնչացնելը: Թէ մարդու եւ թէ մարդկութեան նպատակը բարօրութիւն է: Իսկ բարօրութեանն հասնելու համար մարդուն տրուած է օրէնք, որը նա պիտի կատարէ: Իսկ օրէնքը մարդիկների միութեան մէջ է: Այս միութեանն արգելք են լինում կրքերը, կրքերից ամենազօրեղ եւ ամենաչար կիրքը սեռական մարմնական սէրն է, ուստի եթէ կոչնչանան կրքերը եւ նոցանից ամենազօրեղ կիրքը — մարմնական սէրը, այն ժամանակ կիրագործվի միութիւնը, մարդկութիւնը կկատարէ իր օրէնքը եւ պէտք չի ունենայ ապրելու:

— Հապա՞ մինչեւ որ կատարած չէ:

— Դորա համար գրուած է փրկարար կափարիչը (ժուժկալութիւն: Կատարված օրէնքի նշանը մարմնական սէրի գոյութիւնն է: Եւ որովհետեւ մարմնական սէր կայ, այդ իսկ պատճառով գոյանումէ նոր սեռունդ, որ կարող է իրագործել օրէնքը: Եթէ այդ նոր սեռունդն եւս չիրագործեց, դարձեալ յետագայ սերունդներ կլինին — մինչեւ որ կիրագործվի բոլորը: Իսկ երբ կիրագործվի միութիւնը այն ժամանակ նոյն այս իրագործման պատճառով, ինքն ըստ ինքեան կոչնչանայ մարդկային ազգը, գոնէ մենք

չենք կարող երեւակայել կեանքը կամ այս մեր տեսած կեանքը, երբ մարդիկների մէջ կատարեալ միութիւն կը լինի:

ԺԲ.

— Օտարոտի տեսութիւն է (տէօրիա), ասացի:

— Այստեղ օտարոտի ի՞նչ կայ: Բոլոր եկեղեցական վարդապետութիւնների համաձայն պիտի դայ աշխարհի վերջը, բոլոր գիտնական վարդապետութիւնների համաձայն անխուսափելի է մի եւ նոյնը: Ուրեմն օտարոտի ի՞նչ կայ, որ բարոյական վարդապետութեամբ մի եւ նոյն է երեւում: «Ով կարող է տանել, թող տանէ» ասաց Քրիստոս: Եւ ես այս ուղիղ մտով եմ հասկանում, ինչպէս որ նա ասաց: Որպէս զի մարդիկների մէջ բարոյականութիւն լինի սեռական յարաբերութիւնների կողմից, նոքա պէտք է իրանց նպատակը կատարեալ ողջախոսութիւնն համարեն: Ողջախոսութեան ձգտելով, մարդս կարծես ընկնումէ: Եւ անկումն կլինի բարոյական ամուսնութիւն: Իսկ եթէ մարդս, ինչպէս մեր հասարակութեան մէջ, ձգտումէ ուղղակի մարմնական սէրին, դա, թէպէտ եւ կարծված բարոյական ամուսնութեան ձեւ ունենար, այնու ամենայնիւ այդ կլինէր միայն թոյլտուութիւն մի կնոջ հետ անառակութիւն անելու, որ մի անբարոյական կեանք կգառնայ, այն կեանքը, որի մէջ ես կործանվեցայ եւ նորան կործանեցի, եւ որը մեր մէջ բարոյական, ընտանեկան կեանք է կոչվում: Նկատեցէք թէ ինչպէս ենք շփոթում հասկացողութիւնները, երբ մարդու ամենաբաղգաւոր դիրքը — ազատութիւնը — ա-

մուրիութիւնը մի թշուառ, ծիծաղելի հանգամանք է համարվում: Կնոջ բարձրագոյն կատարելատիպը, լաւագոյն դիրքը, այն է մաքուր, եստեան կուսան լինելը երկիւղալի եւ ամօթալի բան է մեր հասարակութեան մէջ: Քանի եւ քանի օրիորդներ իրանց մաքրութիւնը զոհ են բերում հասարակական կարծիքի Մօլօգ կուռքին, ամուսնանալով անպիտանների հետ, միայն թէ կոյս այսինքն նուիրական էակ չմնան: Բարձրագոյն դիրք ունենալու երկիւղից օրիորդը կործանումէ իրան:

Բայց այն ժամանակ ես այս բանը չէի հասկանում, չէի հասկանում, որ աւետարանի այն խօսքը թէ կնոջը ցանկանալով նայօղը արդէն շնացաւ նորա հետ, չէ վերաբերվում մի միայն ուրիշների կանանց, այլ իսկապէս եւ գլխաւորապէս — սեփական կնոջը: Այս չէի հասկանում եւ կարծումէի թէ այդ մեղրալուսինը եւ իմ վայելմունքս նոյն մեղրալուսնի միջոցին ամենաբնական էին եւ թէ ցանկասիրութիւնդ բաւականացնելը սեփական կնոջ հետ մի լաւագոյն բանէ: Հասկացէք, որ ծնօղներից թոյլ տրված այս ճանապարհորդութիւնները, առանձնութիւնները միմիայն անառակութեան թոյլատրութիւն են նորապսակներին: Ես այն ժամանակ սորա մէջ ոչինչ վատ կամ ամօթալի բան չէի տեսնում եւ մեծ Բայց ես հաւատ ունէի դէպ ի մեղրալուսինն եւ ամեն կերպով աշխատումէի իրականացած տեսնել նորան: Սակայն որքան աւելի ջանք էի անում, այնքան քիչ էր դուրս գալիս: Ամբողջ ժամանակ ինձ

համար վատ, ամօթալի եւ ճանճրալի էր: Բայց շատ շուտ գրութիւնն առաւել եւս տառապելի եւ ծանր դարձաւ: Կարծեմ, երրորդ կամ չորրորդ օրը ես նորան տրտում տեսայ, սկսեցի հարցնել թէ ինչի, սկսեցի գրկել նորան, կարծելով թէ այս կարող էր լինել նորա բոլոր ցանկացածը, բայց նա մերժեց ձեռս եւ սկսեց լալ: — Ի՞նչի համար: Նա չկարողացաւ ասել, բայց նա տրտում էր, վշտալի էր: Երեւի, նորա տաղնապալից ջղերը յիշեցնումէին իրան մեր յարաբերութիւնների գարշելութեան ճշմարտութիւնը: Ես սկսեցի հարցուփորձ անել, նա ինչ որ մի բան ասաց թէ տրտում է առանց մօր: Ինձ թուումէր թէ ստոյգ չէր: Ես սկսեցի համոզել, առանց ծնօղների մասին խօսելու: Հասկացայ, որ նա պարզապէս տառապումէր, իսկ ծնօղները միայն պատրուակ էին: Նա չէր լսում ինձ, այն ժամանակ ես յանդիմանեցի նորան, որ նա քմահաճութիւն է անում եւ ծաղրեցի նորա տխրութիւնը, եւ յանկարծ արտասուքներն անհետացան եւ ամենաթունաւոր խօսքերով նա սկսեց նախատել ինձ, որ ես եսական եմ, անգութ եմ: Նորա ամբողջ երեսը միայն զայրոյթ էր արտայայտում եւ այս զայրոյթը ուղղված էր դէպի ինձ: Չեմ կարող յայտնել իմ յիգացած զարհուրանքը, երբ այս տեսայ: Ի՞նչպէս: Ի՞նչ, մտածումէի: Սէրը հօգինների կապն է, եւ սորա փոխարէն ատելութիւն դէպի ինձ: Դէպի ինձ: Այս ի՞նչ բանէ: Ի՞նչի համար: Անկարելի բանէ: Սա ինքը չէ: Ես փորձ արի մեղմացնել նորան բայց սառն, թունաւոր թշնամութեան այնպիսի անյաղթելի արգելքին հանդիպեցայ, որ հազիւ կարողացայ չուրջս նայիլ, մի զայրոյթ տի-

րեց ինձ եւս, եւ միմեանց շատ անգոհունակութիւններ յայտնեցինք: Այս առաջին կռուի տպաւորութիւնը սարափելի էր: Ես սորան կռիւ էի ասում, ժայց սա կռիւ չէր, այլ այն անդնդի բացվելն էր, որ կար իրօք մեր մէջ: Սիրահարութիւնը սպառնացաւ ցանկասիրութեան բաւականութիւն տալով: Եւ մենք մնացինք մին միւսի հանդէպ մեր բուն յարաբերութեամբ դէպի միմեանց, այսինքն միմեանց բոլորովին օտար երկու եսասէրներ, որ ցանկանում էինք որքան կարելի է աւելի վայելչութիւն նստանալ միմեանցից, եւ միմեանցից օգուտ քաղել կամեցող երկու անձն: Այն, ինչ որ ես կռիւ էի ասում, մեր բուն յարաբերութիւնն էր դէպ ի միմեանց, որ յայտնըվեցաւ, երբ ցանկասիրութիւնը վերջացաւ: Ես այն ժամանակ չէի հասկանում, որ այս սառն եւ թշնամական յարաբերութիւնը մեր բուն յարաբերութիւնն էր, այս չէի հասկանում այն պատճառով, որ այս թշնամական յարաբերութիւնն առաջին անգամ շատ շուտով նորից ծածկվեցաւ միզանից նոր զարթած ցանկասիրութեամբ այսինքն սիրահարութեամբ: Եւ ես կարծում էի, թէ կռուեցանք եւ հաշտվեցանք եւ թէ այլ եւս կրկնուելու չէ: Սակայն նոյն իսկ այս առաջին մեղրալուսնի մէջ շատ շուտ հասաւ յագեանալու շրջանը, մենք նորից դադարեցինք միմեանց հարկաւոր լինելուց, եւ երկրորդ կռիւ ունեցանք: Երկրորդ կռիւն ինձ առաջինից աւելի ապշեցրեց: Ուրեմն առաջինը պատահականութիւն կամ սխալմունք չէր, այլ այսպէս եւ կլինի եւ պիտի լինի, մտածում էի: Երկրորդ կռիւն աւելի ապշեցրեց ինձ այն պատճառով, որ առաջացաւ ամենահնարին առթով:

Կարծեմ զրամի պատճառով էր, որ ես երբէք չեմ ինայել եւ ի հարկէ չէի կարող ինայել կնոջս համար: Մտաբերումեմ միայն, որ կինս բանն այնպէս դարձրեց, որ իմ մի նկատողութիւնս նորան երեւեցաւ որպէս թէ ցանկութիւն ունիմ իր վերա իշխելու զրամով եւ որպէս թէ զրամի վերա եմ հաստատում իմ բացարձակ իրաւունքը, այսպիսի մի անհնարին, յիմար, անարգ, անընական բան թէ իմ եւ թէ նորա նկատմամբ: Ես զայրացայ, սկսեցի նախատել նորան, որ անքաղաքավարի է, նա ինձ նախատեց, եւ նորից սկսվեցաւ: Թէ բառերի մէջ, թէ նորա դէմքի եւ աչքերի մէջ ես տեսայ նորից մի եւ նոյն առաջագոյն ինձ ապշեցնող ատելութիւնը: Եղբօրս, բարեկամներին, հօրս հետ, մտաբերումեմ, ես կռվում էի, բայց մեր մէջ երբէք չկար այն առանձին թունաւոր թշնամութիւնը, ինչ որ այս տեղ էր: Սակայն անցաւ քանի մի ժամանակ, եւ դարձեալ այս փոխադարձ ատելութիւնն անյայտացաւ սիրահարութեամբ այսինքն ցանկասիրութեամբ, եւ ես դարձեալ մխիթարվում էի այն մտքով, թէ այս երկու կռիւք սխալմունք էին, որոնք կարելի է ուղղել: Բայց վերա հասաւ երրորդ, չորրորդ կռիւը եւ ես հասկացայ, որ սխալմունք չէին, այլ թէ կռիւք պիտի լինի, եւ կլինի: Ես այլ եւս չէի զարհուրում, այլ միայն զարմանում էի թէ ի՞նչի յատկապէս ես, միայն ես այնքան վատ, իմ սպասածիս հակառակ կերպով եմ ապրում կնոջս հետ, ի՞նչի այսպէս չեն միայն ես այնքան վատ, իմ սպասածիս հակառակ կերպով եմ ապրում կնոջս հետ, ի՞նչի այսպէս չեն ուրիշ ամուսինները: Ես այն ժամանակ դեռ եւս չգիտէի, որ բոլոր ամուսնութիւնների մէջ միեւնոյն է լինում: Բայց թէ ամենքը, ինձ պէս կարծումն

թէ սա իրանց բացառիկ դժբաղդութիւն է, թաք-
ցնումեն այս իրանց բացառիկ, ամօթալի դժբաղդու-
թիւնը ոչ միայն ուրիշներէից, այլ նոյն իսկ իրանցից,
իրբեւ մի վատ հիւանդութիւն, իրանք իրանց իսկ չխոս-
տովանելով: Այսպէս էր ինձ համար եւս: Առաջին
օրից սկսվեցաւ բոլոր ժամանակ եւ շարունակվու-
մէր, միշտ զօրանալով եւ սաստկանալով: Հոգուս
խորքում առաջին շաբաթներից զգացի, որ ես թա-
կարդի մէջ եմ ընկել, որ դուրս եկաւ այն, ինչ որ
չէի սպասում, որ ամուսնութիւնն ոչ միայն բաղդա-
ւորութիւն չէ, այլ մի շատ ծանրակշիռ բան, բայց
ես, ամենքի պէս, չէի կամենում ինքս ինձ խոս-
տովանել (այժմ եւս չէի խոստովանի, եթէ վախճանը
չլինէր) եւ ծածկումէի ոչ միայն ուրիշներէից, այլ
եւ ինձանից: Այժմ ես զարմանումեմ թէ ինչպէս
չէի տեսնում իմ իսկական դրութիւնս: Դրու-
թիւնս կարելի էր տեսնել արդէն նորանով, որ
կոիւններն սկսվումէին այնպիսի առիթներով, որ
յետոյ, երբ վերջանումէին, անկարելի էր մտաբերել
թէ ինչի համար էին: Խելք չէր համուժ գտնելու
միշտ դէպի միմեանց գոյութիւն ունեցող թշնամու-
թեան բաւականաչափ առիթներ: Ինչպէս որ ու-
րախ ծիծաղող երիտասարդները չեն գտնում ծիծա-
ղելու առարկայ եւ ծիծաղումեն իրանց ծիծաղի վե-
րա, նոյնպէս եւ մենք, մեր ատելութեան առիթ
չգտնելով, ատումէինք միմեանց պարզապէս նորա
համար, որ հոգու մէջ ատելութիւն ունէինք դէպի
միմեանց: Բայց դեռ աւելի զարմանալի էր մեր
հաշտվելու առիթների անբաւարարութիւնը: Երբեմն
պատահումէին բռներ, բացատրութիւններ, նաեւ

արտասուքներ, իսկ երբեմն — միշտ զարհուրանքով
եւ մտաբերում — միմեանց ասած ամենասաստիկ
խօսքերից յետոյ, յանկարծ լուռ հայեացքները,
ժպիտները, համբոյցները, գրկախառնութիւնները...:
Օ՛Ֆ, ինչ զագրալի բան... Ինչպէս չէի կարողա-
նում տեսնել այս գործի բոլոր գարշութիւնն այն
ժամանակ . . .

ԺԳ.

Ամենքը, ամենքը, թէ տղամարդիկ, թէ կանայք,
մեր ամենքս կրթված ենք մի տեսակ տառաբանու-
թիւն տածելով դէպի այն զգացումն, որը մեր մէջ
ընդունված է սէր անուանել: Ես մանկութենից պատ-
րաստվումէի սիրահարուելու, եւ սիրահարվումէի,
եւ բոլոր երիտասարդութեանս մէջ սիրահարվումէի,
եւ ուրախանումէի, որ սիրահարված եմ: Ինձ հաս-
կացրել էին, որ սիրահարված լինելն ամենազնիւ եւ
ամենավսեմ գրադմունք է աշխարհումս: Եւ անա
համուժ վերջապէս այս անակնկալ զգացումն,
մարդս անձատուր է լինում նորան: Բայց այստեղ
խաբէութիւն եւս ենթադրվումէ. տեսականապէս
սէրը գաղափարական է, վսեմէ, գործնականապէս
սէրը զագրալի, անասնային մի բան է, որի մասին
թէ խօսելը, թէ յիշելը միանգամայն գարշելի եւ ա-
մօթալի է: Իսկ եթէ գարշելի եւ ամօթալի է, ու-
րեմն այնպէս եւ պէտքէ հասկանալ, իսկ այստեղ
ընդ հակառակն մարդիկ ձեւացնումեն գարշելին եւ
ամօթալին որպէս գեղեցիկ եւ վսեմ: Կոպիտ եւ հա-
մառօտ կիսօսեմ: Իմ սէրի առաջին նշաններն ինչ

էին : Այն որ ես անձնատուր էի լինում անասնական ծայրայեղութիւններին ոչ միայն առանց ամաչելու , այլ եւ պարծենալով կարծես այս Ֆիզիքական ծայրայեղութիւնների հնարաւորութեամբ , ամենեւին չմտածելով ոչ միայն նորա հոգեւոր կեանքի , այլեւ նորա Ֆիզիքականի մասին : Ես զարմանում էի թէ որ աեղից էր առաջանում մեր զայրոյթը միմեանց դէմ : Բայց գործը շատ պարզ էր : Այս զայրոյթն ոչ այլ ինչ էր , եթէ ոչ մարդկային ընութեան բողոքն անասնութեան դէմ , որ ընկճում էր նորան : Ես զարմանում էի միմեանց դէմ ունեցած մեր ատելութեան վերա : Բայց չէ որ այլպէս չէր կարող լինել : Այս ատելութիւնն ոչ այլ ինչ էր , եթէ ոչ — միեւնոյն մեղսակիցների փոխադարձ ատելութիւն , թէ զրգուելու դէպի յանցանքը եւ թէ յանցանքին մասնակցելու համար : Ի՛նչպէս յանցանք չէ , երբ խեղճ կինը յղացաւ նոյն իսկ առաջին ամսում , իսկ մեր խողաբարոյ մերձաւորութիւնը շարունակվում էր : Դուք կարծում է՞ք թէ ես շեղվում եմ պատմութեանիցս : Ամենեւին ոչ : Այս ամենով ես ձեզ պատմում եմ թէ ի՛նչպէս սպանեցի կնոջս : Յիմարներ , Կարծում են թէ ես սպանեցի . նորան դանակով հոկտեմբերի 5 ին : Ես ոչ թէ այն ժամանակ սպանեցի նորան , այլ շատ առաջ , նոյնպէս ինչպէս որ այժմ ամենքը , ամենքը սպանում են : Դուք հասկացէք , մեր աշխարհում , ամենքն այն հայեացքն ունին թէ կինը մարդուն զուարճութիւն է տալիս (եւ փոխադարձաբար , երեւի , բայց ես այս չգիտեմ , ես իմս գիտեմ) : Wein , Weiler und gesang , (գինի , կին եւ երգ) — այսպէս են ասում ռոտանաւորների

մէջ բանաստեղծները : Կանայք գինով եւ երգերով : Ի՛նչ եմ ասում , վերցրէք ամբողջ բանաստեղծութիւնը , ամբողջ նկարչութիւնը , քանդակագործութիւնը , սկսած Պուչգինի նկարագրած « ռոտներ եւ մերկ վէնէրաներից եւ Ֆրիւսաներից » , եւ ահա կտեսնէք , որ կինը վայելչութեան գործիք է : կինն այսպէս է տրուբա եւ գրաչեօվկա փողոցների տներում եւ ամենաբարձր պարահանդէսներում : Եւ տեսէք սատանայի խորամանկութիւնը . եթէ գարշելի է , պէտքէ իմանալ , որ գարշելի է , որ կինն անոյշ կտոր է : Չէ , ասպետները նախ հաւատացնում են , թէ նոքա կնոջը պաշտում են (պաշտում են , բայց այնու ամենայնիւ նայում են նորան իբրեւ վայելչութեան գործիք) : Իսկ յետոյ հաւատացնում են թէ կնոջը յարգում են , ոմանք պատուաւոր տեղ են տալիս նորան , վերցնում են նորա ընկած թաչկինակը , ոմանք ասում են , որ կինն իրաւունք ունի ամեն պաշտօններ վարելու , վարչութեան մասնակից լինելու եւայլն : Այս ամենի հետ միասին , նոցա հայեացքը կնոջ վերա մնում է միշտ միեւնոյն : Նա վայելչութեան գործիք է : Եւ կինն այս գիտէ : Սա մի եւ նոյն ստրկութիւն է : Չէ որ ստրկութիւնն ոչ այլ ինչ է , եթէ ոչ — ոմանց օգուտ քաղելը շատերի աշխատութենից : Ուստի որպէս զի ստրկութիւն չլինի , մարդիկ չպիտի ցանկանային ուրիշների աշխատութենից օգուտ քաղել եւ այս համարէին մեղք կամ ամօթ : Մինչ զեռ սկսում են փոփոխել ստրկութեան արտաքին ձեւը , այնպէս են կարգադրում , որ ստրուկն իրան գնել այլեւս անկարելի է լինում , եւ երեւակայում են եւ իրանք իրանց հաւատացնում

թէ այլ եւս ստրկութիւն չկայ, եւ չեն տեսնում, եւ չեն կամենում տեսնել, որ ստրկութիւնը շարունակվում է մնալ, որովհետեւ մարդիկ մի եւ նոյն կերպով սիրում են եւ լաւ եւ արդար են համարում ուրիշների աշխատութենից օգուտ քաղել: Եւ քանի որ մարդիկ այս ձեւը լաւ են համարում, հետեւաբար միշտ կգտնուին ուրիշներից աւելի զօրեղ կամ խորամանկ մարդիկ, որոնք կյաջողեցնեն նոցանից շահվել: Մի եւ նոյն է կնոջ ազատութեան վերաբերմամբ: Չէ որ կնոջ ստրկութիւնն այն է միայն, որ մարդիկ ցանկանում են եւ շատ լաւ են համարում օգուտ քաղել նորանից իբրեւ վայելչութեան գործիքից: Եւ ահա ազատում են կնոջը, տալիս են նորան ամեն իրաւունքներ մարդու հետ հաւասար, բայց շարունակում են նայել նորան իբրեւ վայելչութեան գործիք, այսպէս են կրթում թէ մանկութեան ժամանակ եւ թէ հասարակական կարծիքի առաջ: Եւ ահա կինը միշտ մի եւ նոյն անարգուած, ապականված ստրկուհին է, իսկ մարդը այդ ստրկուհու միշտ մի եւ նոյն անառակացած տէրն է: Այո, ինչպէս որ ստրկութիւնն ոչնչացնելու համար պէտք է որ հասարակական կարծիքը խայտառակութիւն համարէր ուրիշների աշխատութենից օգուտ քաղելն իր վայելչութեան համար, նոյնպէս եւ կնոջ ազատութեան համար պէտք է որ հասարակական կարծիքը խայտառակութիւն համարէր կնոջ իբրեւ վայելչութեան գործիքի վերահայեացքը: Կնոջ ազատութիւնը պէտք է ոչ թէ դասախօսութիւնների եւ պալատների մէջ, այլ ննջարանում: Այո, պէտք է պատերազմ պոռնկութեան դէմ ոչ թէ պոռնկանոցներում, այլ ըն-

տանիքներում: Կնոջն ազատ են համարում դասախօսութիւնների եւ պալատների մէջ, սակայն նայում են նորան իբրեւ հաճոյքի առարկային: Սովորեցրէք նորան, ինչպէս որ նա սովորէ մեր մէջ, այս հայեացքով իրան նայելու — եւ նա ընդ միշտ ստորին էակ կմնայ: Կամ նա անզգամ բժիշկների օգնութեամբ յղանալու առաջը կառնէ այսինքն բոլորովին պոռնիկ կղառնայ ոչ թէ անամի, այլ մի իրեղէնի անզգայութեան հասած, կամ այն կլինի, ինչ որ կան մեծ մասամբ, այսինքն հիւանդ, ջլադրվու, թշուառ, առանց հոգեւոր դարդացման հնարաւորութեան:

— Այդ ինչի համար, հարցրի ես:

— Ահա զարմանալին այդ է, որ ոչ ոք չէ կամենում իմանալ այն, ինչ որ շատ պարզ է եւ ակնբերեւ, որը պիտի իմանային եւ քարոզէին բժիշկները, բայց լուում են: Այր մարդը կամենում է հաճոյք ունենալ, ամենեւին չկամենալով լսել ընտելեան օրէնքի — մանուկների մասին, սակայն մանուկները գոյանում են արգելք են դառնում շարունակ հաճոյք կատարելուն եւ միմիայն հաճոյքի վերա մտածող այր մարդը ստիպուած է միջոցներ հնարել այս արգելքն հեռացնելու: Եւ ահա երեք արգելք են հնարել: Առաջինն անզգամների դեղատոմսով կնոջը հրէշ դարցնող ամուլութիւնն է, որ միշտ եղել է եւ պիտի լինի կնոջ անբաղդութիւն — այս դէպքում մարդը կարող է հանգիստ եւ շարունակ իր հաճոյքը կատարել: Երկրորդ — բազմակնութիւնն է, ոչ թէ օրինաւոր, մահմտականների պէս, այլ մեր անարգ եւրոպականը, լի ստութեամբ եւ խաբէութեամբ: Երրորդ

արգելքը , բայց արգելք եւս չէ , այլ բնութեան պարզ , կոպիտ ուղղակի օրինազանցութիւնն , որ կատարումն այր ամուսինները ժողովրդի մէջ ամենքն , իսկ պատուաւոր ասված ընտանիքների մէջ մեծ մասը : Այսպէս էի ապրում ես եւս : Մենք չհասանք ոչ Եւրոպային , ոչ Փարիզին , ոչ Zmei-Kinder-system-ին , եւ մեր սեփականն եւս ոչ ինչ չհնարեցինք , որովհետեւ ամենեւին չենք մտածել անգամ այս մասին : Զգումենք , որ վատ են թէ մին , թէ միւսը , եւ կամենումենք ընտանիք ունենալ , բայց վայրենի հայեացքը կնոջ վերա նոյն է , ուստի առաւել վատթար է դուրս գալիս :

Մեր մէջ կինը պիտի լինի թէ յղի , թէ սիրական , թէ ծիծմայր : Սակայն ոչժը անբաւարար է լինում : Այս պատճառով են մեր շրջանում շրային գրգուման հիւանդութիւնը , իսկ գիւղական շրջանում դիւահարներ : Նկատեցէք-օրիորդների մէջ չկայ դիւահարութիւն , միայն կանանց մէջ է , այն եւս ամուսնութեամբ ապրող կանանց մէջ : Պարզ է թէ ինչի համար : Եւ ահա սորանից է կնոջ հոգեւոր եւ բարոյական անկումն եւ նորա ստորնութիւնը : Գոնէ մտածէինք թէ ինչ մեծ գործ է կատարվում կնոջ մէջ , երբ նա յղի է կամ մուսցանումէ : Աճումէ այն , ինչ որ շարունակումէ , փոխարինումէ մեզ : Եւ այս սուրբ գործը խափանվումէ . . . Բնչով : Մտածել սարսափելի է : Սակայն խօսումեն կնոջ ազատութեան , իրաւունքների մասին : Այս մի եւ նոյն է թէ մարդակերները պարարտացնէին գերիներին ուտելու համար եւ մի եւ նոյն ժամանակ հաւատացնէին թէ նոքա հոգ են տանում նոցա իրաւունքների եւ ազա-

տութեան մասին : Այս ամենը նոր էր եւ շատ զարմացրեց ինձ :

— Ուրեմն Բնչպէս անելու է : Եթէ այդպէս է , աւսացի , ուրեմն երեւումէ , որ կնոջ կարելի է սիրել երկու տարին միանգամայն , իսկ այր մարդը . . . :

— Այր մարդուն կարեւոր է , ընդմիջեց նա . — դարձեալ զիտութեան սիրելի քրմերը հաւատացրել են մեզ ամենքիս : Ես նոցա , այս մոգերին կպատուիրէի այն կանանց պաշտօն կատարել , որոնք , նոցա կարծիքով , անհրաժեշտ են այր մարդիկներին համար , ինչ պիտի ասէին նոքա այն ժամանակ : Համոզեցէք մարդուն թէ նորա համար անհրաժեշտ է օղի , ծխախոտ եւ ափիոն , — եւ այս ամենն անհրաժեշտ պէտք կղառնայ : Երեւումէ Աստուած չէր հասկանում ինչ որ պէտք է , ուստի եւ մոգերից չհարցրած , վատ է կարգադրել : Տեսնումէք , գործը կապ չունի : Այր մարդուն պէտք է , անհրաժեշտ է , այսպէս են վճուել նոքա , բայց այս տեղ խառնվել են որդեծնութիւն եւ որդեանութիւն , որոնք արգելք են լինում այս կարիքին բաւականութիւն տալուն :

— Ուրեմն Բնչպէս անելու է : — Մոգերին դիմել , նոքա կսարքեն : Նոքա արգէն հնարել են : Ո՛հ , երբ գահավէժ կլինին այս անզգամներն իրանց խարէութիւններով : Ժամանակ է : Ահա արգէն մինչ ուր հասաւ . ինչպարուումն եւ միմեանց վերա հրացան են արձակում , եւ բոլորը նորանից է : Եւ ինչպէս կարելի է , որ այլապէս լինի :

— Անասունները կարծես գիտեն , որ ձագերը շարունակումեն իրանց ցեղը եւ յայտնի օրէնք են պահպանում այս նկատմամբ : Միայն մարդն այդ ամե-

նեւին չգիտէ եւ չէ կամենում իմանալ : Եւ հող է տանում միայն այն մասին , թէ քանի կարելի է աւելի զուարճութիւն ստանայ : Եւ այս անօղն ո՞վ է : Բնութեան թագաւորը , մարդը : Նկատեցէք — անասունները միաւորվումն միայն այն ժամանակ , երբ կարող են ձագեր ունենալ , իսկ բնութեան գարշելի թագաւորը — միշտ , միայն թէ հաճոյք վայելէր : Դեռ միայն այս չէ , հապա կապիի այս զբաղմունքը նա արարչութեան գոհար — սէր է համարում : Եւ այս սէրի այսինքն գարշութեան անունով նա կործանումէ ի՞նչ — մարդկային ազգի կէսը : Բոլոր կանանց , որոնք օգնական պիտի լինէին մարդկութեան առաջադիմութեանը գէպի ճշմարտութիւնն եւ բարօրութիւնը , նա իր զուարճութեան անունով ոչ թէ օգնականներ , այլ թշնամիներ է դարձնում : Նայեցէք թէ ի՞նչն է խանգարում ամեն տեղ մարդկութեան առաջադիմութիւնը : Կինը : Բայց թէ ի՞նչի կանայք այդպէս են : Միմիայն նորանից է :

ԺԴ.

— Այո , մարդս անասնից շատ աւելի ստոր է , եթէ նա մարդկօրէն չէ ապրում : Եւ ես այսպէս էի : Եւ ամենավատն այն էր , որ այս վատ կեանքը վարելով , երեւակայումէի , թէ որովհետեւ ես չէի հրապուրվում ուրիշ կանանցից , օրինաւոր , ընտանեկան կեանք էի վարում , ուստի բարոյական մարդ էի եւ թէ ես ամենեւին մեղաւոր չէի , եւ եթէ մեր մէջ կոիւներ էին լինում , մեղաւոր էր կինս , նորա բնաւորութիւնը : Բայց ի հարկէ նա մեղաւոր չէր : Նա

այնպէս էր , ինչպէս ամենքը , ինչպէս մեծամասնութիւնը : Նա կրթված էր , ինչպէս որ պահանջումէ կնոջ դիրքը մեր հասարակութեան մէջ , ինչպէս որ կրթվումն առանց բացառութեան ապահովված դասակարգերի բոլոր կանայքը , որոնք չեն կարող այսպէս եւ չկրթվիլ : Ո՛րքան յաճախ է պատահում լսել եւ կարդալ կանանց կրթութեան անկանոնութեան մասին դատողութիւններ եւ թէ պէտք է փոխել նորան : Բայց այս բոլորը դատարկ խօսքեր են : Կնոջ կրթութիւնն առաջանումէ կնոջ կոչման վերա մարդիկների ճշմարիտ եւ ոչ կեղծաւոր հայեացքից : Մեր հասարակութեան մէջ տիրող հայեացքին նայելով — կնոջ զլիաւոր կոչումն այն է , որ վայելչութիւն տայ այր մարդուն , եւ այսպէս է կրթվում նա : Մանկութենից նորան սովորեցնումն այն միայն , ինչ որ կարող է աւելացնել իր հրապոյրները : Եւ իւրաքանչիւր օրիորդին սովորեցնումն միայն սորա մասին մտածել : Ինչպէս որ ճորտերն այնպէս էին կրթվում , որ իմանային իրանց տէրերին հաճոյանալ եւ այս չէր կարող այլապէս լինել , նոյնպէս եւ նոքա ամենքը , մեր կանայքը , այնպէս են կրթվում , որ իմանան հրապուրել մարդիկներին , եւ այլապէս լինել չէ կարող : Բայց դուք կասէք գուցէ սա միայն վատ կրթված աղջիկներին է վերաբերվում , որոնց արհամարհանքով օրիորդ ենք ասում , եւ թէ կայ ուրիշ լրջմիտ կրթութիւն — մինչեւ անգամ կլասիքական գիմնադիօններ , մանկաբարձութիւն , բժշկական եւ բարձրագոյն դասընթացներ : Սուտ է : Կանանց բոլոր կրթութիւններն , ինչպիսի եւ լինին , ի նկատի ունին միայն մարդիկներին գերի դարձնելը : Ոմանք գերի են

անում երաժշտութեամբ եւ մաղերի ծամերով, իսկ միւսներն — ուսումնականութեամբ եւ քաղաքացիական առաքինութեամբ: Իսկ նպատակը մի է, եւ չէ կարող չլինել մի, որովհետեւ ուրիշ նպատակ չկայ, նպատակը այր մարդուն հրապուրելն է, նորան տիրելու համար: Կարող է՞ք երեւակայել կանանց դասընթացներ եւ կանանց գիտնականութիւնն առանց այր մարդիկների մասնակցութեան այսինքն թէ կանայք գիտնական դառնան, այնպէս որ այր մարդիկ չիմանան: Ես չեմ կարող: Ոչինչ կրթութիւն, ոչինչ ուսումն չէ կարող այս հանգամանքը փոխել, քանի որ կոսմոս բարձրագոյն կատարելատիպն ամուսնութիւն կլինի, եւ ոչ թէ կուսութիւն եւ ցանկասիրութենից ազատութիւն: Մինչեւ այն ժամանակը նա ստրկուհի կմնայ:

Արժէ միայն մտածել (մտաւալով սոցա ընդհանուր բնոյթը) այն պայմանների մասին, որոնց մէջ կրթվումէ մեր օրիորդը, որ ոչ միայն զարմանանք մեր ապահովված դասակարգերի մէջ տիրող անառակութեան վերա, այլ ընդհակառակն կզարմանանք թէ ինչպէս դեռ եւս այնքան քիչ է անառակութիւնը: Հապա մի մտածեցէ՞ք. մանկական հասակից պաճուճանք, արդուզարդ, պարեր, երաժշտութիւն, ոտանաւորների, սիրապատումների ընթերցանութիւն, երգեցօղութիւն, թատրօններ, ներքին եւ արտաքին համերգեր այսինքն լսելով կամ անձամբ նուազելով: Սորա հետ կատարեալ ֆիզիքական պարապօրդութիւն, եւ մարմնի խնամատարութիւն, եւ ամենաքաղցր եւ իւզալի սնունդ: Մենք չգիտենք միայն այն պատճառով, որ այս ամենն թաքուն է

եւ ծածուկ, թէ ինչ են քաշում այս անբաղդ օրիորդները ցանկասիրութեան գրգռումից, տասից ինն տանջվումն եւ չարչարվում առաջին արբուներ միջոցին եւ յետոյ, եթէ քսանամեայ հասակն անցած չեն պահվում: Մենք ենք միայն, որ չենք կամենում տեսնել, իսկ ով որ աչքեր ունի, նա տեսնումէ, որ այս անբաղդների մեծամասնութիւնը այնքան զրգոված է այս ծածուկ (Լաւ է եթէ դեռ ծածուկ է) ցանկասիրութեամբ, որ ոչինչ չեն կարողանում անել, նոքա կենդանանումն միայն այր մարդիկների ներկայութեամբ: Ամբողջ նոցա կեանքն անցնումէ պնճասիրական պատրաստութիւններով եւ պնճասիրութեամբ: Այր մարդիկների ներկայութեամբ նոքա կենդանանումն չափից դուրս, սկսումն զգայական եռանդով ապրել, բայց այր մարդու հեռանալուն պէս եւ ամեն եռանդը կորչումէ եւ կեանքը վերջանում: Եւ այս ոչ թէ յայտնի մարդու, այլ ամեն միևի ներկայութեամբ, միայն թէ բոլորովին զազրալի չլինէին: Դուք կասէք. դա բացառութիւն է: Ոչ սա կանոն է: Միայն քանի մի օրիորդների մէջ այս աւելի ոյժով է յայտնվում, իսկ միւսների մէջ աւելի թույլ է, բայց նոքա ամենքը չեն ապրում բոլորովին իրանց կեանքով, այլ միայն կախումն ունենալով այր մարդիկներից: Իսկ մինչեւ որ այս չկայ, նոքա ամենքը միատեսակ են, եւ չեն կարող միատեսակ չլինել, որովհետեւ նոցա ամենքի համար, որքան կարելի է աւելի այր մարդիկներին հրապուրելն թէ օրիորդական եւ թէ ամուսնական կեանքի բարձրագոյն կատարելատիպն է: Եւ այս է պատճառ, որ նոքա կանացի մնախառութենից կամ

որքան կարելի է աւելի արուններին դէպի իրանց հրապուրելու իգական կարիքից աւելի հզօր զգացումն չունին, որպէս զի, ընտրութիւն անելու հնարաւորութիւն ունենան: Այսպէս է լինում օրիորդական կեանքում, այսպէս է շարունակվում եւ ամուսնական կեանքում: Օրիորդական կեանքում այս պէտք է ընտրութեան համար, իսկ ամուսնական կեանքում — այր մարդու վերա իշխելու համար: Մի բան միայն դադարեցնում է կամ խանգարում է առ ժամանակ այս ձգտումն երեխաները, այն եւս այն դէպքում, երբ կինը հրէշ չէ, այսինք ինքն է կերակրում: Բայց այստեղ դարձեալ բժիշկներ կան:

Իմ կինուջը, որը ինքն կամեցաւ կերակրել եւ կերակրում էր հետզհետէ հինգ մանուկներին, հիւանդութիւն պատահեց նոյն իսկ առաջին երեխային ծնելիս: Բժիշկները, որոնք մերկացնում էին եւ շննում նորան, որի համար, ես նոցա շնորհակալութիւն պիտի յայտնէի եւ դրամ վճարէի, այո, — այս սիրելի բժիշկները հասկացան, որ կինս պիտի չկերակրէր, եւ նա սկզբում զրկուած էր այն միակ միջոցից, որը կարող էր ազատել նորան պնճասիրութենից եւս: Կերակրում էր ստնտուն այսինքն մենք օգուտ քաղեցինք մի կնոջ աշխատութենից, կարօտութենից եւ ագիտութենից եւ իլեցինք իր երեխայից՝ մերի համար, եւ այս պատճառով ժպաւեհնազարդ ապարօջ հազցրինք նորան: Բայց բանն այս չէ: Բանն այն է, որ յղութենից եւ կերակրելուց իր այս ազատ միջոցում, նորա մէջ առանձին գօրութեամբ յայտնվեցաւ քուն մտած նոյն կանանցի պնճասիրութիւնը: Իմ մէջ եւս, սորան համեմատ առանձին գօրութեամբ յայտ-

նվեցաւ նախանձոտութեան տազնապը, որ առաջ եւս ունէի, բայց անհամեմատ թոյլ աստիճանով:

ԺԵ.

Այո, նախանձոտութիւնը սա ամուսնութեան ամենքին յայտնի եւ ամենքից թաքուցանելի գաղտնիքներից մէկն է: Բացի ամուսինների դէպի միմեանց ունեցած ատելութեան ընդհանուր պատճառից, որ առաջանում է մարդկային արարածին ապականելու երկուսի մասնակցելուց եւ դարձեալ ուրիշ պատճառներից, ամուսինների միմեանց հետ անդադար կուտելու ազբւրը նոյնպէս փոխադարձ նախանձոտութիւնն է: Սակայն փոխադարձ համաձայնութեամբ վճուված է այս թաքցնել ամենքից, ուստի եւ թաքցնվում է: Այս իմանալով իւրաքանչիւր իր մասին է կնթաղրում, թէ միայն իրան յատուկ անբաղդութիւնն է եւ ոչ թէ ընդհանուր յատկութիւն: Այսպէս պատահեց ինձ եւս: Արդարեւ այսպէս եւս պիտի լինի: Նախանձոտութիւնը չէ կարող չլինել միմեանց հետ անբարոյականապէս ապրօղ ամուսինների մէջ: Եթէ նոքա երկօքեան եւս չեն կարող գոհել իրանց հաճոյքը իրանց երեխայի բարօրութեան համար, ուրեմն երկօքեան եւս իրաւ են մակարելում, թէ նոքա ամենեւին չեն գոհի իրանց վայելչութիւնը, չեմ ասում բարօրութեան կամ հանգստութեան համար (որովհետեւ կարելի է մեղք գործել այնպէս որ չլիմանան), այլ միայն բարեխղճութեան համար: Իւրաքանչիւրը լաւ դիտէ միւսի վերաբերմամբ, որ դաւաճանելու զօրաւոր բարոյա-

կան արգելքներ չունին ոչ մին եւ ոչ միւսը , այս գիտեն նորանից , որ միասին են քանդում բարոյական պահանջմունք , ուստի եւ չեն հաւատում միմեանց եւ հակումեն միմեանց :

Ո՛հ , ինչ սարսափելի զգացում է նախանձոտութիւնը : Ես չեմ խօսում այն իսկական նախանձոտութեան մասին , որը գոնէ որեւիցէ հիմք ունի . եւ այն է իսկական տանջող նախանձոտութիւնը , բայց նա ունի մի ելք : Ես խօսումեմ այն անդիտակցական նախանձոտութեան մասին , որը անխուսափելի կերպով ուղեկից է ամենայն անբարոյական ամուսնութեանը , եւ սա չունենալով պատճառ չունի եւ վերջ : Մին ատամի ուսուցք է իսկ միւսը — ատամի ցաւ է իր ոսկրային անշարժ ցաւով , որ ցաւումէ գիշեր ցերեկ անդադար , եւ այսպէս անվերջ : Այս նախանձոտութիւնը զարհուրելի է , իսկապէս զարհուրելի է : Նախանձոտութիւնն այսպէս է . երբտասարգ մարդը խօսումէ կնոջն հետ , ժպտելով նաշումէ նորան եւ , ինչպէս ինձ թուումէ , զննումէ նորա կազմուածքը : Ինչպէս է համարձակում նա մտածել կնոջն վերա , մտածել թէ հնարաւոր է կնոջն հետ սիրահարական գործ ունենալ : Եւ կինս ինչպէս կարող է այս տեսնել եւ տանել : Բայց կինս ոչ միայն տանումէ , այլ երեւումէ , որ նա շատ գոհ է : Մինչեւ անգամ տեսնումեմ , որ իր բոլոր արածը նորա համար է : Եւ հոգուս մէջ այնպիսի ատելութիւն է բարձրանում կնոջն դէմ , որ նորա իւրաքանչիւր խօսքը , իւրաքանչիւր շարժուածքը զզուելի է դառնում : Կինս նկատումէ այս եւ չգիտէ ինչ անէ եւ սկսումէ անտարբեր աշխուժութիւն ցոյց տալ :

Հա , ես չարչարվումեմ , իսկ նորան այդ է ուրախացնում , նա շատ գոհ է : Եւ ատելութիւնը բազմապատկումէ , բայց չեա վստահանում ատելութիւնդ առաջ տանել , որովհետեւ հոգուդ խորքում գիտես , որ իսկական առիթներ չկան : Եւ նստած , անտարբեր ես ձեւանում , առանձին ուշադրութեան եւ քաղաքավարութեան երես ես ցոյց տալիս նորան : Յետոյ ինքդ քո վերա ես բարկանում եւ կամենումեա զուրս գալ սենեակից եւ նոցա միայնակ թողնել եւ արդարեւ զուրս ես գալիս : Բայց զուրս գալուն պէս քեզ սարսափ է տիրում թէ այնտեղ առանց քեզ ինչ է գործվում : Դարձեալ մտնումեա , որեւիցէ առիթ գտնելով , իսկ երբեմն չեա մտնում , այլ կանգնումեա դրան մօտ եւ ականջ դնում : Ի՞նչպէս է կարողանում կինն այնքան ստորացնել իրան եւ ինձ , որ եմթարկումէ — ո՛ւ՛՛՛՛՛ — ինձ այնպիսի կասկածաւորութեան եւ ականջ դնելու անարգ դրութեանը : Ո՛հ գարշութիւն : Ո՛հ վատ անասուն : Իսկ նա , նա : Նա ի՞նչ էր : — Նա այն էր , ինչ որ բոլոր այր մարդիկ , ինչ որ ես էի , երբ պսակված չէի : Նորա համար սա վայելչութիւն էր : Նա մինչեւ անգամ ժպտումէր , ինձ նայելիս , կարծես ասումէր . « ինչ անենք , այժմ իմ հերթն է » : Սոսկալի է այս զգացումը : Սոսկալի է այս զգացման թոյնը : Եթէ գէթ միանգամ թափէի այս զգացումս որեւէ մարդու վերա , եթէ կասկածէի մարդուն չար մտքեր ունենալու իմ կնոջ վերաբերմամբ , եւ յաւիտեան արդէն փշացած էր այն մարդն ինձ համար , կարծես ծծմբային թթուուտ վերան թափած : Բաւական կլինէր գոնէ միանգամ միայն նախանձոտութիւն

զգայի դէպի մարդը , այլ եւս երբէք ես չէի կարող նորոգել մարդկային պարզ յարաբերութիւններս դէպի նա :

Իսկ կնոջս , որի վերա շատ անգամ թափումէի այս ծծմբային թթուութեամբ , այս նախանձոտ ատելութիւնը , եւ արդէն բոլորովին անճոռնացրի : Դէպի կինս ունեցած այս իմ անհիմն ատելութեան միջոցում , ես նորան բոլորովին անպատուեցի , խայտառակեցի երեւակայութեանս մէջ : Ես երեւակայումէի բոլոր ամէն անհարին խաբէութիւններ նորա կողմից : Ես կասկած էի տանում նորա մասին այն , ինչ որ ամօթ է ասել թէ նա հազար եւ մի դիշերի այն թագուհու պէս , դաւաճանումէ ինձ , կապվելով սարկի հետ գրեթէ իմ աչքիս առաջ , ծիծաղելով վերաս : Այնպէս որ երբ նախանձոտութիւնս ինձ բռնումէր (դարձեալ անհիմն նախանձոտութեան մասին է խօսքս) , ես նորա մասին կանխակալ կեղտոտ կասկածների մէջ էի ընկնում , եւ հեռզհեռէ աւելի խոր եւ վատ կասկածներ էի յորինում : Մի եւ նոյն էր անում եւ կինս : Եթէ ես նախանձոտութեան հիմք ունէի , նա իմ անցեալս իմանալով հազար անգամ աւելի հիմք ունէր : Եւ նորա նախանձոտութիւնս աւելի վատ էր : Եւ նորա նախանձոտութեան պատճառով քաշած տանջանքներս բոլորովին ուրիշ եւ շատ ծանր էին : Այս այսպէս էր լինում . շատ ու քիչ հանգիստ ապրումները , մինչեւ անգամ ուրախ եմ եւ բաւական : Յանկարծ խօսք է բացվում ամենատոբոսկան բանի մասին եւ անա նա չէ համաձայնում , որի մասին նա առաջ միշտ համաձայն էր լինում . բացի սորանից ես տեսնումեմ , որ նա բոլորովին իզուր է գրգռվում : Կարծումեմ թէ նա լաւ տրամադրված չէ , կամ թէ նորան հաճելի չէ մեր խօսակցութեան նիւթը : Բայց խօսակցութիւնը սկսվումէ ուրիշ բանի մասին , եւ նորից նոյնն է , նորից խճճութիւններ է անում եւ նորից գրգռվում :

Ես զարմանումեմ , որնումեմ — Ինչ , ինչի : Նա լռումէ , պատասխանումէ մի մի բառ , կամ խօսումէ կարծես մի ինչ որ ակնարկելով : Ես սկսումեմ փոքր առ փոքր հասկանալ պատճառն , որ ես իբր զբօսնել եմ պարտեղում նորա հօրեղբօր ազջկան հետ , որի մասին եւ ոչ մտածել էի , եւ կամ մի ուրիշ այսպիսի պատճառ : Ես սկսումեմ գուշակել , բայց անկարելի է ասել : Ասելովս ես հաստատած կլինիմ նորա կասկածները : Ես սկսումեմ հարց ու փորձ անել : Նա չէ պատասխանում , այլ կարծումէ թէ ես հասկանումեմ եւ առաւել եւս հաստատվումէ իր կասկածների մէջ : — Ի՞նչ է եղել քեզ ասումեմ :

— Ոչինչ : Ես նոյն եմ ինչպէս որ միշտ , ասումէ , իսկ ինքն խելագարի պէս անմիտ , անբացատրելի եւ նենգամիտ խօսքեր է ասում :

— Ոչինչ : Ես նոյն եմ ինչպէս որ միշտ , ասումէ , իսկ ինքն խելագարի պէս անմիտ , անբացատրելի եւ նենգամիտ խօսքեր է ասում :

Համբերումես երբեմն , իսկ երբեմն համբերութիւնդ հասնումէ , գրգռվումես , այն ժամանակ նա գրգռված սկսումէ թափել յիշոցներ եւ յանդիմանումէ քեզ որ եւ իցէ երեւակայական յանցանքի պատճառով : Եւ այս բոլորը վերջին ատոիճանին հաղորած լաց ու կոծով , արտասուքներով եւ փախչելով անից ամենամտովոր տեղեր : Սկսումես որոնել : Ամաչումես մարդիկներից , երախաներից , բայց ինչ պիտի անես : Նա այն գրութեան մէջ է , որ զգումես թէ նա ամեն բանի համար պատրաստ է : Վաղվումես

նորա ետեւից , գտնումիս : Անցնումեն ցաւագին գիշերներ : Եւ երկուս Ղլերս մաշված վերջապէս , ամենասատոիկ բառերից եւ մեղադրանքից յետոյ , հանդարտումենք :

— Այո , նախանձոտութիւնը , անհիմն նախանձոտութիւնն ապականված ամուսնական կեանքի պայմանն է եւ ամբողջ իմ ամուսնական կեանքի մէջ երբէք չեմ դադարել նորան զգալուց եւ նորանով տանջվելուց : Բայց եղև են միջոցներ , երբ ես առաւել սատոիկ էի տանջվում սորանից : Երկու միջոց . մին — առաջին երեխայից յետոյ էր , երբ ընդօրինակ չթոյլատրեցին ծիծ տալ եւ կերակրումէր ծիծմայրը , ես առանձնապէս նախանձոտութիւն էի զգում նախ այն պատճառով , որ կինս զգումէր մօրը յատուկ այն անհանգստութիւնը , որը պիտի առաջանար կեանքի կանոնաւոր ընթացքն առանց պատճառի խանգարելուց : Իսկ գլխաւորապէս այն պատճառով , որ տեսայ թէ նա որքան հեշտութեամբ մերժեց մօր բարոյական պարտականութիւնը , ես իբրաւացի , թէ եւ անգիտակցաբար մակարեցի , որ նա նոյնպիսի հեշտութեամբ կարող է մերժել եւ ամուսնական պարտականութիւնը , մանաւանդ որ նա բոլորովին առողջ էր եւ չնայելով սիրելի բժիշկների արգելման , ինքն էր կերակրում հետեւեալ երեխաներին եւ շատ լաւ կերակրեց :

— Բայց եւ այնպէս դուք չէք սիրում բժիշկներին , ատացի ես , նկատելով երեսի եւ ձայնի առանձնապէս չար արտայայտութիւնն ամեն անգամ , երբ նա յիշումէր նոցա :

— Այո տեղ սիրելու կամ չսիրելու խնդիր չկայ :

Նոքա կործանեցին իմ կեանքս , ինչպէս որ կործանել են հազարաւոր մարդիկների կեանքը , իսկ ես չեմ կարող չկապել հետեւանքը պատճառի հետ : Հասկանումեմ , որ նոքա կամենումեն փաստարանների եւ ուրիշների պէս դրամ վաստակիլ եւ ես յօժարութեամբ կտայի նոցա եկամտիս կէսը եւ իւրաքանչիւրն , եթէ հասկանար նոցա արածը , յօժարութեամբ կտար նոցա իր ստացածի կէսը , միայն թէ նոքա չխառնվէին ընտանեկան կեանքի մէջ , երբէք մօտ չկային : Ես տեղեկութիւններ հաւաքած չեմ , բայց զիտեմ հարիւրաւոր դէպքեր — սոքա անթիւ են — երբ բժիշկները սպանել են կամ երեխային մօր արգանդում , հաւատացնելով թէ մայրը չէ կարող ծնել , թէպէտ մայրը յետոյ շատ լաւ է ծնել , կամ մայրերին որեւիցէ անդամահատութիւն պատճառելով . . . Ոչ ապաքէն այս ոչ ոք սպանութիւն չէ համարում . ինկվիզիցիայի վարմունքն եւս սպանութիւն չէին համարում , որովհետեւ ենթադրվում էր թէ նա մարդկութեան բարօրութեան համար էր : Անկարելի է թուել նոցա գործած յանցանքները : Բայց այս ամեն յանցանքներն ոչինչ են , համեմատելով նիւթապաշտութեան այն բարոյական ապականութեան հետ , որ նոքա մուծանումեն աշխարհի մէջ , մանաւանդ կանանց միջոցով : Չեմ ասում արդէն այն , որ եթէ նոցա հրահանգներին հետեւելու լինենք , այդ ժամանակ վարակիւիու երկիւղից մարդիկ ամեն տեղ , ամեն բանում ոչ թէ պիտի միանան , այլ բաժանվին : Նոցա վարդապետութեամբ , ամենքն առանձին պիտի նստին եւ բերանից դուրս չթողնեն Կարբօլեան թթուութի սրակիչը , (Սակայն

խնայելին , որ այս անօգուտ է) : Բայց այս եւս ոչինչ է : Գլխաւոր թոյնը մարդիկնեւրին , մանաւանդ կանանց ապականելու մէջ է : Այժմ այլեւս չէ կարելի ասել . դու վատ ես ապրում , լաւ ապրիր . — այս չես կարող ասել ոչ քեզ , ոչ ուրիշին : Իսկ եթէ վատ ես ապրում , պատճառը ջղերի անկանոնութիւնն է եւայլն : Եւ պէտք է գնալ նոցա մօտ , նոքա եւս կնշանակեն 35 կօպէկի դեղ դեղարանից եւ դու եւս կխմես : Գու աւելի վատ կգտնաս , գարձեալ դեղեր , գարձեալ բժիշկներ : Գեղեցիկ բան :

Բայց այս չէ խնդիրը : Ես այն էի ասում , որ կինս շատ լաւ էր կերակրում երեխաներին եւ թէ երեխաների այս կերակրելը եւ գրկելը , եւ առ հասարակ երեխաները չափաւորումէին նախանձոտութեանս տանջանքը , թէպէտ եւ ուրիշ տեսակ տանջանքներ էին առաջ բերում :

ԺԶ .

Երեխաներ ծնվեցան շուտ մին միւսից յետոյ եւ եղաւ այն , ինչ որ լինումէ մեր աշխարհում երեխաների եւ բժիշկների հետ : Այո , երեխաները , մայրական սէրը զէպի երեխաներն նայնպէս հեշտ բան չեն : Մեր աշխարհի կանանց համար երեխաներն ոչ ուրախութիւն են , ոչ պարծանք , ոչ իր կոչումը կատարելը , այլ երկիւղ , յուզումն , անդադար տանջանք , պատիժ : Կանայք ուղիղ այսպէս են ասում , այսպէս են մտածում , այսպէս են զգում : Եւ երեխաներն արդարեւ տանջանք են նոցա համար ոչ թէ այն պատճառով , որ նոքա չեն կամենում ծնել , կե-

րակրել եւ խնամել նոցա , — մայրական հօր բնազդմամբ կանայքը , որոնցից մին էր եւ կինս , պատրաստ են այս բանին , — այլ այն պատճառով , որ երեխաները կարող են հիւանդանալ եւ մեռնել : Կանայքը չեն կամենում ծնել նորա համար որ չսիրեն , իսկ սիրելուց յետոյ , չվախենան երեխայի կեանքի եւ առողջութեան համար : Սորա համար է , որ նոքա չեն կամենում կերակրել : Եթէ ես կերակրեմ , ասումնն , չափազանց կսիրեմ , յետոյ ի՞նչ կլինի , եթէ նա մեռնէ : Ուրեմն նոցա համար առաւել լաւ կլինէր , երբ իրենց երեխաները գուհսպերկուսից լինէին , այնպիսիներ , որոնք չկարողանային հիւանդանալ եւ մեռնել , եւ որոնց կարելի լինէր միշտ կարկատել : Այս ի՞նչ խառնափնդորութիւն է այս անբաղձների գլուխների եւ սրտերի մէջ : Ի՞նչի են գարշութիւններ անում , որ չծնեն : Նորա համար , որ չսիրեն : Սէրը , հոգու ամենուրախ դրութիւնը , վտանգաւոր է երեւում : Ի՞նչի : Որովհետեւ երբ մարդս մարդկօրէն չէ ապրում , նորա դրութիւնն անասնից շատ աւելի վատ է լինում : Չէ որ մեր կինը երեխային նայումէ միմիայն իրրեւ վայելչութիւն : Յաւալի է արդարեւ ծնելը , սակայն փոքրիկ ձեռներ . . . անխ այն ձեռներ , անխ այն փոքրիկ ստներ . . . անխ ժպտումէ : Ա՛խ բոլոր փոքրիկ մարմինը . . . Ախ համբուրումէ , հեծկտումէ : Մի խօսքով մօր անասնական զգացումն է եւ զգայասիրութիւն : Ոչինչ գաղափար չկայ նոր մարդկային արարածի երեւելու խորհրդաւոր նշանակութեան մասին , որը պիտի փոխարինէ մեզ : Չկայ այն , ինչ որ ասումնն եւ անումնն երեխայի վերա մկրտութեան

ժամին : Ոչ ապաքէն սորան ոչ ոք չէ հաւատում , մինչդեռ այս ոչ այլ ինչ է , եթէ ոչ երեխայի մարդկային նշանակութեան մի յիշատակութիւն : Այս թողել են , չեն հաւատում , բայց ոչնչով չփոխարինեցին , եւ մնացել են միայն ժապաւէնիներ , նորբ ասեղնագործեր , փոքրիկ ձեռներ , ոտներ : Մնացել է միայն այն , ինչ որ ունի անասունը : Բայց անասունը չունի ոչ երեւակայութիւն , ոչ նախատեսութիւն , ոչ դատողութիւն , ոչ բժիշկներ , այո , դարձեալ բժիշկներ : Հաւի վառիկը , կովի հորթը կատակեն , հաւը կկարկաջէ , կովը կգոչէ եւ կշարունակէ ապրել : Իսկ մեր մէջ կհիւանդանայ երեխան : Այս ի՞նչ է : Ի՞նչպէս բժշկել : Ո՞ր տեղ բժշկել : Ի՞նչ բժշկին հրաւիրել : Ո՞ւր գնալ : Իսկ եթէ կմեռնէ , որ տեղ են հապա փոքրիկ ձեռներ , ոտներ : Ի՞նչի համար էր այս ամենը : Ի՞նչի համար են այս տանջանքները : Կովը այս չէ հարցնում , սորա համար ահա երեխաները տանջանք են : Կովը երեւակայութիւն չունի եւ այս պատճառով նա չէ կարող մտածել թէ նա ինչպէս կփրկէր երեխային , եթէ այս կամ այն բանն անէր , ուստի կովի ցաւը իր Ֆիզիքական զրութեան հետ խառնվելով եւ որոշ , կարճ միջոցներով , մի տեսակ զրութիւն է եւ ոչ ցաւ , որը հասուցանվումէ յուսահատութեան աստիճանին , պարապ եւ կուշտ լինելով : Կովը խելք չունի , որ հարցնէր թէ ի՞նչի համար է այս : Ի՞նչի պիտի քաշէր բոլոր չարչարանքները , Ի՞նչի համար էր բոլոր սէրը , եթէ երեխան պիտի մեռնէր : Նա չունի դատողութիւն , որ ասէր թէ այնուհետեւ պէտք չէ ծնել , իսկ եթէ անակնկալ կծնես , պէտք չէ սիրել ,

ապա թէ ոչ , աւելի վատ կլինի իսկ այսպէս են դատում մեր կանայքը : Ուրեմն հետեւումէ , որ երբ մարդս չէ ապրում իբրեւ մարդ , նորա զրութիւնն աւելի վատ է լինում քան թէ անասնինը :

— Հապա ձեր կարծիքով ի՞նչպէս պէտք է վարվել մարդկօրէն երեխաների հետ , ես հարցրի .

— Ի՞նչպէս : Սիրել պէտք է մարդկօրէն :

— Հապա մի՞թէ մայրերը չեն սիրում իրանց զաւակներին :

— Չեն սիրում մարդկօրէն , գրեթէ երբէք չեն սիրում , ուրեմն շան նման եւս չեն սիրում : Դիտեցէք . հաւը , սագը , գայլը կնոջ համար միշտ կլինին անասնական սէրի անհասանելի օրինակներ : Շատ հազուադեպ կին կյարձակվի փղի վերա , կեանքը վտանգին ենթարկելով , նորանից իր զաւակին խլելու , բայց ոչ մի հաւ , ոչ մի ճնճուկ մի րոպէ եւս չէ վարանի շան վերա յարձակվելու եւ ամեն մէկն իր բոլոր անձն կտայ ձագերի համար , մինչդեռ հազուադեպ է այն կինը , որ այսպէս անէ : Նկատեցէք . կին - մարդուն հնարաւոր է չցոյց տալ իր Ֆիզիքական սէրը դէպի զաւակները , ինչ որ անասունը չէ կարող : Հապա մի՞թէ այս նորանից է , որ կինը անասնից աւելի ստոր է : Ոչ , այս նորանից է , որ նա աւելի բարձր է (աւելի բարձր խօսքը անկանոն է , ոչ թէ աւելի բարձր է , այլ կինն ուրիշ արարած է) , նա ուրիշ , մարդկային պարտականութիւններ ունի , նա կարող է զսպել իր անասնական սէրը , դարձնելով այս սէրը դէպի երեխայի հոգին : Ահա այս է յատուկ կին - մարդուն , եւ ահա այս է , որ երբէք չկայ մեր աշխարհում : Մենք կարդումնք այն մայ-

բերի հերոսութեան մասին, որոնք զոհել են զաւակներին մի բարձրագոյն բանի անուշով, եւ մեզ թուումէ թէ այս միայն առակներ են հին աշխարհից, որոնք մեզ չեն վերաբերվում: Մինչդեռ ես կարծումեմ, որ եթէ մայրը չունի այն, ինչի անուշով որ նա կարող է զոհել անասնական զգացմունքը զէպի իր երեխան, եթէ մայրը իր համար անգործադրելի այս հոգեւոր ոյժը կղարձնէ զէպի անկարելին կատարելու փորձերը — Ֆիզիքապէս իր երեխային պահպանելու, բժիշկներին իրան օգնական ունենալով այս գործում, այն ժամանակ նա շատ աւելի վատ կլինի եւ նա կչարչարվի, ինչպէս որ չարչարվումէ: Այսպէս պատահեց իմ կնոջս հետ: Մի էր երեխան թէ հինգ այս բոլորովին մի եւ նոյն էր: Նաեւ փոքր ինչ աւելի լաւ էր, երբ երեխաներն հինգ եղան: Ամբողջ կեանքը անդադար թունաւորված էր երկիւղով երեխաների մասին, նոցա իրական կամ երեւակայական հիւանդութիւններով եւ նոյն իսկ նոցա ներկայութեամբ: Ես գոնէ իմ ամուսնական կեանքի բոլոր միջոցում անդադար զգումէի, որ իմ կեանքս իմ բոլոր շահերով միշտ կախված է մազից եւ կախումն ունի երեխաների առողջութեանից, նոցա զրութենից, ուտումից: Երեխաները նշանաւոր բան են, խօսք չկայ, բայց ոչ ապաքէն ամենքը պիտի ապրեն: Իսկ մեր ժամանակում հասակաւորներին արդէն ապրել անկարելի է: Հասակաւորներին համար կանոնաւոր կեանք չկայ. ամբողջ ընտանեկան կեանքն այժմ իւրաքանչիւր բոպէ կախված է մազից, եւ ընտանեկան կեանք, ամուսինների կեանք չկայ: Ինչ նշանաւոր գործ որ ու-

նենաք, եթէ յանկարծ լուր էք ստանում թէ Վարդիկի սիրտը յետ եկաւ կամ Լիզան լուծեց արիւնով, բոլոր նշն բոպէին պիտի թողնվի, մոռացվի, ոչ ինչ դառնայ: Բոլորը ոչ ինչ է . . . նշանաւոր են միայն բժիշկները, զրեխը (օկնա), ջերմութեան աստիճանը: Թողնենք դեռ, որ երբէք չէք կարող խօսակցութիւն սկսել, որ ամենանետաքրքիր տեղ մտող չվազէր Պետոն անհանգիստ զէմքով հարցնելով թէ կարելի է արդեօք խնձոր ուտել կամ թէ ինչ պատմուճան հագնելու է, կամ թէ չէ եկել արդեօք ծրմայրը իր լացող երեխայով: Կանոնաւոր, հաստատ ընտանեկան կեանք չկայ: Թէ ինչպէս էք ապրում, որ տեղ էք ապրում, ուստի եւ ինչով էք պարապում — այս բոլորը կախումն ունի զաւակների առողջութենից, իսկ զաւակների առողջութիւնն ոչ ոքից կախում չունի, բայց բժիշկների շնորհով, որոնք ասումնն թէ նոքա կարող են օգնել առողջութեանը, բոլոր ձեր կեանքը ամեն բոպէում կարողէ բոլորովին խանգարված լինել: Կեանք չկայ: Այս մի տեսակ մշտնջենական վտանգ է, կրկին յուսահատական ջանքեր եւ կրկին փրկութիւն — անդադար նոյն զրութիւնն է, ինչ որ կործանվող նաւի մէջ է: Երբեմն ինձ թուումէր թէ այս դիմամբ էր անվում, թէ կինս առ երես էր երեւեցնում իրան անհանգիստ զաւակների մասին նորա համար, որ յաղթ էր ինձ. այնքան հրապուրելի պարզութեամբ էր վճռում այս բանը բոլոր խնդիրները յօգուտ նորան: Ինձ թուումէր այն ժամանակ, որ բոլորն, ինչ որ նա անումէր եւ ասումէր, բոլորն իմ վերաբերմամբ էին, բայց այժմ ես տեսնումեմ, որ նա ինքն, իմ կինս,

չարչարվումէր եւ պատժվումէր անդադար զաւակների հետ, նոցա առողջութենից եւ հիւանդութիւններից: Սա տանջանք էր նորա համար, նոյնպէս եւ ինձ համար: Սակայն, բացի սորանից զաւակները նորա համար դարձեալ ինքն իրան մոռանալու միջոց էին, — մի տեսակ արբեցութիւն: Շատ անգամ ես նկատումէի, երբ նա շատ արտում էր լինում, թեթեւութիւն էր զգում, երբ հիւանդանումէր երեսնան, որով կարողանումէր այս արբեցութեան յանձնը վել: Բայց արբեցութիւնն ակամայ էր. չէ որ ուրիշ ոչինչ չկար: Ամեն կողմից լավումէր թէ ա՛նա Եկատերինէ Սիմէօնեան երկու զաւակներից զրկըվեցաւ, իսկ Մ. Ն. ի զաւակներին այս ինչ բժիշկն ազատեց, իսկ այն մեռներն հիւրանոցներ քաշվեցան եւ նոյնպէս ազատեցին: Ի հարկէ բժիշկները ծանր ու բարակ հաստատումէին այս ամենը եւ պաշտպանում: Կինա ուրախ կլինէր, որ չվախենար, բայց բժիշկը մի խօսք ասաց — արիւնի վարակումն, կարմրուկ, կամ Տէր մի՛ արասցէ, կեղծամաշկ (տիֆտէրիտ), եւ ամեն բան կորաւ: Եւ ոչ ապաքէն այլապէս չէ կարելի: Եթէ նոքա հաւատ ունենային, ինչպէս հին ժամանակի կանայքը, թէ ինչ որ Աստուած տուեց, Աստուած եւս առաւ, թէ հրեշտակի հոգին գնումէ Աստուծու մօտ, թէ մեռած երեսայի համար աւելի լաւ է անմեղ մեռնել քան թէ մեղքերի մէջ մեռնել եւայն, որին հաւատումէին, մարդիկ, եթէ նոքա այս հաւատի նման մի բան ունենային, այն ժամանակ նոքա կարողանային աւելի հանդիստ տանել զաւակների հիւանդութիւնն, բայց այս ամենեւին չկայ, հետք եւս չկայ: Չկայ այս

հաւատը: Սակայն որեւիցէ հաւատ պէտք է լինի, ուստի նոքա հաւատումն, անմտաբար հաւատումն բժշկութեան, եւ ոչ թէ բժշկութեան, այլ բժիշկներին. մին-ի. ն. ին, միւսը պ. ի-ին, եւ իբրեւ հաւատացողներ, չեն տեսնում իրանց հաւատի անձոնութիւնն, հաւատումն quæ absurdum: Արդարեւ եթէ նոքա անիմաստաբար չհաւատային, ոչ ապաքէն կտեսնէին այն ամեն բանի անձոնութիւնն, ինչ որ պատուիրումն նոքա: Կարմրուկը վարակիչ հիւանդութիւն է, սորա համար մեծ քաղաքում ընտանիքի կէսը պիտի տեղափոխվի սեփական սնից հիւրանոց (մենք երկու անգամ այսպէս տեղափոխվեցանք): Բայց չէ որ քաղաքում իւրաքանչիւր մարդու մէջով անցնումն ամեն տեսակ վարակման թելերը, եւ ոչինչ արգելող ցանկապատ չկայ. հացագործ, գերձակ, կառապան, լուացարարուհի: Այնպէս որ ես յանձն եմ առնում գտնել իր սնից իրան յայտնի վարակման պատճառով ուրիշ տեղ տեղափոխվողի համար, այս նոր տեղում, նոյնչափ մօտ, ուրիշ կամ միեւնոյն վարակման աղբիւր: Բայց այս գեւ քիչ է: Ամենքը գիտեն այնպիսի հարուստներին, որոնք կեղծամաշկից (դիֆտէրիտից) յետոյ ամեն բան ոչնչացնումն իրանց սներում եւ որոնք նոր կահաւորված սներում նորից հիւանդանումն, նոյնպէս ամենքը գիտեն տանեակ մարդիկներին, որոնք հիւանդների հետ լինելով չեն վարակվում: Հապա լսեցէք միայն ինչեր են ասում: Մի կին ասումէ միւսին, թէ իր բժիշկը լաւ է: Միւս կինը պատասխանումէ. «Թողութիւն արէք, նա թունաւորեց սորան, նորան»:

Եւ ընդհակառակն : Հապա բերէք տիկնոջ մօտ գաւառական բժշկին , նա չի հաւատայ նորան : Բերէք կառքով այնպիսի բժշկին , որը բոլորովին միեւնոյնը գիտէ , նոյն գրքերով եւ փորձերով է բժշկում , եւ կասէ թէ իրան վճարելու է 100 մանէթ , — նա կհաւատայ :

Բանն այն է , որ մեր կանայքը վայրենի են : Նոքա Աստուծուն չեն հաւատում , ուստի ոմանք հաւատումն չար մարդիկներից մուծված ապականութեանը , իսկ ոմանք հաւատումն բժիշկ ի . ի-ին նորա համար , որ նա այցելութեան թանկ վճար է առնում : Եթէ նոքա հաւատ ունենային , կգիտենային , որ կարմրախտը եւ այլն ամենեւին այնքան սարսափելի չեն , որովհետեւ նոցանից չէ կարող կործանվել այն , ինչ որ կարող է եւ պարտական է սիրել մարդընոցին , այլ կարող է լինել այն , որից մեղանից ոչ ոք չէ կարող խուսափել — հիւանդութիւններ եւ մահ , բայց որովհետեւ դէպի Աստուած չունին հաւատ , նոքա միայն Ֆիզիքապէս են սիրում , եւ նոցա բոլոր ջերմուանդութիւնն ուղղված է առ այն , որ պահպանեն կեանքը , այն ինչ որ անկարելի է եւ ինչի մասին որ միայն բժիշկներն են հաւատացնում յիմարներին , մանաւանդ յիմար կանանց թէ նոքա կարող են փրկել : Ապա ուրեմն պէտք է նոցա կանչել :

Այնպէս որ զաւակների ներկայութիւնն ոչ միայն չէր բարւոքում մեր յարաբերութիւնները , չէր միաւորում , այլ ընդհակառակն բաժանումէր մեզ : Զաւակները միայն կռուի նոր առիթ էին : Այն ժամանակից , երբ զաւակներն եղան եւ որքան նոքա աւելի

մեծանումէին , այնքան աւելի կռուի գործիք էին լինում , մենք կարծես կռումէինք միմեանց դէմ զաւակներով : Մեղանից իւրաքանչիւրն ունէր իր սիրելի երեխայն իբրեւ կռուի գործիք : Ես կռուումէի առաւելապէս Վարդիկի (աւագի) հետ , իսկ կինս Ելիզայի հետ : Բացի սորանից , երբ զաւակներն սկսեցին մեծանալ եւ նոցա բնաւորութիւններն որոշվեցան , պատահեց այն , որ նոքա դաշնակիցներ դարձան , որոնց մենք քարշումէինք իւրաքանչիւրն իր կողմը : Նոքա խեղճերը չափազանց տանջվումէին սորանից , բայց մենք մեր անդադար աղմուկի մէջ փոյթ չունէինք նոցա մասին մտածելու : Աղջիկն իմ կուսակիցն էր , իսկ մեծ տղան , որը կնոջս էր նմանում , նորա սիրելին , շատ անգամ ատելի էր լինում ինձ :

ԺԷ.

Սկզբում ապրումէինք վիւղում , յետոյ քաղաքում : Եւ եթէ չպատահէր այն , ինչ որ պատահեց , եւ ես նոյնպէս ապրէի դեռ մինչեւ ծերութիւնս , այնպէս եւ կկարծէի մեռնելիս թէ լաւ կեանք եմ վարել , եթէ ոչ առանձնապէս լաւ , գոնէ ոչ վատ , այնպիսի կեանք , ինչպէս ամենքը : Ես չէի հասկանայ թշուառութեան այն անդունդը եւ այն գարշելի ստութիւնը , որի մէջ թաւալվումէի , բայց զգումէի , որ բանը լաւ չէ գնում : Զգումէի գլխաւորապէս այն , որ ես այր մարդ եմ , որը , իմ հասկացողութեամբ , պիտի իշխէր , որ ես , այսպէս ասած , կնոջս ձեռք տալն եմ ապրում եւ ոչ մի կերպով չեմ կարողանում

նորանից ազատվել : Ինձ այդ ձեռի տակ պահօղը գլխաւորապէս զաւակներն էին : Ես կամենումէի բարձրանալ , հաստատել իշխանութիւնս , բայց ոչ մի կերպով այս չէր գլուխ գալիս : Նա երեխաներ ունէր , եւ նոցա վերա յնյով իշխումէր : Ես այն ժամանակ չէի հասկանում թէ նա չէր կարող չիշխել , գլխաւորապէս այն պատճառով , որ պսակվելով բարոյապէս անհամեմատ աւելի բարձր էր , ինչպէս միշտ ամեն օրիորդ անհամեմատ աւելի բարձր է այր մարդուց , որովհետեւ անհամեմատ նորանից աւելի մաքուր է : Նկատեցէք մի զարմանալի բան , մեր կինը , մեր միջին կինը , մեր շրջանի միջին կինը , մեծ մասամբ շատ վատ արարած է առանց բարոյական հիմքերի , եսասէր է , պոռոտախօս է , պնդազուլու է , իսկ հասարակ աղջիկը , երիտասարդ աղջիկը մինչեւ 20 տարեկան մեծ մասամբ հիանալի արարած է , պատրաստ ամեն բանի , ամենագեղեցիկ եւ ամենաբարձր բանի : Այս ի՞նչից է : Պարզ է , այս նորանից է , որ այր ամուսիններն ապականումն , բարոյապէս իրանց հաւասարաչափ են ընդունում իրանց կանանց : Իսկապէս , եթէ տղաներ եւ աղջիկներ միակերպ են ծնվում , այնու ամենայնիւ աղջիկների առաւելութիւնը շատ մեծ է : Նախ , աղջիկը չէ ենթարկվում այն ապականիչ պայմաններին , որոնց մէջք ենք ենթարկվում : Նա չունի ոչ ծխել , ոչ խմել , ոչ թղթախաղ , ոչ ուսումնարաններ , ոչ ընկերութիւններ , ոչ ծառայութիւն , եւ երկրորդ եւ գլխաւորապէս — աղջիկը մարմնով մաքուր է : Այս պատճառով աղջիկը , պսակվելիս , միշտ իր այր մարդուց առաւել բարձր է : Նա առաւել բարձր է այր

մարդուց թէ աղջիկ լինելով եւ թէ կին դառնալով մեր շրջանում , որ տեղ այր մարդ կարեւորութիւն չունի իր ապրուստն անմիջնորդապէս հայթայթելու , եւ նորանից առաւել բարձր է դառնում մեծ մասամբ նոյնպէս եւ այն իր կատարած նշանաւոր գործով , երբ սկսումէ ծնել եւ կերակրել : Կինը , ծնելով եւ կերակրելով , պարզ տեսնումէ , որ նորա գործն առաւել նշանաւոր է քան թէ այր մարդու գործը , որը ատենակալ է հողային ժողովի , դատարանի , ծերակոյտի մէջ : Նա զիտէ , որ այս ամէն գործերի մէջ մի բան միայն նշանաւոր է գրամ ստանալ այն գործերի համար : Իսկ զրամ ստանալ կարելի է ուրիշ զանազան եղանակներով , ուստի նոյն իսկ նորա արած գործն անկասկած այնպէս անհրաժեշտ չէ , ինչպէս երեխային կերակրելը : Ուրեմն կինն անշուշտ առաւել բարձր է այր մարդուց եւ պիտի իշխէ նորան : Իսկ մեր շրջանի այր մարդը ոչ միայն այս չէ խոստովանում , այլ ընդհակառակն կնոջ վերա նայումէ միշտ իր մեծութեան բարձրութենից , արհամարհելով նորա գործունէութիւնը :

Այսպէս եւ կինս արհամարհումէր ինձ իմ հողային գործունէութեամբ այն հիմամբ , որ նա ծնումէր եւ կերակրումէր երեխաներին : Իսկ ես այր մարդիկների սահմանված հայեացքներով պաշտպանվելով , կարծումէի թէ կանացի գործերը — խանձարուբները , ծծերը , ծծակները , ինչպէս որ կատակով ասումէի , բոլորովին արհամարհական գործունէութիւն է , որը կարելի է եւ պէտք է ծաղրել . « կին — մարդիկի գիտեն , ինչպէս կվարվին » : Այնպէս որ բացի ուրիշ ամեն պատճառներից մեզ բաժանումէր նոյնպէս փո-

խաղարձ արհամարհանքը : Յարաբերութիւններն
 հետզհետէ առաւել թշնամական էին դառնում եւ
 վերջապէս այն տեղ հասաւ , որ ոչ թէ անհամաձայ-
 նութիւնն էր առաջացնում թշնամութիւն , այլ թշնա-
 մութիւնն էր առաջ աջնում անհամաձայնութիւն :
 Ինչ որ ասէր նա , ես առաջագոյն արդէն անհամա-
 ձայն էի , նմանապէս եւ նա : Չորրորդ տարին եր-
 կուստեք մի կերպ ինքն իրան վճռփեցաւ , որ հոգե-
 ւոր միութիւն չկայ եւ չէ կարող լինել , եւ այլ եւս
 փորձեր չէինք անում : Ամենահասարակ գործերի մա-
 սին մենք անփոփոխ էինք մնում իւրաքանչիւրն իր
 կարծիքով եւ փորձ չէինք անում մինչեւ անգամ
 միմեանց համոզելու : Բոլորովին օտար անձների հետ
 թէ ես թէ նա խօսումէինք բազմատեսակ եւ մտե-
 րիմ բաների վերա , բայց միմեանց հետ երբէք : Եր-
 բեմն լսելով թէ նա ինչպէս էր խօսում իմ ներկա-
 յութեամբ ուրիշների հետ , ես ինքս ինձ ասումէի .
 տես , տես , եւ բոլորը սուտէ ասում : Եւ ես զար-
 մանումէի թէ ինչպէս նորա խօսակիցը չէր տես-
 նում , որ նա սուտ է ասում : Երկուսով մենք ստիպ-
 ված էինք լռել , կամ այնպիսի խօսակցութիւն ա-
 նել , որ — ես համոզված եմ — անասուններ կարող
 են անել միմեանց հետ : «Քանի ժամ է , ժամանակ է՞
 քնելու : Այսօր ի՞նչ ճաշ ունինք : Ո՛ւր պէտք է
 գնայ : Ի՞նչ է գրված լրագրի մէջ : Ուղարկելու է
 բժշկին կանչելու : Լիզայի կոկորդն է ցաւում» :

Արժէր մի մազի չափ դուրս դալ մինչեւ անհնա-
 րաւոր համառօտութեան հասցրած խօսակցութեան
 այս նեղ շրջանից , որ զայրոյթ բորբոքվէր : Երրորդ
 անձի ներկայութիւնը թեթեւութիւն էր տալիս մեզ :

Երրորդ անձի միջոցով մենք դեռ ինչպէս եւ իցէ հա-
 զորդակցվումէինք : Նա իրան համարումէր միշտ եւ-
 բեւի բոլորովին արդար իմ առաջ , իսկ ես ինձ հա-
 մար միշտ սուրբ էի նորա առաջ իմ աչքում : Այն
 պտուղներ , ինչին որ մենք սէր էինք ասում , յա-
 ճախ էին լինում , ինչպէս առաջագոյն , բայց նոքա
 աւելի մերկ , աւելի կոպիտ , առանց որեւէ վարա-
 գոյրի էին լինում : Սակայն այս միջոցները տեւողա-
 կան չէին եւ անմիջապէս նոցա փոխանակումէին
 զայրոյթի միջոցներ առանց որ եւ իցէ պատճառի ,
 այնպիսի զայրոյթի , որ սնունդ էր առնում բոլորո-
 րովին անհասկանալի առիթներից : Լինումէին կոիւ-
 ներ եւ ատելութեան արտայայտութիւններ սրձի ,
 սփռոցի , կառքի , թղթխաղի պատճառով — բոլորն
 այնպիսի գործեր են , որոնք ոչ մինի , ոչ միւսի հա-
 մար չէին կարող ոչինչ նշանակութիւն ունենալ : Իմ
 մէջ գոնէ սարսափելի ատելութիւն էր եղում դէպի
 նա : Ես նայումէի , նա ինչպէս էր թէյ լցնում , ոտը
 շարժում , զգալը բերանին տանում , թէյը խմում ,
 եւ ատումէի նորան սորա համար , ինչպէս ամենա-
 վատ մի արարքի համար : Ես չէի նկատում այն ժա-
 մանակ , որ զայրանալու շրջանները առաջանումէին
 բոլորովին կանոնաբար եւ հաւասարապէս այն շրջան-
 ների համեմատ , ինչ որ մենք սէր էինք անուա-
 նում : Սէրի շրջան — զայրոյթի շրջան : Այն ժա-
 մանակ մենք չէինք հասկանում , որ այս սէրը եւ
 զարոյթը մի եւ նոյն անասնական զգացմունք էին ,
 միայն զանազան ծայրերից : Այսպէս ապրելը սար-
 սափելի կլինէր , եթէ մենք հասկանայինք մեր դու-
 թիւնը , բայց մենք չէինք հասկանում , չէինք տես-

նում նորան : Մարդու թէ փրկութիւնը թէ պատու-
հասը սորա մէջ է , երբ նա անկանոն է ապրում , որ
նա կարող է մշուշապատ լինել , իր գրութեան թըշ-
ուառութիւնը չտեսնելու համար : Այսպէս էինք ա-
նում մենք եւս : Նա աշխատումէր մոռացման տալ
Չանահնար , միշտ շտապողական զբաղմունքով .
տեսնեսութեամբ , կարգուսարքով , իր եւ մանուկնե-
րի արդուզարդով , մանուկների ուսմամբ եւ գլխա-
ւորապէս առողջութեամբ : Այս ամենն այնպիսի
զբաղմունք էին , որոնք ուղղակի կարեւորութենից
չէին ծաղուժ , իսկ նա այնպէս էր միշտ վերաբերում
նոցա , կարծես թէ նորա եւ մանուկների կեանքը
կախված էր նորանից , թէ արգանակի կարկանդակ-
ները կարմրացած չեն , վարագոյրը կախված չէ ,
զգեստը վերջացած չէ , դասը սովորած եւ որ եւ է
դեղ խմված չեն : Ինձ պարզ էր , որ այս ամենը նո-
րա համար գլխաւորապէս մոռացման միջոց էր , ար-
բեցութիւն էր , նոյնպէս ինչպէս որ ինձ համար
ճառայութեան , որսորդութեան եւ թղթախաղի ար-
բեցութիւնը : Ճշմարիտ է , բացի սորանից եւ ար-
բումէի բուն մտքով . ծխախոտով , որ ես անչափ
ծխումէի , եւ գինով , որով ես չէի արբում , բայց
խմումէի ճաշելուց առաջ օղի , եւ ճաշելիս երկու
բաժակ գինի , այնպէս որ շարունակ մշուշը ծած-
կումէր մեզանից մեր կեանքի անկանոնութիւնը :

Քնածութեան (չիպնոսիզմի) , հոգեկան հիւան-
դութիւնների , ջղացաւի նոր տեսականութիւնները —
այս բոլորը ոչ թէ հասարակ , այլ միասակար , վատ
յիմարութիւն է : Իմ կնոջ մասին Շարկոն անշուշտ
կասէր թէ նա ջղացաւի է եւթարկված , իսկ իմ մա-

սին կասէր թէ իմ մէջ մի բան խանգարված է , եւ
երեւի կոկէր բժշկել : Սակայն այստեղ բժշկելու
բան չկար : Այս մեր բոլոր հոգեկան հիւանդութիւնն
առաջանումէր պարզապէս նորանից , որ մենք ան-
բարոյական կերպով էինք ապրում : Անբարոյական
կեանքը մեզ համար ցաւ էր , իսկ այս ցաւը խեղ-
դելու համար , մենք զանազան տեսակ անկանոն բա-
ներ էինք անում , իսկապէս այն , ինչին որ բժիշկ-
ները հոգեկան հիւանդութեան նշաններ — ջղացա-
ւն ասում : Այս հիւանդութիւնների բժշկութիւնը
Շարկոն չունի , նոքա չունին : Այս չէ կարելի բժշ-
կել ոչինչ ազդարարութիւններով եւ բրօմերով , այլ
պէտք է պարզ տեսնել թէ ինչից է ցաւը , միեւնոյնէ
եթէ զամի վերա նստես , կտեսնես զամը , կտեսնես
ինչ որ անկանոն է կեանքիդ մէջ , եւ կզաղարես այն
անելուց — ցաւը կվերջանայ եւ ոչինչ չի մնայ խեղ-
դելու : Մեր կեանքի անկանոնութենից էր ցաւը .
թէ իմ նախանձոտութեան տանջանքը , թէ իմ դիւ-
րագրգռութիւնս , թէ իմ պէտքս պահպանելու ինքս
ինձ որսորդութեամբ , թղթախաղով եւ գլխաւորա-
պէս գինով եւ ծխախոտով , արբեցութեան մշտական
կացութեան մէջ : Այս անկանոնութենից էր նոյն-
պէս . նորա կրքոտ յարաբերութիւնը դէպի ամեն
զբաղմունքը , նորա տրամադրութեան փոփոխակա-
նութիւնը , — երբեմն տխրութիւն , երբեմն օտարո-
տի ուրախութիւն — նորա աւելորդաբանութիւնը , —
այս բոլորն առաջանումէր նորանից , որ նա անզա-
ղար պէտք ունէր անուշաղբի լինելու դէպի ինքն
եւ իւր կեանքը , մշտական արբեցութիւն որ եւ իցէ
գործերով , որոնք միշտ շտապողական էին : Այսպէս

էինք ապրում մշտատեւ մառախուղի մէջ, առանց տեսնելու այն դրութիւնը, որի մէջ գտնվումէինք: Մենք երկու միմեանց ատօղ, մի շղթայով կապված, միմեանց կեանքը թունաւորօղ եւ այս չտեսնել աշխատօղ տաժանակիրներ էինք: Ես դեռ եւս չգիտէի այն ժամանակ, որ հարիւրից 99 ամուսնացօղներ նոյնպիսի դժողքի մէջ են ապրում, ինչպէս ես էի ապրում եւ թէ այս այլապէս եւս չէ կարող լինել: Այն ժամանակ ես դեռ եւս չգիտէի այս ոչ ուրիշների, ոչ իմ վերաբերմամբ:

Զարմանալի է թէ ինչ զուգատիպութիւններ են լինում թէ կանոնաւոր եւ թէ նաեւ անկանոն կեանքի մէջ: Այն ժամանակ, երբ ծնօղների համար կեանքն անտանելի է դառնում միմեանց պատճառով, անհրաժեշտ են դառնում քաղաքային պայմանները մանուկների կրթութեան համար: Եւ ահա պէտք է լինում քաղաք տեղափոխվելու:

Այսպէս պատահեց մեզ եւս, եւ մենք տեղափոխվեցանք քաղաք: Նա լռեց եւ երկու անգամ օտարօտի ձայներ հանեց, որոնք այժմ արդէն բոլորովին նման էին ծածկված հեկեկանքին: Յետոյ նա մի ումպով խմեց մի բաժակ հովացած թէյ եւ շարունակեց:

ԺԸ.

Ահա եւ սկսեցինք քաղաքում ապրել: Քաղաքում անբաղդ մարդէկների համար աւելի լաւ է ապրել: Քաղաքում մարդս կարող է ապրել հարիւր տարի սե չըմբռնել այն, որ նա վաղուց է մեռել եւ փառել:

Ինքնաքննութեան ժամանակ չկայ, միշտ զբաղած է գործեր, հասարակական յարաբերութիւններ, առողջութիւն, գեղարհեստ, զաւակների առողջութիւն, նոցա կրթութիւն: Երբեմն պէտք է ընդունել այս ու այն ծանօթներին, գնալ սորա ու նորա մօտ, երբեմն պէտք է տեսնել սորա խաղը, լսել սորա կամ նորա ձայնը: Ոչ ապաքէն քաղաքում ամեն մի բոլոր պէ կայ մի կամ միանգամից երկու երեք երեւելի անձներ, որոնց ամենեւին չէ կարելի բաց թողնել: Երբեմն պէտք է բժշկել սեփական անձն, նորան կամ սորան, կամ ուսուցչին կամ վարժուհուն, իսկ կեանքը դատարկից դատարկ է անցնում: Ահա այսպէս էինք ապրում եւ կենսակցութեան ցաւը պակաս էինք զգում: Բացի սորանից, սկզբում հիանալի զբաղմունք ունէինք — կարգն ու սարքը նոր քաղաքում, նոր բնակարանում եւ դարձեալ տեղափոխութիւնների զբաղմունքը քաղաքից գիւղ եւ գիւղից քաղաք:

Անցուցինք մի ձմեռ, եւ միւս ձմեռը պատահեց նոյնպէս հետեւեալ, ոչ ոքին նկատելի, ջնչին երեւօղ, բայց այնպիսի հանգամանքը, որ եւ առաջ բերեց այն ամենն, ինչ որ եղաւ: Կինս առողջ չէր եւ գարշելիները թոյլ չտուին նորան ծնել եւ հնարներ սովորեցրին: Ես զգուումէի սորանից: Ես պատերազմում էի սորա դէմ, բայց նա թեթեւութեամբ, եւ կամակորութեամբ էր պնդում, եւ ես հնազանդեցայ: Խոզարարոյ կեանքն արդարացնելու վերջին միջոցը — զաւակները խափանվեցաւ, եւ կեանքն առաւել վատթարացաւ:

Ռամիլը, մշակը զաւակների պէտք ունի, ուստի

Նորա ամուսնական յարաբերութիւններն արգարացնել կարելի է : Իսկ մենք զաւակներ ունեցող մարդիկներս դեռ եւս զաւակների պէտք չունինք, նոքա աւելորդ հոգ են, ծախք են, ժառանգակիցներ են, նոքա ծանրութիւն են, եւ մեր խողային կեանքն արգարացնելն ամենեւին չէ կարելի : Սակայն մենք բարոյապէս այնքան ընկած ենք, որ հարկաւորութիւն անգամ չենք տեսնում մեզ արգարացնել : Ներկայ լուսաւորված աշխարհի մեծ մասը յանձնավումէ այս ապականութեանն առանց որ եւ իցէ խղճահարութեան : Խղճմտանքը չէ կարող սանջնել, որովհետեւ մեր կացութեան մէջ ոչինչ խղճմտանք չկայ բացի, եթէ կարելի է այսպէս ասել, հասարակական կարծիքի եւ քրէական օրէնքի խղճմտանքից : Իսկ այստեղ ոչ մին, եւ ոչ միւսը չեն զանց առնվում. խղճահարվելու հարկ չկայ հասարակութեան առաջ. ամենքն այս անուամեն. թէ Մ. Պ. թէ Ն. Չ. Հապա ինչ պէտք է աղքատներին բաղմացնել կամ անձն զրկել հասարակական կեանքի հնարաւորութենից : Քրէական օրէնքի առաջ խղճահարվել կամ նորանից վախենալ նոյնպէս հարկաւոր չէ : Անճոռնի աղջիկներն եւ կանայքն են ձգում երեխաներին լճակներ եւ ջրհորներ — նոցա, հասկանալի է, պէտք է բանտ նստեցնել, իսկ մեր մէջ ամեն բան իր ժամանակին է լինում եւ մաքուր :

Այսպէս անցուցինք մենք կեանքը դարձեալ երկու տարի : Գարշելիների հնարն արգարեւ սկսումէր ներգործել. կինս Ֆիզիքապէս գերացաւ եւ գեղեցկացաւ, ինչպէս ամառական վերջին գեղեցկութիւնը : Նա այս զգումէր եւ զբաղումէր իր անձով : Նա մի

տեսակ գրգռիչ գեղեցկութիւն ստացաւ, որն անհանգստացնում էր մարդիկներին : Նա երեսնամեայ, չծնող, պարարտացած եւ գրգռող կնոջ կատարեալ ոյժն ունէր : Նորա կերպարանքը երկիւղ էր ազդում, ինչպէս երկար հանդիւս, տաք, լծված մի ձի, որից սանձը առել են : Ոչինչ սանձ չունէր, եւ ոչինչ սանձ չունին մեր կանանցից հարիւրից 99ը : Եւ այս ես զգումէի :

ԺԹ.

Նորա երեսը բոլորովին փոխվեցաւ, խղճալի աչքեր, կարծես թէ բոլորովին իրան չլինէին, քիթը գրեթէ չէր երեւում, թէ ընչացքը թէ մօրուքը բարձրացել էին աչքերի մօտ եւ բերանը մեծ, անաղին էր դարձել : Այս այսպէս գերացաւ նա այն ժամանակից, երբ զաղարեց ծնել եւ այն հիւանդութիւնը — սարսափելի չարչարանք զաւակների մասին — սկսեց անցնել : Ոչ թէ անցաւ, այլ նա կարծես սթափվեցաւ արբեցութենից, մտքի եկաւ եւ տեսաւ, որ կայ մի ամբողջ լոյս աշխարհ իր ուրախութիւններով, որոնց մասին նա մտացել էր, լոյս աշխարհ, որի մէջ ապրել նա չգիտէր եւ որը նա ամենեւին չէր հասկանում : « Չլինի թէ բաց թողնեմ. կանցնէ ժամանակը, չես վերադարձնի » : Ինձ թուումէ թէ նա այսպէս էր մտածում կամ աւելի այսպէս էր զգում եւ չէր կարող նա այլապէս մտածել. եւ զգալ. կրթել էին այսպէս թէ աշխարհի մէջ մի բան միայն կայ ուշադրութեան արժանի — սէրը, Նա պահվեցաւ, ստացաւ այն սէրից փոքր բան, բայց ամենեւին այն չէ,

ինչ որ խոստացվում էր , ինչ որ սպասվում էր , այլ եւ շատ յուսաբեկութիւններ , չարչարանքներ , եւ մի եւ նոյն ժամանակ տանջանք — զաւակներ : Այս տանջանքը ոգեսպառ արեց նորան : Եւ ահա հաճոյակատար բժիշկների շնորհով նա իմացաւ , որ կարելի է առանց զաւակների եւս ապրել : Նա ուրախացաւ , փորձեց այս եւ նորից կենդանացաւ նորա համար միայն ինչ որ նա գիտէր — սէրի համար : Սակայն թէ նախանձոտութեամբ թէ ամենատեսակ չարութեամբ տաղտկալի ամուսնի հետ սէրն արդէն այն չէր : Նորան սկսեց պատկերանալ մի ուրիշ մաքուր , մի ուրիշ նոր սէր , գոնէ ես այսպէս էի մտածում նորա մասին : Եւ ահա նա սկսեց շուրջը նայել , կարծես մի բանի սպասելով : Ես այս տեսայ եւ չէի կարող չվրդովիլել : Շարունակ պատահում էր այն , որ նա , ինչպէս եւ միշտ , ինձ հետ ուրիշների միջնորդութեամբ խօսելիս , այսինքն ուրիշների հետ խօսելիս , բայց խօսքը ինձ դարձնելով , համարձակ յայտնում էր , ամենեւին չմտածելով , որ մի ժամ առաջ նա հակառակն էր ասել — յայտնում էր կէս կատակ , կէս լուրջ այն միտքը թէ մայրական հոգը խաբէութիւն է , թէ չարժէ կեանքը զաւակներին նուիրել , երբ կայ երիտասարդութիւն եւ կարելի է կեանքը վայելել : Նա պակաս էր զբաղում զաւակներով , եւ ոչ այնպիսի անձնուիրութեամբ , ինչպէս սուսաջ , այլ եւս առաւել զբաղում էր իր անձով , իր արտաքին տեսքով — թէպէտ նա թաքցնում էր այս բանը — եւ իր վայելչութիւններով եւ մինչեւ անգամ իր անձի կատարելագործութեամբ : Նա նորից սկսեց յափշտակ-

մամբ պարապել զաշնամուրով , որը առաջ բոլորովին ձգել էր : Սորանից սկսվեցաւ ամեն բան :

— Եկաւ այն մարդը . . . (նա չփոթվեցաւ եւ մի երկու անգամ քթից իր առանձին ձայները հանեց) : Ես մտածում էի , որ նորա համար տանջանք էր այն մարդու անունը տալ , յիշել , խօսել նորա մասին : Բայց նա ջանք գործ դրեց եւ կարծես կտրելով իրան արգելօլ խոչընդոտը , հաստատապէս շարունակեց : — Անպիտան մարդ էր նա — իմ աչքումս , իմ իմանալով , եւ ոչ թէ նորա համար թէ ինչ նշանակութիւն ստացաւ նա իմ կեանքի մէջ , այլ նորա համար , որ արգարեւ այնպէս էր : Սակայն նորա վատ լինելն ապացոյց էր միայն կնոջս չքմեղ դրութեանը : Այո , նա երաժիշտ էր , ջութակահար , ոչ արուեստավարժ երաժիշտ , այլ կէսարուեստավարժ , կէս հասարակական մարդ էր : Նորա հայրը կալուածատէր է , իմ հօրս զրացի է : Հայրն աղքատացաւ , եւ զաւակները — երեք տղաներ էին — ամենքը տեղաւորվեցան : Միմիայն կրտսերը — այս անպիտանը — ուղարկվել էր իր կնքամօր մօտ Փարիզ : Այնտեղ նորան տուել էին երաժշտանոց , որովհետեւ երաժշտութեան տաղանդ ունէր , եւ այնտեղից նա զուրս եկաւ ջութակահար եւ նուազում էր համերգների մէջ :

Երեւում էր , որ ցանկանալով նորա մասին մի վատ բան ասել , նա զսպեց իրան , կանգ առաւ եւ արագ ստաց :

— Է՛հ , ես այն չգիտեմ թէ նա ինչպէս էր ապրում : Գիտեմ միայն , որ այն տարին նա եկաւ Ռուսիա եւ եկաւ իմ մօտ : Նշաձեւ թաց աչքեր , ժըպ-

տող կարմիր շրթունք, ֆիքսատուար քսած ընչացքներ, վերջին մօղայով սանտրած մազեր: Դէմքը գուե՛ կոշտ սիրուն — այնպէս, որի մասին կանայք ասում են թէ տգեղ չէ, թէեւ թոյլ, բայց ոչ անճոռնի կազմուածքով, առանձնապէս զարգացած թիկունքով, կնոջ պէս: Բարեկիրթ, վերջապէս ընտանեանակ համարձակօղ որքան կարելի է, բայց արթուն եւ միշտ պատրաստ կանգնելու ամենափոքր ընդդիմութիւն տեսնելիս, բայց արտաքին արժանաւորութիւնը պահպանելով եւ այն առանձին փարիզեան նուրբ կոճակաւոր կօշիկներով եւ պայծառագոյն վզակապներով եւ ուրիշ այնպիսի բաներով, որոնք իւրացնում են օտար երկրացիներ Փարիզում եւ որոնք իրանց նորութեամբ եւ յատկութեամբ միշտ ներգործում են կանանց վերա: Վարմունքի մէջ շինծու զուարթութիւն: Սովորութիւն վերջապէս ամեն բանի մասին ակնարկութիւններով եւ ընդմիջելով խօսելու, կարծես թէ զուք այս ամեն բան վիտէք, մտաբերում էք եւ կարող էք ինքներդ լրացնել: Ահա նա էր իր երաժշտութեամբ ամեն բանի պատճառը: Բայց դատարանում գործն այնպէս էր ներկայացրած, թէ ամեն բան պատահելէ նախանձոտութենից: Ամենեւին ոչ, այսինքն ոչ թէ ամենեւին ոչ, այլ այդ է, բայց եւ այդ չէ: Դատարանում այնպէս եւ վճռվեցաւ թէ ես խարված ամուսին եմ եւ թէ սպանեցի, պաշտպանելով իմ ռանակոխ պատիւս (հապա այս այսպէս էր ասվում նոցա խօսքով) եւ սորա համար ինձ արգարացրին: Ես դատարանում աշխատում էի միտքը պարզել, բայց նոքա այնպէս էին հասկանում, թէ ես կամե-

նում եմ կնոջս պատիւը վերականգնել: Նորա յարաբերութիւններն այս երաժշտի հետ, ինչպէս եւ լինէին, ինձ համար իմաստ չունին, կնոջս համար եւս նոյնպէս: Իմաստ ունի այն, ինչ որ ես ձեզ պատմեցի: Բոլորը պատահեց նորանից, որ այն մարդն եկաւ այն ժամանակ, երբ մեր մէջ կար այն զարհուրելի անդունդը, որի մասին ես ձեզ ասացի, միմեանց դէմ ունեցած փոխադարձ ատելութեան այն զարհուրելի բորբոքումն, երբ բաւական էր առաջին առիթը ճգնաժամն առաջացնելու համար: Մեր մէջ կռիւնները վերջին ժամանակ մի զարհուրելի ձեւ էին ստանում եւ առանձնապէս զարմանալի էին, փոխանակվելով նոյնպէս բորբոքված անասնական կրքով:

Եթէ չգար նա, մի ուրիշը կգար: Եթէ նախանձոտութեան առիթը չլինէր, ուրիշը կլինէր: Ես պնդում եմ, որ բոլոր այր ամուսինները, որոնք ամուսնութեան մի եւ նոյն հիմքերով են ապրում, ինչպէս ես էի ապրում, պիտի կամ անառականան, կամ բաժանվին, կամ սպանեն իրանց կամ իրանց կանանց, ինչպէս որ ես արի: Եթէ կայ մին, որին այս չէ պատահել, այդ ուրեմն առանձնապէս հազուագիւտ բացառութիւն է: Չէ որ ես նախքան իմ վերջացնելը, ինչպէս որ վերջացրի, քանի մի անգամ ինքնասպանութեան ծայրն էի հասած, իսկ կինս նոյնպէս թունաւորվում էր:

Ի.

Որպէս զի զուք հասկանաք, պէտք է պատմել թէ այս ինչպէս էր լինում: Ահա, ապրում ենք:

Բողոքը կարծես լաւ է : Յանկարծ խօսակցութիւն է սկսուում մանուկները կրթութեան մասին : Չեմ յիշում ի՞նչ բառեր ասացի ես կամ՛նա , բայց վէճ , հակառակութիւններ են սկսուում : Սկսում ենք մի առարկայից միւս առարկայն թռչել , յանդիմանել . « Հապա այս վազուց յայտնի է , միշտ այդպէս է » , « Դու ասացիր » , « Ոչ ես չեմ ասել » , « Ուրեմն ես սուտ եմ ասում » , եւ այլն : Չգում ես , որ արդէն կսկսվի այն զարնուրելի կռիւը , երբ կամենում ես քեզ կամ նորան սպանել : Գիտես , որ իսկոյն կսկսվի , եւ վախենում ես սորանից իբրեւ կրակից , ուստի կկամենայիր զսպել քեզ , սակայն բարկութիւնը պաշարում է քո ամբողջ էութիւնդ : Նա մի եւնոյն , ոչ , աւելի վատ դրութեան մէջ է եւ հասկանում է , բայց դիտմամբ ուրիշ նշանակութիւն է տալիս քո իւրաքանչիւր բառին : Իսկ նորա իւրաքանչիւր բառը թոյնով լցուած է . բոլորն , ինչ որ ինձ համար թանկագին է — այս ամենն խայտառակում է կամ ապականում : Հետզհետէ եւս առաւել սաստկացնում է : Ես գոչում եմ . « Լաիր » կամ այսպիսի մի բան : Նա դուրս է թռչում սենեակից , վազում է դէպի մանկանոց : Ես աշխատում եմ նորան բռնել , որ խօսքս վերջացնեմ եւ ապացուցանեմ , եւ բռնում եմ նորա ձեռքից եւ ցաւեցնում : Նա ազաղակում է . « Մանուկներ , ձեր հայրը ծեծում է ինձ » : Ես գոչում եմ : « Սուտ մի՛ խօսեր : « Նա շարունակում է ինչ որ մի սուտ ասել միայն ինձ վիրաւորելու համար : « Չէ որ այս արդէն առաջին անգամ չէ » կամ սորա նման մի բան : Մանուկները վազում են նորա մօտ : Նա հանգստացնում է նոցա : Ես ասում եմ .

« Մի կեղծաւորեր » : Նա ասում է . « Քեզ համար բոլորը կեղծաւորութիւն է . դու մարդուն կապանես եւ կասես , թէ նա կեղծաւորում է : Այժմ ես ճանաչեցի քեզ դու այս ես կամենում » : « Ոչ , գոնէ սատակէիր » գոչում եմ ես : Մտաբերում եմ թէ ինչպէս սարսափեցրին ինձ այս զարնուրելի բառերը : Ես ամենեւին , չէի սպասում , թէ կկարողանամ այսպիսի զտրնուրելի , կոպիտ բառեր ասել , եւ զարմանում եմ թէ սոքա ինչպէս դուրս թռան բերանիցս : Ես գոչում եմ այս զարնուրելի բառերը եւ շտապով մտնում եմ առանձնասենեակս , նստում եմ եւ ծխում : Լսում եմ , որ նա դուրս է գնում նախասենեակ եւ կամենում է գնալ : Ես հարցնում եմ . « Ո՛ւր » : Նա չէ պատասխանում : « Է՛ն , սատանան նորան տանէ » ասում եմ , առանձնասենեակս վերադառնալով եւ նորից պառկում եմ եւ ծխում : Հազարաւոր զանազան նախագծեր թէ ինչպէս վրէժս հանեմ եւ ազատվիմ նորանից եւ ինչպէս այս ամէնն ուղղեմ եւ այնպէս անեմ , իբր թէ ոչինչ չէ եղած — գայիս են գլուխս : Եւ այս ամենը մտածում եմ եւ ծխում , ծխում , ծխում : Մտածում եմ փախչել նորանից , անյայտանալ , Ամերիկայ գնալ : Այնտեղ եմ հանում , որ երազում եմ թէ ինչպէս նորանից ազատված — եւ ինչպէս գեղեցիկ կլինի այս բոլորը — կկապվիմ ուրիշ գեղեցիկ բոլորովին նոր կնոջ հետ : Կազատվիմ նորանով , որ նա կմեռնէ , կամ նորանով , որ կբաժանվիմ , եւ հնարներ եմ մտածում թէ այս ինչպէս անեմ : Տեսնում եմ , որ ես շփոթվում եմ , այն չեմ մտածում , ինչ որ պէտք է , բայց որպէսզի չտեսնեմ թէ ես այն չեմ

մտածում, ինչ որ պէտք է — ծխում եմ:

Իսկ տան կեանքը ընթանումէ: Գալիս է վարժուհին, հարցնումէ. «Où est madame?». (Ո՞րտեղ է տիկինը): Ե՛րբ կվերագառնայ: Սպասաւորն հարցնումէ թէ բերէ՞ արդեօք թէյ: Գալիս եմ ճաշարան. մանուկներն այն տեղ են: Լիզան — աւագը — սարսափով, հարցական դէմքով նայումէ ինձ: Իսկ նա դեռ չկայ: Անցնումէ ամբողջ երեկոյ, իսկ նա չկայ: Եւ երկու զգացմունք փոխանակվումեն հոգուս մէջ. ատելութիւն դէպի նա, որ տանջումէ ինձ եւ մանուկներին իր բացակայութեամբ, որը կվերջանայ իր վերագարձով, եւ երկիւղ նորա մասին, որ նա կգայ եւ իր գլխին մի բան կբերէ: Սակայն ո՞ր տեղ որոնելու է նորան: Քրոջ մօտ: Բայց յիմարութիւն է — գնալ, հարցնել: Եւ Տէրը իր հետ լինի, եթէ նա կամենումէ տանջել, թող ինքն տանջվի: Իսկ եթէ նա քրօջ մօտ չէ, այլ մի բան է անում կամ արդէն արել է՞. 11, 12, 1 ժամ է, չեմ քնում, չեմ գնում ննջարան — յիմար բան է միայնակ այն տեղ պառկել եւ սպասել: Այս տեղ եւս չեմ պառկում, կամենումեմ մի բանով զբաղել. նամակներ գրել, կարդալ — ոչինչ չեմ կարողանում: Նստած եմ միայնակ առանձնասենեակումս, տանջվում եմ, զայրանումեմ, սկանջ եմ գնում: Նա չկայ: Լուռադէմին քնումեմ: Զարթումեմ — նա չկայ: Տանն ամեն բան հին կարգով է գնում, բայց ամենքը տարակուսանքի մէջ, հարցական դէպքով, իսկ մանուկներն յանդիմանական դէպքով նայումեն ինձ: Եւ նորից զգումեմ նոյն անհանգստութեան զգացում նորա մասին եւ ատելութեան զգացում այս անհանգստութեան

համար: Մօտ 11 ժամին գալիս է նորա քոյրը, նորանից պատգամաւոր: Եւ սկսվումէ սովորական «նա սարսափելի դրութեան մէջ է», «հապա այս ի՛նչ բան է», «բայց ոչինչ չէ պատահել»: Ես խօսումեմ նորա անհնարաւոր բնաւորութեան մասին եւ ասումեմ, որ ես ոչինչ չեմ արել եւ առաջին քայլը չեմ անի: Եթէ բաժանվել է, ուրեմն բաժանվինք: Քեներն լսել չէ կամենում այս միտքը եւ այսպէս առանց մի բանի գնումէ: Իմ վերաս մի յամառութիւն է գալիս, եւ ես յամարձակ ասացի, քեներու հետ խօսելիս, թէ առաջին քայլը չեմ անի, բայց երբ նա գնաց, եւ ես դուրս եկայ եւ տեսայ մանուկներին խղճալի, վախեցած դրութեամբ, ես արդէն պատրաստ էի առաջին քայլն անելու: Սակայն ես ինձ կաշկանդեցի իմ խօսքերով: Նորից չըրջումեմ, ծխում, խմում նախաճաշին օդի եւ գինի եւ այն բանին հասայ, ինչ որ անգիտակցաբար ցանկանումեմ իմ դրութեան յիմարութիւնը, անարգութիւնը չեմ տեսնում: Մօտ 3 ժամին նա գալիս է: Ինձ պատահելիս նա ոչինչ չէ ասում: Ես երեւակայումեմ թէ նա խաղաղացել է, սկսումեմ խօսել թէ ես գրգռված էի նորա նախատիքներով: Նա նոյն խիստ եւ զարհուրելի ընկճված դէմքով ասումէ, որ նա եկել է ոչ թէ բացատրութիւնների համար, այլ մանուկներին առնելու, թէ միասին ապրել մենք չենք կարող: Ես սկսումեմ ասել, որ մեղաւորը ես չեմ, թէ նա հատեցրեց համբերութիւնս: Նա խիստ — յողթական դէմքով նայումէր ինձ եւ յետոյ ասում. «Աւելի մի՛ խօսեր, դու կզղջաս»: Ես ասումեմ, որ ասումեմ կատակերգութիւնները: Այն ժա-

մանակ նա ինձ անհասկանալի մի բան է գոչում եւ վազում իր սենեակը : Յետոյ լավումէ բանալիքի ձայնը . նա դուռը կողպեց : Ես բախումեմ դուռը , պատասխան չկայ : Զայրացած դառնում : Կէս ժամից յետոյ Լիզան արտասուելով վազումէ դէպի ինձ : Ի՞նչ կայ , բան է՞ պատահել » : — « Մայրիկիւս ձայնը չէ լավում » : Գնումենք : Ես քարշումեմ դուռը որքան ոչոս կներէ : Նիզը վատ է դրված , եւ դրան երկու կողմեր բացվումեն : Ես մօտենումեմ մահճակալին : Նա ներքնազգեստով եւ բարձր կօշիկներով պռակած է անյարմար ձեւով ուշաթափ եղած : Սեղանի վերա դատարկ շիշ կայ ափիոնով : Ուշքի ենք բերում : Արտասուքներ եւ վերջապէս հաշտութիւն : Հաշտութիւնը չկայ . իւրաքանչիւրի սրտում երեւումէ զայրոյթ միմեանց դէմ , սակայն պէտք է ինչպէս եւ իցէ այս ամենին վերջ տալ առ ժամանակ — եւ կեանքը գնումէ հին կարգով : Ահա այսպիսի կռիւներն եւ առաւել վատեր լինումէին անդադար . երբեմն շաբաթը միանգամ , երբեմն ամիսը մի անգամ , ուրեմն ամեն օր : Եւ միշտ մի եւ նոյնը : Մի անգամ ես կամենում էի փախչել , բայց դարձեալ մի տեսակ թուլութեան պատճառով մնացի :

Ահա այսպիսի յարաբերութիւնների մէջ էինք , երբ եկաւ այն մարդը : Ծշմարիտ է , ապաշնորհ մարդ է , բայց ինչ կայ — այնպէս է , ինչպէս մենք ամենքս :

ԻԱ.

Գալով Մօսկվայ , այս պարոնը — նորա ազգանունն է Տրուխաչէվսկի — եկաւ իմ մօտ : Առա-

ւօտն էր : Ես ընդունեցի նորան : Մենք մի օր միմեանց դու էինք ասում : Նա փորձ արեց դուր եւ դուք դերանուշներ խառն գործածելուց յետոյ դուքի վերականգնել , բայց ես ուղղակի դուք ասելու միտքս հասկացրի եւ նա իսկոյն հպատակեց : Ես նորան ամենեւին չհաւանեցի : Տեսնելուս պէս հասկացայ , որ նա կեղտոտ անառակ էր եւ սկսեցի նախանձոտութիւն տածել դէպ ի նա նախքան իմ կնոջ տեսնելը : Սակայն օտարօտի բան է . մի օտարօտի , ճակատագրական ոչժը ստիպում էր ինձ , որ ես նորան չմերժեմ , չհեռացնեմ , այլ ընդհակառակս — մօտեցնեմ : Ոչ ապաքէն ամենահասարակ բան կլինէր , որ խօսէի նորա հետ , սառնութեամբ ճանապարհ դնէի , առանց կնոջն հետ ծանօթացնելու : Բայց չէ , ես կարծես դիտմամբ խօսք բացի նորա նուազելու վերա : Նա ասաց , թէ այժմ աւելի է նուազում քան թէ առաջ , հակառակ իմ լսածի , որ իբր թէ նա ջութակը ձգել էր : — Նա սկսեց մտաբերել , որ ես առաջ նուազում էի : Ես ասացի , որ ես այլ եւս չեմ նուազում , եւ թէ իմ կինս լաւ է նուազում :

— Զարմանալի բան է , ի՞նչի մեր կեանքի նշանաւոր իրողութիւնների մէջ , երբ վճռվում է մարդու վիճակը , ինչպէս որ ինձ համար էր վճռվում այն ժամանակ — ի՞նչի այս գործերի մէջ չկայ ոչ անցեալն , ոչ ապագան : Իմ յարաբերութիւնները դէպ ի նա նորա հետ տեսակցութեանս առաջին ժամին այնպէս էին , ինչպէս որ կարող էին միայն լինէր այն ամենից յետոյ , ինչ որ պատահեց : Ես նախազգացումն ունէի մի զարհուրելի անբաղդութեան ,

որ կապված էր այս մարդու հետ : Բայց չնայելով սորան , ես չէի կարողանում անոյշ չլինել նորա հետ : Ես ներկայացրի նորան կնոջս . կինս ըստ երեւոյթի՜ն ուրախացաւ , երեւի նախ միայն նորա համար , որ վայելչութիւն կունենայ ջութակի հետ նուագելու — այս նա շատ էր սիրում , այնպէս որ սորա համար ջութակահար էր վարձում թատրօնից : Բայց , ինձ տեսնելով , նա իսկոյն հասկացաւ զգացումս եւ իր արտայայտութիւնը փոխեց . եւ փոխադարձ խաբէութեան այս խաղը սկսվեցաւ : Ես հաճութեամբ ժպտում էի առ երեսս , ցոյց տալով թէ ինձ շատ հաճելի է : Այն մարդը , նայելով կնոջս վերա , ինչպէս նայում են բոլոր անառակները սիրուն կանանց վերա , ցոյց է տալիս իբր թէ նորան հետաքրքրում է միայն խօսակցութեան նիւթը այսինքն այն , ինչ որ նորան արդէն ամենուէն չէ հետաքրքրում : Կինս աշխատում էր անտարբեր երեւել , բայց նորան ծանօթ իմ նախանձոտութեան կեղծ - ժպտող արտայայտութիւնը նորա ցանկական հայեացքը , երեւում , զրգռում էին նորան : Ես անսայ , որ նոյն իսկ առաջին տեսակցութենից կնոջս աչքերն առանձնապէս փայլումէին եւ իմ նախանձոտութեան պատճառով , նորա եւ սորա մէջ իսկոյն սահմանվեցաւ կարծես մի էլէկտրական հոսանք , որ առաջացնումէր հայեացքի եւ ժպիտների նոյնանման արտայայտութիւնները : Մենք խօսեցինք երաժշտութեան , Փարիզի , ամենատեսակ մանր բաների վերա : Նա վերկացաւ զնայու եւ ժպտելով , զլխարկը ծնկին խփելով կանգնած էր — նայելով երբեմն կնոջս , երբեմն ինձ — կարծես սպասելով թէ մենք ինչ կանենք : Այս ես

մտաբերումեմ յատկապէս նորա համար , որ կարող էի չկանչել նորան : Ես կարող էի չկանչել նորան , եւ այն ժամանակ ոչինչ չէր լինի : Բայց ես նայեցի նորա վերա , կնոջս վերա : — « Եւ մի կարծեք թէ նախանձոտութիւն եմ զգում դէպի քեզ » մտքումս ասացի կնոջս եւ հրաւիրեցի նորան նոյն իսկ այսօր երեկոյեան բերելու ջութակը կնոջս հետ նուագելու համար : Կինս զարմացմամբ նայեց ինձ եւ կարմրեց եւ կարծես վախեցած , սկսեց հրաժարվել , առաց , որ նա բաւական լաւ չէ նուագում : Նորա այս մերժումն առաւել եւս զրգռեց ինձ : Մտաբերումեմ այն օտարօտի զգացումն , որով ես նայումէի նորա պարանոցին , սպիտակ վզին , որը բաժանվումէր երկու կողմ սանտրած սեաւ մագերից , երբ նա իր թռչկոտող , մի տեսակ թռչնի ընթացքով դուրս էր գնում մեզանից : Ես չէի կարող չխոստովանել , որ այս մարդու ներկայութիւնը չարչարումէր ինձ : Ինձանից է կախված , մտածումէի , այնպէս անել , որ նորան չտեսնեմ : Բայց միթէ ես , ես վախենումեմ նորանից : Ոչ , ես չեմ վախենում նորանից : Այս չափազանց ստորութիւն կը լինէր , ասումէի ինձ ու ինձ : Եւ նոյն տեղ նախասենեակում , իմանալով , որ կինս լսումէ խօսքերս , ես թախանձեցի , որ նա այսօր եւ եթ երեկոյեան զար ջութակով : Նա ինձ խոստացաւ եւ զնայ : Երեկոյեան նա եկաւ ջութակով , եւ նոքա նուագումէին : Բայց նուագն երկար չէր յաջողում , չկային այն ձայնազրեր , որոնք հարկաւոր էին նոցա , իսկ որոնք կային , կինս չէր կարողանում նուագել առանց պատրաստութեան : Ես շատ սիրումէի երաժշտութիւն եւ համակրումէի նոցա նուա-

գելուն, առաջարկումէի, օգնումէի: Եւ փոքր ինչ նորա նուագեցին: Քանի մի երգեր առանց բառերի եւ Մօցարտի փոքրիկ սօնատը: Նա հիանալի կերպով էր նուագում. եւ ինչպէս որ ասվումէ զօրաւոր ձայն եւ քնքշութիւն ունէր: Իսկ զփուարութիւններ չկային նորա համար: Նուագել սկսելուն պէս նորա զէմքը փոխուեցաւ. նա դարձաւ լուրջ եւ շատ աւելի համակրելի: Նա ի հարկէ կնոջիցս շատ աւելի ուժեղ էր եւ օգնումէր նորան պարզ եւ բնական կերպով եւ մի եւնոյն ժամանակ քաղաքավարութեամբ գովումէր նորա նուագը: Կինս երեւումէր միմիայն երաժշտութեամբ դրաւված եւ շատ պարզ եւ հաճելի էր: Ամբողջ երեկոն ես ինքս երեւումէի ոչ միայն ուրիշներին, այլ նոյն իսկ իմ աչքին միայն երաժշտութեամբ դրաւված: Իսկ իրապէս առանց զաղարելու տանջվումէի նախանձոտութեամբ: Առաջին բոպէից, երբ նորա աչքերն հանդիպեցան կնոջս, ես տեսայ, որ նա նայումէր սուրան իբրեւ հաճելի կնոջ, որի հետ զէպքը ներկայանալիս անհաճելի չէ կապակցութիւն ունենալ: Եթէ ես մաքուր լինէի, չէի մտածի այն թէ նա ինչ է մտածում կնոջս մասին, բայց ես կանանց մասին նոյնպէս եմ մտածում, ինչպէս մեծամասնութիւնը, ուստի հասկանումէի նորան եւ տանջվումէի սորանով: Ես տանջվումէի մանաւանդ, որ աներկբայ տեսնումէի, թէ զէպի ինձ կինս միմիայն անդադար զրգօնելու եւ զայրացնելու զգացումն ունէր, որ միայն սակաւ անգամ ընդհատվումէր սովորական զգայասիրութեամբ, եւ թէ այն մարդը թէ իր արտաքին բարի վայելչութեամբ եւ նորութեամբ եւ թէ

գլխաւորապէս իր անկաակածելի մեծ երաժշտական տաղանդով, թէ միատեղ նուագելուց առաջացող մերձաւորութեամբ, թէ զիւրազգայ բնոյթների վերա երաժշտութեան, մանաւանդ ջութակի ներգործող ազդեցութեամբ, թէ այն մարդը պիտի յաղթէր կնոջս եւ դարձնէր նորան այն, ինչ որ կկամենար: Ես չէի կարող այս շտեմնել եւ չէի կարող շտանջվել եւ նախանձոտութիւն չզգալ: Եւ ես զգումէի նախանձոտութիւն եւ սարսափելի կերպով տանջվումէի, բայց չնայելով սորան կամ զուցէ այս պատճառով — մի ոյժ իմ կամքի հակառակ ստիպումէր ինձ նորա հետ առանձնապէս ոչ միայն քաղաքավարութեամբ, այլ անուշութեամբ վարվել: Կնոջս համար էի անում այս արգեօք, որ ցոյց տամ թէ ես չեմ վախենում նորանից, թէ ինձ համար արգեօք, որ խաբէմ ինքս ինձ — չգիտեմ, միայն ես չէի կարողանում, նոյն իսկ իմ առաջին յարաբերութիւնների օրից նորա հետ, պարզ լինել: Ես ստիպված էի փաղաքշել սուրան, որպէս զի անձնատուր չլինիմ նորան իսկոյն սպանելու ցանկութեանը: Ես գինի էի խմեցնում նորան ընթրիքին, հիանումէի նորա նուագածութեամբ, առանձին քաղցր ժպտով խօսումէի նորա հետ եւ կանչեցի նորան հետեւեալ կիրակի ճաշելու եւ նուագելու: Ես ասացի, որ իմ ծանօթներից ումանց — երաժշտասէրներին — կկանչեմ նորան լսելու: Երկրորդ կամ երրորդ օրն այն օրից յետոյ, մի տեղից վերադառնալիս, մանուկեմ նախասենեակ եւ ծանօթիս հետ խօսում, եւ յանկարծ զգումեմ, որ մի ծանր բան քարի պէս ընկնումէ արտիս վերա եւ չեմ կարողանում հաշիւ տալ թէ այս ինչ էր: Այս

այն էր, որ նախասենեակով անցնելիս, ես նորան նամանութիւն տուող ինչ որ մի բան նկատեցի: Մի- այն առանձնասենեակումս ես ինձ հաշիւ տուի թէ ի՞նչ էր այն եւ նախասենեակ վերադարձայ ստուգելու: Այո, ես չէի սխալվել — այդ նորա վերարկուն էր: (Բոլորն, ինչ որ նորան էր վերաբերվում, թէ եւ այս բանում ես ինձ հաշիւ չէի տալիս, գերօրինակ ուշադրութեամբ նկատեցի): Հարցնումեմ — ճիշդ այնպէս է, նա այստեղ է: Անցնումեմ հիւրասենեակի մօտով դասարանի մէջով: Լիզան — աղջիկս նստած գիրք է կարդում, իսկ դայեակը փոքրիկի հետ սեղանի մօտ մի խուփ է պտտեցնում: Հիւրասենեակից լսումեմ միակերպ arpeggio (Չութակի լարերի մին միւսից յետոյ արագ արագ հարումն) եւ նորա քաջ ձայնը եւ կնոջս մերժումն: Կինս մի բան ասաց, «բայց չէ, չէ», եւ դարձեալ մի ինչ որ ասաց: Կարծես մի ոք դիտմամբ պիանօի վերս անլսելի է անում բառերը: Տէր Աստուած իմ, ի՞նչ կատարվեցաւ այն տեղ իմ մէջ: Ի՞նչ պատկերացրի ես ինձ: Երբ մտաբերումեմ այն գազանին, որը ապրում էր իմ մէջ, սարսափն ինձ բռնում է: Սիրտս անմիջապէս ձմրվեցաւ, կանգնեց եւ յանկարծ սկսեց կարծես մուրճով խփել: Գլխաւոր զգացումն, ինչպէս լինում է միշտ ամեն սրտնեղութեան մէջ, սեփական անձը ինայելն է: Մ'անուկների, դայեակի ներկայութեամբ . . . մտածում էի: Նա խայտառակում է ինձ այնպէս, կարծես հասկանում էր եւ խորհուրդ էր տալիս երկու աչքով նայելու: Բայց չէ կարելի չճշտանել, ասացի ինձ ու ինձ եւ ուշքս վերաս չունենալով բացի դուր: Նա նստած էր պիանօի մօտ, այն

arpeggioներ էր անում իր դէպի վեր ծուլած խոշոր սպիտակ մատներով: Կինս կանգնած էր պիանօի անկիւնում, բաց ձայնագրերի առաջ: Առաջինն կինս տեսաւ կամ լսեց ինձ եւ նայեց ինձ: Արդեօք վախեցաւ, արդեօք կեղծեց թէ չվախեցաւ կամ թէ ստոյգ նա չվախեցաւ, բայց նա չսարսուեց, չչարժվեցաւ, այլ միայն կարմրեց, այն եւս յետոյ: «Ինչպէս ուրախ եմ, որ դու եկար: Մենք չորոշեցինք թէ ինչ նուագենք կիրակի», ասաց նա այնպիսի ձայնով, որով նա չէր խօսի ինձ հետ, եթէ մենք միայնակ լինէինք:

Այս հանգամանքը եւ կնոջս՝ իր եւ նորա համար «մենք» ասելը վրդովեցրեց ինձ: Ես լուռ ողջունեցի նորան: Նա իսկօյն ձեռս սեղմեց այնպիսի ժպիտով, որն ինձ ուղղակի հեգնական երեւցաւ, սկսեց յայտնել ինձ, թէ նա բերած է ձայնանիշներ կիրակէի համար պատրաստելու եւ թէ իրանց մէջ անհամաձայնութիւն կայ ի՞նչ նուագելու մասին, արդեօք աւելի դժուար կլաստիքական այսինքն Բէթհօվէնի սօնատը Չութակով թէ մանր կտորներ: Եւ այս ասելիս նա նայեց կնոջս: Բոլորն այնպէս բնական եւ պարզ էր, որ չէր կարելի խճրճելու մի բան գտնել, եւ միեւնոյն ժամանակ ես տեսայ եւ համոզված էի, որ այս բոլորը ճշմարիտ չէր, որ նոքա խորհուրդ էին անում թէ ինչպէս խաբեն ինձ:

Նախանձոտների համար ամենատանջող յարաբերութիւններից մին (իսկ մեր հասարակական կեանքի մէջ ամենքը նախանձոտներ են) յայտնի աշխարհային պայմաններն են, որ տեղ թոյլատրվում է այր մարդու եւ կնոջ ամենամեծ եւ վտանգաւոր մօտա-

ւորութիւն յայտնի թողատրելի հասարակական պայմանների մէջ : Մարդիկներ ծաղրածութեան առարկայ կզաւնաս , եթէ խափանես մօտաւորութիւնը պարահանդէսներում , բժիշկների մօտաւորութիւնը իր հիւանդի հետ , մօտաւորութիւն գեղարհետով , նկարչութեամբ եւ գլխաւորապէս երաժշտութեամբ պարապելու միջոցին : Մարդիկ պարապում են երկուսով ամենազնիւ գեղարհետով երաժշտութեամբ : Սորա համար հարկաւոր է յայտնի մօտաւորութիւն , եւ այս մօտաւորութիւնը դատապարտելի ոչինչ չունի , միայն յիմար նախանձոտ ամուսինը կարող է այս տեղ իր ցանկացած մի բանը տեսնել : Ամուսինն այսպէս պիտի չմտածէ , առաւել եւս իր քիթը չըպիտի ներս կոխէ եւ խանգարէ , սակայն ամենքը գիտեն , որ սոյն այս պարապումնքի միջնորդութեամբ է , մանաւանդ երաժշտութեամբ , որ գործվում է անառակութիւնների մեծագոյն մասը մեր հասարակութեան մէջ :

Ես յայտնապէս չփոթեցրի նոցա նորանով , որ երկար ոչինչ չէի կարողանում ասել : Ես գլխիվայր դարձուած շշի նման էի , որից ջուրը չէ թափվում նորա համար , որ չափազանց լցված է : Ես կամեաւորութեամբ հայնոյել , արտաքսել նորան բայց ոչինչ չէի կարողանում անել : Ընդհակառակն զգում էի , որ արգելք եղայ նոցա եւ յանցաւոր եմ այս բանի մէջ : Ես ցոյց էի տալիս թէ ամեն բան հաւանումնմ , դարձեալ նոյն օտարտի զգացման պատճառով , որը ստիպում էր ինձ նորա հետ վարվել այնքան աւելի քաղցրութեամբ , որքան աւելի տառապեցուցիչ էր ինձ համար նորա ներկայութիւնը : Ես նորան ասա-

ցի , որ վստահանում եմ նորա ճաշակին , կնոջս եւս միեւնոյն խորհուրդն եմ տալիս : Նա մնաց դարձեալ այնքան , որքան հարկաւոր էր իմ ազգած առաջին անհաճելի տպաւորութիւնը ջնջելու համար , երբ յանկարծ ներս մտայ վրդոված դէմքով , եւ գնաց կեղծելով թէ այժմ որոշեցին վաղն ինչ պիտի նուագեն : Իսկ ես բոլորովին համոզված էի , որ նոցա զբաղեցնող խնդրի հետ համեմատելով , այն խնդիրն , թէ ի՞նչ պիտի նուագեն , նոցա համար բոլորովին աննշան էր : Առանձին քաղաքավարութեամբ տարայ նորան մինչեւ նախատեսեակը (ինչպէս չտանել այն մարդուն , որ եկել է ամբողջ մի ընտանիքի հանգիստը վրդովելու եւ բարեբաղդութիւնը կործանելու) : Մասնաւոր մի քաղցրութեամբ սեղմեցի նորա սպիտակ եւ փափուկ ձեռք :

ԻԲ.

Այս ամբողջ օրը ես չխօսեցի կնոջս հետ — չէի կարողանում : Նորա մօտաւորութիւնն այնպիսի ատելութիւն էր ծնեցնում իմ մէջ զէպի նա , որ ես վախեցնում էի ինքս ինձանից : Ճաշին մանուկների ներկայութեամբ նա հարցրեց ինձանից թէ ե՞րբ եմ գնում : Հետեւեալ շարաթին ես պէտք է գնայի գաւառական փողով : Ասացի իրան երբ : Նա հարցրեց թէ բան չէ հարկաւոր արդե՞ք ինձ ճանապարհի համար : Ես ոչինչ չասացի եւ լուռ նստած էի ճաշին եւ յետոյ նոյնպէս լուռ գնացի առանձնասենեակս : Վերջին ժամանակ նա երբէք սենեակս չէր գալիս , մանաւանդ այս ժամին . յանկարծ նորա քայլերը ,

նորա ընթացքը լավեցան : Եւ իմ գլուխս զարնու-
րելի , անձոռնի մի միտք ծագեց թէ նա , իրբև
ուրիշի կինը , կամենումէ արդէն իր գործած մեղքը
ծածկել եւ այս պատճառով է գալիս այսպէս ժամա-
նակ իմ մօտ : Մի՞թէ նա իմ մօտս է գալիս , ուրեմն
նշանակումէ միտքս իրաւ է :

. . . Եւ հոգուս մէջ մի անասելի ատելութիւն է
շարժվում դէպի նա : Քայլերն մօտենումեն աւելի
— մի՞թէ չի մտնի դահլիճ : Ոչ — դուռը ձայն հա-
նեց — եւ դրան մէջ նորա բարձր , վայելչակազմ ,
յամր եւ դիւրաբեկ կերպարանքը : Թէ դէմքի վերա ,
թէ աչքերում երեւումեն վախ եւ հաճոյախնդրու-
թիւն , որը նա կամենումէ ծածկել , բայց ես տես-
տեսնումեմ եւ նշանակութիւնն իմանումեմ : Հագիւ-
շնչասպառ չեղայ — այնքան երկար պահումէի շունչս
եւ նորան նայել շարունակելով , առայ ծխատուփս
եւ սկսեցի ծխել :

— Հապա այդ ի՞նչ է , մօտդ կգամ նստելու ,
իսկ դու ծխախոտ ես վառում» , եւ նստեց իմ մօտ
բազմոցի վերա , դէպի ինձ թիկնընկած :

Ես յետ քաշվեցայ , որ նորան չդպչեմ :

— Ես տեսնումեմ , որ դու անբաւական ես , որ
կամենումեմ կիրակի օրը նուագել , ասաց նա :

— Ես ամենեւին անբաւական չեմ , ասացի :

— Մի՞թէ ես չեմ տեսնում :

— Ուրեմն , չնորհաւորումեմ , որ տեսնումես :
Միայն թէ քեզ ամենայն ցածութիւն հաճելի է ,
իսկ ինձ համար զարնուրելի :

— Եթէ դու կամենումես հայոցել ձիապանի
պէս , ես կգնամ :

— Գնա : Միայն իմացիր , որ եթէ քեզ համար
թանկ չէ ընտանեկան պատիւը , ինձ համար ոչ թէ
դու ես թանկ . . . զրոյը քեզ ոտնէ — այլ ըն-
տանեկան պատիւը . . .

— Ի՞նչ , ի՞նչ :

— Հեռացիր , ի սէր Աստուծու , հեռացիր :

Բայց նա չգնաց : Նա ցոյց էր ապիս իբր թէ չէ
հասկանում միտքս , կամ թէ արգարեւ չէր հասկա-
նում , միայն թէ վիրաւորվեցաւ եւ բարկացաւ :

— «Ի՞նչ բոլորովին անհնարին դարձար» կամ այս
տեսակ մի բան իմ բնաւորութեան մասին , ասաց
նա , աշխատելով , ինչպէս միշտ , ինձ խոցել որքան
կարելի է աւելի ցաւեցնելով — «քո վարմունքից
յետոյ քրոջ հետ (այս մի դէպք էր քրոջ հետ , երբ
եւ զայրացայ եւ շատ կոպիտ խօսքեր ասացի նո-
րան : Նա զիտէր , որ այս տանջումէր ինձ եւ զո-
րանով ցաւեցրեց ինձ) — ինձ այլ եւս ոչինչ չի
զարմացնի :

— Այո , վիրաւորել , ստորացնել , խայտառակել
եւ կրկին ինձ յանցաւոր շինել , ասացի ինձ ու ինձ
եւ յանկարծ ինձ տիրեց աննկարագրելի զայրոյթ
նորա դէմ , որպիսին ես դեռ երբէք չէի զգացել :
Առաջին անգամն էր , որ սիրտս կամեցաւ Ֆիզիքա-
պէս յայտնել այն զայրոյթը : Ես վեր թռայ , բայց
միեւնոյն վեր թռած ըսպէին , յիշումեմ , որ հասկա-
ցայ զայրոյթս եւ հարցրի ինձ . արդե՞ք լաւ է զայ-
րոյթին անձնատուր լինել , եւ նոյն ժամայն պա-
տասխանեցի ինձ , թէ լաւ է , թէ այս կվախեցնէ
նորան եւ իսկոյն եւեթ , փոխանակ այս զայրոյթին
ընդդիմանալու , սկսեցի կրկնապատկել եւ ուրա-

խանայ, որ նա հետզհետէ եռումէր իմ մէջ :

— Հեռացիր, եթէ ոչ, քեզ կսպանեմ, գոչեցի ես զիտմամբ սարսափելի ձայնով եւ բռնեցի նորա ձեռից : Նա չէր գնում : Այն ժամանակ նորան դարձրի դէպի դուռը եւ պինդ հրեցի :

— Ի՞նչ եղաւ քեզ : Խեղքի եկ, ասաց նա :

— Դուրս գնա, աղաղակեցի ես աւելի բարձր, աչքերս դարձնելով. դու կարող ես ինձ միայն կատաղութեան հասցնել : Ես իմ վերա վստահ չեմ : Դուրս գնա :

Ասպարէզ տալով կատաղութեանս, ես արբումէի նորանով եւ կամենումէի դարձեալ մի որ եւ իցէ գերօրինակ բան անել, որ ցոյց տար այս իմ կատաղութեանս բարձրագոյն աստիճանը : Ես չափազանց կամենումէի ձեծել, սպանել, բայց գիտէի, որ այս կարելի չէ, եւ գսպնումէի ինձ : Ես հեռացայ նորանից եւ սեղանին մօտեցած, վերցրի թղթ-թասեղմիչը եւ գետնին խփեցի նորա կողքին : Ես կողքից շատ լաւ էի արձակում : Եւ իսկոյն քանի որ նա դեռ չէր հեռացել (այսպէս արի, որ նա տեսնէր), ես վերցրի աշտանակը գետնին խփեցի, եւ ջերմաչափը պատից վար ձգեցի, գոչել շարունակելով :

— Դուրս գնա, հեռացիր : Ես իմ վերա վստահ չեմ :

Նա դուրս գնաց եւ ես իսկոյն դադարեցի : Մի ժամից յետոյ դայեակն եկաւ եւ տսաց, որ նա ջղացաւով է հիւանդացել : Գնացի նա հեծկտումէր, ծիծաղումէր, ոչինչ չէր կարողանում ասել եւ սարսրումէր ամբողջ մարմնով : Նա չէր կեղծում, այլ

ստոյգ հիւանդ էր : Ուղարկեցինք բժշկին կանչելու, եւ ես ամբողջ գիշեր խնամումէի նորան : Առաւօտեան մօտ նա հանգստացաւ եւ մենք հաշտվեցանք այն զգացման ազդեցութեամբ, որին մենք սէր էինք ասում : Առաւօտեան, երբ հաշտվելուց յետոյ ես խոստովանեցի, որ նախանձոտութիւն զգացի Տրուխաչելովու պատճառով, նա ամենեւին չըփոթվեցաւ եւ ամենաբնական կերպով ծիծաղեց. այնքան օտարոտի երեւեցաւ նորան մինչեւ անգամ այնպիսի մարդով յափշտակվելու հնարաւորութիւնն :

— Միթէ այնպիսի մարդը կարող է օրինաւոր կնոջ մէջ ուրիշ բան զարթեցնել բացի երաժշտութեան վայելչութենից : Այլ եւ, եթէ կամենումես, ես պատրաստ եմ երբէք նորան չտեսնել : Մինչեւ անգամ կիրակի օրը, թէպէտեւ կանչված են ամենքը, զրիւր նորան, թէ ես առողջ չեմ — եւ վերջացաւ : Յաւալի է միայն, որ կարող է մտածվիլ թէ նա վտանգաւոր է : Իսկ իմ ինքնասիրութիւնն չէ ներում, որ թոյլ տամ այդպէս մտածելու :

Ոչ սպաքէն կինս փոքր չէր, նա հաւատումէր ինչ որ ասումէր, նա յոյս ունէր, որ այս խօսքերով իր մէջ կճնեցնէ դէպի այն մարդն արհամարհանք, եւ այդպէսով կպաշտպանէ իրան նորա դէմ, բայց այս իրան չյաջողեց : Ամեն բան կնոջս դէմ էր ուղղված, մանաւանդ այն անիծված երաժշտութիւնը : Այսպէս ամեն բան եւս վերջացաւ, եւ կիրակի օրը հիւրերն հաւաքվեցան, եւ նոքա նուաբեցին :

ԻԳ.

Կարծումեմ աւելորդ է ասել, որ ես շատ մնափառ էի: Եթէ մնափառ չլինիս մեր սովորական կեանքի մէջ, հապա ինչով պիտի ապրիս: Ուստի կիրակի օրը ես ճաշակով դբաղեցայ ճաշ եւ երաժշտական երեկոյթ սարքելու: Ինքս գնեցի զանազան բաներ ճաշի համար եւ կանչեցի հիւրերին: Վեց ժամին մօտ հաւաքվեցան հիւրերը, եւ նա եկաւ ֆրակով, թեզանիքների անբարեկայել աղամանդեայ կոճակներով: Նա համարձակ էր վարվում, ամեն բանին պատասխանումէր շտապով, համաձայնութեան եւ գիտակցութեան ժպիտով — վերջապէս — այն առանձին արտասանութեամբ, իբր թէ ինչ որ կասէք կամ կանէք, իսկապէս այն է, ինչ որ նա սպասում էր: Բողոքն ինչ որ նորա մէջ անկարգ բան կար, ես այժմ առանձին հաճութեամբ էի նկատում, որովհետեւ այս ամենը պիտի հանգստացնէր ինձ եւ ցոյց տար թէ նա իմ կնոջ համար այնքան ստոր աստիճանի վերա էր կանգնած, որ նա չէր կարող, ինչպէս ինքն ասաց, մինչեւ այն տեղ ստորանալ: Ոչ այնքան կնոջս՝ ինձ հաւատացնելու համար, որքան տանջող չարչարանքիս համար, որին ենթարկվումէի նախանձառութեանս պատճառով, այժմ արդէն չէի ներում ինձ նախանձոտ լինել: Բայց չնայելով սորան, այնու ամենայնիւ ես բնական պարզութեամբ չէի վարվում նորա հետ եւ կնոջս հետ թէ ճաշի ժամանակ եւ թէ երեկոյթի առաջին միջոցում, մինչեւ երաժշտութեան սկսվելը: Ես ակամայ գիտումէի

նոցա երկուսի իւրաքանչիւր շարժումը, հայեացքը: Ճաշը ինչպէս ճաշ էր — ձանձրալի, կեղծ: Բաւական վաղ սկսվեցաւ երաժշտութիւնը: Նա գնաց ջութակ բերելու: Կինս մօտեցաւ դաշնակին (պիանօ) եւ սկսեց ձայնահիշներ որոշել: Ահ, ինչպէս յիշումեմ այն երեկոյթի ամեն մանրամասնութիւնները. յիշումեմ թէ ինչպէս նա ջութակը բերեց, արկղիկը բացեց, հանեց մի կնոջ ձեռով ասեղնագործած ծածկոցը, եւ սկսեց լարել: Յիշումեմ թէ ինչպէս կինս նստեց կեղծ անտարբերութեամբ, որի տակ, տեսայ, նա մեծ երկիւղ էր թաղցնում — երկիւղ էր կրում գլխաւորապէս իր հնարագիտութենից — նստեց դաշնակի առաջ եւ սկսվեցան սովորական դաշնակի «la», ջութակի «պիչչէկատօ», ձայնագրերի դասաւորութիւնը: Յիշումեմ յետոյ թէ ինչպէս նայեցին նոքա միմեանց, աչք դարձնելով շուրջը նստողների վերա եւ յետոյ միմեանց մի բան ասացին, եւ սկսվեցաւ: Նոքա միաժամանակ հնչեցին ակօրդը — կինս դաշնակի վերա, նա ջութակի: Նոքա նուագումէին Բէթհօվէնի Կրէյցերեան Սօնատը — գիտէք արդեօք առաջին պրէստօն: Գիտէ՞ք, Ուհ. . . Նա բացազանչեց եւ լուռ մնաց երկար: —

— Սարսափելի բան է այս սօնատը.
 Իսկապէս այս մատը: Եւ ընդհանրապէս սարսափելի բան է երաժշտութիւնը: Այս ինչ է: Ես չգիտեմ: Ինչ է երաժշտութիւնը: Ինչ է անում նա: Ասում են թէ երաժշտութիւնը ներգործումէ հոգին վսեմացնելու — անմիտ բան է, սուտ է: Նա ներգործումէ, սարսափելի ներգործումէ — ես իմ մասին եմ ասում — բայց ոչ թէ հոգին վսեմացնելու: Նա

ներգործումէ հողին ոչ վսեմացնելու , ոչ ստորացնելու , այլ հողին գրգռելու : Ի՞նչպէս ասեմ ձեզ . . . Երաժշտութիւնը ստիպումէ ինձ մոռանալու ինքս ինձ , իմ ճշմարիտ գրութիւնը : Նա փոխադրումէ ինձ մի ուրիշ — ոչ սեփական — գրութեան մէջ : Երաժշտութեան ազդեցութեան տակ ինձ թուումէ թէ զգումեմ այն , ինչ որ չեմ հասկանում , թէ կարող եմ այն , ինչ որ չեմ կարող : Ես այս բացատրումեմ նորանով , որ երաժշտութիւնը ներգործումէ ինչպէս յօրանջում , ինչպէս ծիծաղ . քնել չեմ կամենում , բայց յօրանջումեմ , յօրանջողներին նայելով : Ծիծաղելու բան չկայ , բայց ծիծաղումեմ , ծիծաղողներին լսելով : Երաժշտութիւնը միանգամից անմիջապէս փոխադրումէ ինձ այն հոգեկան գրութեան մէջ , որի մէջ գտնուումէր նա . ինքն երաժշտութիւնը գրողը : Ես հողով միանումեմ նորա հետ եւ նորա հետ միասին մի վիճակից անցնումեմ միւսին : Բայց թէ ի՞նչի եմ անում այս , չգիտեմ : Ոչ ապաքէն նա , ով գրել է օրինակ կրէյցերեան Սօնատը — Բէթհօվէնը — գիտէր թէ ինչի էր գտնուում այնպիսի վիճակի մէջ — այս վիճակը հասցրեց նորան յայտնի գործերին , ուստի վիճակը նորա համար իմաստ ունէր , իսկ ինձ համար ոչինչ իմաստ չունի : Ուստի երաժշտութիւնը միայն գրգռումէ , չէ վերջացնում : Հա , պատերազմական քայլերդ կնուագեն , զլինւորները քայլերդով կանցնեն , եւ երաժշտութիւնն իր տեղն է : Նուագեցին պարերդ , ես պարեցի , երաժշտութիւնն իր տեղըն է : Հա , նուագեցին պատարազը , ես հազորովեցայ , երաժշտութիւնը նոյնպէս իր տեղն է . . . : Ապա թէ ոչ — միայն գրգռումն է , եւ ինչ որ

պիտի կատարվի չկայ այս գրգռման մէջ : Եւ այս պատճառով երաժշտութիւնն այնքան սարսափելի , երբեմն այնքան զարհուրելի կերպով է ներգործում : Չինաստանում երաժշտութիւնը պետական գործ է : Այս այսպէս եւ պիտի լինի , Միթէ կարելի է թողատրել , որ իւրաքանչիւրն , ով որ կամենումէ , քնածութիւն բերէր մինի կամ շատերի վերա եւ յետոյ նոցա հետ անէր , ինչ որ կամենումէ : Եւ մանաւանդ երբ քնածուն առաջին հանդիպած անբարոյական մարդը լինի : Այս սարսափելի միջոց է ամեն մի պատահօղի ձեռին . . . Օրինակ , նոյն իսկ այս կրէյցերեան Սօնատը , առաջին պրէստո — եւ այսպիսի շատ բաներ կան — միթէ կարելի է նուագել հիւրասնեակներում , ուսամերկ կանանց մէջ , կամ համերգներում — նուագել , յետոյ ծափահարել եւ յետոյ ուրիշը նուագել : Այս բաները կարելի է նուագել միայն յայտնի երեւելի , նշանաւոր հանգամանքների մէջ եւ այն ժամանակ , երբ հարկաւոր է այս երաժշտութեանն համեմատ յայտնի գործեր կատարել : Ապա թէ ոչ — ոչ տեղին , ոչ ժամանակին յարմարօղ եւ ոչնչով չարտադրվող զգացման եռանդի գրգռումն չէ կարող կորստաբար չներգործել : Իմ վերա գոնէ այն կտորը սարսափելի կերպով ներգործեց . ինձ թուումէր թէ իմ առաջ նոր զգացմունք , նոր հնարաւորութիւններ բացվեցան , որոնց մասին ես մինչեւ այժմ չգիտէի : « Հա , ահա ի՞նչպէս է — բոլորովին այնպէս չէ , ինչպէս որ առաջագոյն մտածումէի եւ ապրում — այլ ահա թէ ինչպէս » կարծես լսվումէր հոգուս մէջ : Թէ ինչ էր այն իմ իմացած նորը , — ես չէի կարողանում ինձ

հաշիւ տալ , սակայն այս նոր վիճակի մէջ նախան-
 ձուտութիւնը տեղ չունէր արդէն : Բոլոր մի եւ նոյն
 անձներն — նոյն թուում եւ կինս եւ նա — բոլոր-
 բովին ուրիշ գոյնով էին ներկայանում : Այս երա-
 ժշտութիւնն ինձ այնպիսի մի աշխարհ տարաւ , որ-
 տեղ նախանձուտութիւնն այլ եւս տեղ չունէր : Նա-
 խանձուտութիւնը եւ նորան զրգոնիչ զգացումն այն-
 պիսի դատարկ բաներ էին երեւում , որոնց մասին
 չարժէր մտածել :

Այս պրէստոից յետոյ նոքա նուագեցին գեղեցիկ
 andante որը սովորաբար նոր չէ , անպէտք փոփոխ-
 վածներով եւ բոլորովին թոյլ վերջանուազր : Յետոյ
 նորից նուագումէին , հիւրերի խնդրելով , մերթ էր-
 նատի էլէգիան , մերթ ուրիշ զանազան կտորներ ,
 այս բոլորը լաւ էր , բայց իմ վերաս այն տպաւո-
 թեան հարիւրորդ մասն եւս չգործեց , որքան որ
 ներգործեց առաջինը : Ամբողջ երեկոյ թեթեւու-
 թիւն , ուրախութիւն էի զգում : Այն փայլուն աչ-
 քերը , այն խստութիւնը , նշանաւոր արտայայտու-
 թիւնը , մինչդեռ կինս նուագումէր , եւ այն կատար-
 եալ նաղանքը , մի տեսակ թոյլ , ողորմելի եւ երա-
 նելի ժպիտը , այնուհետեւ երբ նա վերջացրեց : Այս
 բոլորը տեսայ , բայց ոչինչ ուրիշ նշանակութիւն չէի
 տալիս , բացի նորանից թէ կինս զգումէր նոյնը ,
 ինչ որ ես . թէ նորա՛ ինչպէս եւ իմ առաջ քացվու-
 մէին , կարծես մտաբերվումէին նոր , անծանօթ զգաց-
 մունքը : Ամբողջ երեկոյ գրեթէ նախանձուտութիւն
 չէի զգում :

Ես երկու օրից յետոյ պիտի գնայի գաւառական
 ժողով , եւ նա հրաժեշտ տալով հաւաքեց իր բոլոր

ձայնագրերը եւ հարցրեց թէ երբ կվերադառնամ ,
 ցանկանալով հրաժեշտ տալ ինձ գնալուց առաջ :
 Սորանից ես կարող էի եզրակացնել , որ նակարելի
 չէ համարում գալ իմ տունը , առանց ինձ եւ այս
 հաճելի էր ինձ : Յայտնվեցաւ , որ հազիւ թէ կվե-
 րադառնամ մինչեւ նորա գալը , ուստի մենք բոլոր-
 բովին հրաժեշտ տուինք միմեանց : Ես առաջին ան-
 դամ ճշմարիտ վայելչութեամբ սեղմեցի նորա ձեռը
 եւ շնորհակալ եղայ : Նա կնոջս եւս բոլորովին հրա-
 ժեշտ տուեց : Եւ նոցա հրաժեշտն ինձ ամենաբնա-
 կան եւ վայելուչ երեւեցաւ : Ամենայն ինչ գեղեցիկ
 անցաւ : Ես եւ կինս գոհ էինք երեկոյթից : Բոլոր-
 բովին ընդհանուր տեսութիւններ էինք անում երա-
 ժշտութեան գործած տպաւորութիւնների մասին ,
 բայց այնպէս մօտ եւ մտերիմ էինք այն երեկոյցին ,
 որ շատ սակաւ էր լինում վերջին ժամանակ :

Ի Գ .

Երկու օրից յետոյ ես գաւառ գնացի , կնոջս մնաս
 բարով ասելով ամենալաւ , հանգիստ տրամադրու-
 թեամբ : Գաւառի մէջ միշտ շատ գործ էր լինում ,
 եւ բոլորովին առանձին կեանք , առանձին աշխար-
 հիկ : Երկու օր տաս տաս ժամ ատենանի մէջ էի
 անցուցանում : Երկրորդ օրն երեկոյեան , վերադառ-
 նալով ընակարանս գաւառական քաղաքում , կնոջիցս
 նամակ տեսայ , որի մէջ գրումէր ինձ մանուկների,
 հօրեղբօր , զայեակի , գնած իրերի մասին եւ ի միջի
 այլոց իբրեւ ամենատնօրական բան գրումէր թէ
 Տրուխաչէվսկին այցելել է եւ բերել խոստացած

ձայնանիշներ բերելու . ձայնանիշները եւ առաջարկել է կրկին նուազել , բայց ինքն հրաժարվել է իսկ եւ չէի յիշում թէ նա խոստացած լինէր . ինձ թուումէր թէ նա այն ժամանակ բողբոլվին հրաժեշտ տուեց , եւ այս պատճառով ինձ անսխորժ կերպով զարմացրեց : Ես կրկին կարգացի նամակը , նամակի մէջ մի լարված , երկչոտ բան կար , եւ ես սարսափելի ծանրութիւն զգացի . սիրտս սկսեց կծվել , նախանձառութեան կատաղի գաղանը սկսեց մանչել իր որջի մէջ եւ կամենումէր դուրս թռչել , բայց ես վախենումէի այս գաղանից եւ շուտ բակեցի նորան : Ի՞նչ վատ զգացում է այս նախանձառութիւնը : Կնոջս ինձ նամակ գրելուց աւելի բնական ի՞նչ կարող է լինել , ասացի ինձ ու ինձ — եւ անկողին մտայ կարծես հանգիստ : Սկսեցի մտածել վաղիւ կատարելու գործերի համար եւ քնեցի առանց կնոջս մասին մտածելու : Ես միշտ երկար չէի կարողանում քնել այս ժողովների միջոցին նոր տեղում , իսկ այստեղ իսկոյն քնեցի : Եւ ինչպէս որ լինում է — գիտէ՞ք , յանկարծ էլէկտրական զարկ — եւ զարթումես : Այսպէս զարթեցայ , բայց զարթեցայ մտաբերելով կնոջս , իմ մարմնական սէրս զէպի նա , եւ Տրուխաչէվսկուն եւ այն թէ կնոջս եւ նորա մէջ ամեն բան վերջացած է : Զարհուրանք եւ զայրոյթ ճմլեցին սիրտս : Բայց ես սկսեցի զբաստացնել ինձ :

Ի՞նչ անտեղութիւն է , ասումէի ինձ ու ինձ , ոչ ինչ հիմք չկայ : Ոչ ինչ չկայ եւ չէ եղել : Եւ ինչպէս կարող եմ այսքան ստորացնել նորան եւ ինձ , գլխաւորապէս այսպիսի սարսափելի երթաղբութիւններն անելով : Մի տեսակ վարձկան ջուրթա-

կանար , վատահամբաւ մարդ , — եւ յանկարծ — պատուաւոր , յարգելի կին , զաւակների մայր , իմ կինս : « Ի՞նչ անհեթեթութիւն է « թուում էի ինձ մի կողմից » , ի՞նչի այս չէ կարող լինել » : Այն ամենապարզ եւ հասկանալի բանը , որի համար ես ամուսնացայ կնոջս հետ , այն իսկապէս , որի համար ես ապրումէի նորա հետ , որ միայն հարկաւոր էր նորա մէջ եւ որն հարկաւոր էր նաեւ ուրիշներին , այս երաժշտին եւս նա մի ամուրի մարդ էառողջ , (մտաբերումեմ , ինչպէս կչկչացնում կօղէտի կռճիկը , եւ ագահաբար գրկումէր կարմիր շքրթուենքով գինու բաժակը) , կուշտ , պարարտ եւ ոչ միայն առանց կանոնների , այլ անշուշտ այնպիսի կանոններ իմացող , թէ ինչպէս օգուտ քաղելու է իր առաջ ներկայացած վայելչութիւններից : Եւ նոցա մէջ երաժշտութեան կապակցութիւն կայ , ամենանուրբ ցանկասիրութեան զգացմունքի կապակցութիւն : Ի՞նչ կարող է նորան զսրպել : Ոչ ինչ : Ընդհակառակն ամեն բան զբաւումէ նորան : Կինս : Նա գաղտնիք է , ինչպէս առաջ , նոյնպէս եւ այժմ : Ես չեմ ձանաչում նորան : Գիտեմ նորա իրրեւ կենդանուն : Իսկ կենդանուն ոչ ինչ չէ կարող զսպել եւ պիտի չզսպէ : Միայն այժմ ես մտաբերեցի նոցա դէմքերը այն երեկոյնին , երբ նոքա կրէյցերեան Սօնատից յետոյ նուազեցին մի ցանկասիրական կտոր , չեմ յիշում հեղինակին , մի անպատկառ զգայական կտոր : « Ի՞նչպէս կարողացայ ես հեռանալ » ասումէի ինձ ու ինձ , մտաբերելով նոցա դէմքերը , « մի՞թէ պարզ չէր , որ նոցա մէջ ամեն բան կատարվել էր այն երեկոյնին , եւ մի՞թէ չէր երեւում , որ նոցա մէջ ոչ միայն ոչ ինչ

արգելք չկար արդէն, այլ թէ երկօքեան նոքա —
 գլխաւորապէս կինս — մի տեսակ ամօթ էին
 զգում նորանից յետոյ, ինչ որ պատահել էր
 նոցա: Մտաբերումեմ, կինս ինչպէս թոյլ, ողոր-
 մելի եւ երանելի կերպով էր ժպտում, կարմրած
 երեսից քրտինքը սրբելով: Նոքա այն ժամանակն
 արդէն խուսափումէին միմեանց նայելուց եւ միայն
 ընթրիքին, երբ նա ջուր էր լցնում կնոջս, նոքա
 նայեցին միմեանց եւ հազիւ ժպտեցին: Ես զարնու-
 րանքով յիշեցի այժմ իմ նկատած նոցա այն հայ-
 եացքը հաղիւ նշմարելի ժպիտով: «Այո, ամեն բան
 վերջացած է», ասումէր ինձ մի ձայն, եւ իսկոյն
 միւս ձայնը բոլորովին ուրիշ բան էր ասում. «Քեզ
 մի բան պատահել է: Այդ չէ կարող լինել», ասու-
 մէր այն միւս ձայնը: Տաժանելի էր ինձ մթնում
 պռակած մնալ, լուցկիին վառեցի եւ մի տեսակ սար-
 սափ տիրեց ինձ դեղնագոյն թղթեր կպցրած այն
 փոքրիկ սենեակում: Ծխախոտ վառեցի եւ ինչպէս
 որ միշտ, երբ անվճռելի հակասութիւնների միեւնոյն
 շրջանի մէջ ես տատանում — ծխումեմ, ես եւս
 ծխումէի մին մին միւսից յետոյ, որ մշուշապատ
 լինիմ եւ հակասութիւններ չտեսնեմ: Ես ամբողջ
 գիշեր չքնեցի. իսկ հինգ ժամին, թէպէտ դեռ
 մութն էր, վճռեցի, որ այլ եւս չեմ կարող մնալ այս
 լարված գրութեան մէջ եւ իսկոյն կգնամ: Գնացքը
 կայարանից Տ ժամին պիտի մեկնէր: Չարթեցրի ինձ
 սպասաւորող պահապանին եւ նորան ձիերը բերե-
 լու ուղարկեցի: Ժողովին ատմակ ուղարկեցի թէ
 ես ստիպողական դործով կանչված եմ Մօսկվայ,
 ուստի ինչպէս մեմ, որ ինձ մի անդամ փոխանորդէ:
 Ութ ժամին նստայ ուղեկառք եւ գնացի:

ԻԵ.

Պէտք էր ճանապարհորդել 35 վերստ ձիերով եւ
 Տ ժամ երկաթուղով: Չիերով գնալը շատ գեղեցիկ
 էր: Սառնաշնային ժամանակ էր պայծառ արեւով:
 գիտէք, այս այն ժամանակն է, երբ անիւնների եր-
 կաթի շրջանակները հետք են թողնում փայլուն
 ճանապարհի վերս: Ճանապարհներն հարթ, լոյսը
 պայծառ եւ օդը պարարտ, ուղեկառքով գնալը լաւ
 էր: Ես կարծես ձիերին, դաշտերին, պատանօղնե-
 րին նայելով, մոռանումէի թէ ուր եմ գնում: Եր-
 բեմն ինձ թուումէր, թէ ես պարզապէս գնումեմ,
 դրօսնումեմ եւ թէ այսպէս կգնամ մինչեւ կեանքի
 եւ աշխարհի վերջը: Եւ առանձնապէս ուրախ էի
 լինում, երբ այսպէս մոռացման էի տալիս ինձ: Իսկ
 երբ մտաբերումէի թէ ուր եմ գնում, ասումէի ինքս
 ինձ. «Այն ժամանակ յայտնի կլինի, մի մտածիր»:
 Կէս ճանապարհին ինձ մի արգելիչ զէպք պատահեց,
 որ առաւել եւս զբաղեցրեց — բոլորովին նոր ու-
 ղեկառքը կտորվեցաւ եւ հարկաւոր էր նորան նու-
 րօղել: Սայլ գանկը, նորոգութիւնը, վճարումն,
 իջեւանում թէյ, զոնապանի հետ զրոյց — այս բո-
 լորն ինձ դեռ աւելի զբաղեցրեց: Մթաղէմին ամեն
 բան պատրաստ էր եւ ես նորից ճանապարհ ընկայ:
 Եւ գիշերով առաւել լաւ էր գնալ քան թէ ցերեկով:
 Նոր լուսին էր, փոքր սառոյց, դարձեալ գեղեցիկ
 ճանապարհ, ձիեր, ուրախ ձիապան, եւ ես գնումէի
 եւ վայելչութիւն էի զգում, գրեթէ ամենեւին
 չմտածելով թէ ինձ ինչ է սպասում, եւ մնաս բա-

բով էի ասում կեանքի ուրախութիւններին : Սակայն իմ այս հանգիստ կացութիւնը , զգացումն խեղդելու հնարաւորութիւնը ձիւրով զնայու հետ վերջացաւ : Վագօն մանելուս պէս բոլորովին ուրիշ բան սկսվեցաւ : Այս ութ ժամի ճանապարհը վագօնի մէջ ինձ համար մի սարսափելի բան էր , որ չեմ մոռանայ ամբողջ կեանքումս : Նորանից էր արդեօք , որ վագօնի մէջ նստելով , ես կենդանի կերպով ինձ արդէն տուն հասած ներկայացրի , կամ թէ նորանից , որ երկաթուղին այսքան զրդեղով է ներդրածում մարդիկների վերա , միայն թէ վագօնի մէջ նստելու ժամից ես արդէն չէի կարողանում իջխել երեւակայութեանս վերա եւ երեւակայութիւնս առանց դադարելու գերօրինակ պարզութեամբ սկսեց նկարել իմ առաջ նախանձոտութիւնս բորբոքող պատկերներ մին միւսից յետոյ եւ մին միւսից աւելի անպատկառ , եւ բոլորը նոյն բանի մասին , թէ ի՞նչ էր կատարվում այն տեղ առանց ինձ , թէ ի՞նչպէս դաւաճանած է կինս ինձ : Ես այրվում էի սրտնեղութենից , զայրոյթից եւ անարգվելուս արբենալու մի առանձին զգացմունքից , զիտելով այս պատկերները , չէի կարողանում խոյս տալ նոցանից , չնայել նոցա , ջնջել նոցա , չզրգուել նոցա : Այլ եւ որքան նայում էի այս երեւակայական պատկերներին , այնքան աւելի հաւատում էի նոցա իրականութեան , մոռանալով , որ ոչինչ հիմք չկար սորա համար : Ինձ ներկայացող պատկերների պայծառութիւնը կարծես ապացոյց էր թէ այն , ինչ որ ես երեւակայում էի , իրականութիւն էր : Մի տեսակ դեւ , կարծես իմ կամքի հակառակ , հնարում էր եւ առաջ

էր բերում ամենազարհուրելի երեւակայութիւններ : Միտքս եկաւ վաղուցվան խօսակցութիւն Տրուխաչէվսիու եղբոր հետ եւ մի տեսակ յափշտակմամբ պատահում էր սիրտս այն խօսակցութեամբ , որ վերաբերում էի այժմ նորան Տրուխաչէվսիուն եւ իմ կնոջս : Սա շատ վաղուց էր , բայց մտաբերեցի : Տրուխաչէվսիու եղբայրը , յիշումեմ , միանգամ այն հարցին թէ այցելում է արդեօք պոռնիկասներ , ասաց , որ օրինաւոր մարդը չէ յաճախում այնտեղ , որ տեղ կարելի է հիւանդանալ , նա մանաւանդ կեղտոտ է , զգուելի է , մինչդեռ միշտ կարելի է օրինաւոր կլին գտնել : Եւ ահա նա , նորա եղբայրը , իմ կնոջս գտաւ : Իրաւ է , կինս արդէն նորատի չէ , մի ծամօղատամ եւս պակաս է , եւ փոքր ինչ ուռուցիկ է , մտածում էի նորա տեղ , բայց ի՞նչ անելու է , պէտք է օգուտ քաղել նորանից , ինչ որ կայ : Այո , նա կնոջս գիջումն է անում , որ նորան իր սիրական է դարձնում , ասում էի ինձ ու ինձ : Ոչինչ , այսպիսի ոչինչ չկայ : Նաեւ ոչինչ հիմք չկայ այս տեսակ մի բան երթաղբելու : Միթէ նա չէր ասում ինձ , որ նորա համար անարգութիւն է մինչեւ անգամ այն միտքը , որ ես կարողանում եմ նախանձոտ լինել նորա մասին : Այո , բայց նա խարում է , բացազանչում էի ես , եւ սկսվում էր նորից : Մեր վագօնում կային միայն երկու ճանապարհորդ — մի պառաւ կլին իր մարդու հետ , երկօքեան ամենեւին չէին խօսում , նոքա եւս դուրս գնացին մի կայարանում , եւ ես միայնակ մնացի : Ես իրբեւ վանդակի մէջ գազան էի . երբեմն վեր էի թռչում , լուսամտին մօտենում , երբեմն երբեքով սկսում էի

ման գալ , աշխատելով վագօնը առաջ մղել , բայց վագօնը բոլոր նստարաններով եւ ապակիներով բոլորովին այսպէս էր երերում , ինչպէս աճա մերը :

Եւ իմ պատմիչը վեր թռաւ եւ քանի մի քայլ արեց եւ կրկին նստաւ : — Ո՛հ , վախճանում , վախճանում երկաթուղու վագօններից , վերաս սարսափ է գալիս : Է՛հ , կրկին նստում էի , շարունակեց նա , եւս ինձ ու ինձ ասում . » կսկսեմ ուրիշ բանի վերա մտածել : Օրինակ դիցուք այն պանդոկապետի վերա , որի մօտ ես թէյ խմեցի : Եւ աճա երեւակայութեան աչքերում կանգնում է գոնապանը երկար մօրոքով եւ նորա թուրը , մի տղայ իմ Վարդիկի հասակակից : Վարդիկս : Նա կտեսնէ թէ ինչպէս երաժիշտն համբուրում է իր մօրը : Ի՞նչ կդոյանայ նորա խեղճ հոգու մէջ . . . : Իսկ կնոջս ի՞նչ փոյթ Նա սիրում է Եւ կրկին յուզվում էր մի եւ նոյնը : Ես այնպէս էի տանջվում , որ վերջապէս չգիտէի թէ ի՞նչ անէի ինձ , եւ գլխիս մէջ մի միտք ծագեց , որ շատ հաւանեցի — դուրս գնամ ճանապարհի վերա , պառկիմ վագօնի տակ , ամեն բան վերջացնեմ : Մի բան էր արգելում այս անել , անձնախնայութիւնս , որը անմիջապէս գրգռում էր ատելութիւն դէպի կինս , դէպի այն մարդը , բայց դէպի մարդն ոչ այնքան : Դէպի այն մարդն իմ ստորութեանս եւ նորա յաղթութեան գիտակցութեան մի օտարտափ զգացումն ունէի , իսկ դէպի կինս — սարսափելի ատելութիւն : Չէ կարելի կեանքիս վերջ դնեմ եւ նորան թողնեմ : Պէտք է նա գոնէ փոքր ինչ շարձարվի , գոնէ հասկանար , որ ես տանջվել եմ , ասում էի ինքս ինձ : Մի կայարանի մէջ ճաշարանում ես տեսայ , որ խմու-

մեն , եւ ինքս խկոյն խմեցի օդի : Իմ կողքին կանգնած էր մի հրէայ եւ նոյնպէս խմում էր : Նա սկսեց խօսակցել , եւ ես որպէս զի միայնակ չմնամ վագօնիս մէջ , գնացի նորա հետ երրորդ դասի նորա ցեխտո , ծխամած եւ արեւածաղկի կեղեւներով լի վագօնը : Այն տեղ նստա նորա կողքին , եւ նա շատ ու շատ մանրակէպեր էր պատմում :

Ես սկզբում լսում էի նորան , բայց չէի կարողանում հասկանալ ինչ որ ասում էր : Նա այս նկատեց եւ սկսեց ուշադրութիւն պահանջել : Այն ժամանակ վեր կացայ եւ գնացի վագօնս :

Պէպք է խորհել , ասում էի ինձ ու ինձ — ճշմարիտ է արդե՞օք այն , ինչ որ մտածում եմ , եւ շարձարվելու հիմք ունիմ արդե՞օք : Ես նստայ , ցանկանալով հանգիստ խորհել , սակայն խկոյն եւ եթէ հանգիստ խորհելու փոխանակ , մի եւ նոյնն սկսվեցաւ . դատողութիւնների փոխանակ — պատկերներ եւ ներկայացմունք : « Քանիցս այսպէս շարձարվել եմ ես » ասում էի ինքս ինձ (ես մտաբերում էի նախանձոտութեան նախկին նոյն օրինակ հարուածներ) , եւ յետոյ բոլորն ոչնչով էր վերջանում :

Նոյնպէս եւ այժմ , կարելի է , նաեւ հաւաստի եմ , որ կնոջս հանդիստ քնած կտեսնեմ . նա կզարթէ , կուրախանայ ինձանով , եւ խօսքերից , հայեացքից ես կզգամ , որ ոչինչ չէ եղել եւ թէ այս ամեն անհեթեթութիւն է : Ո՛հ , ինչ լաւ կլինէր այս « Բայց ոչ , այս չափազանց հաճախ է եղել , եւ այժմ չի լինի արդէն » , ասում էր ինձ մի ձայն եւ կրկին սկզվում էր : Այո , աճա որտեղ էր պատուհասը : Ես սիֆիլիզեան հիւանդանոց չէի տանի երիտասարդին , նո-

րանից կանանց մօտենալու ցանկութիւնը հեռացնելու համար, այլ իմ հոգուս խորը կտանէի — այն դեւերին նայելու, որոնք աղեկիզումէին նորան: Հապա սարսափելին այն էր, որ ես մտածումէի թէ անկասկածելի լիակատար իրաւունք ունիմ նորա մարմնի վերա, իբր այն մարմինը իմ մարմինս էր, եւ միեւնոյն ժամանակ զգումէի, որ այն մարմնի վերա իշխել չեմ կարող եւ նա իմս չէ եւ թէ կինս կարող է անօրինել նորա մասին ինչպէս կամենումէ, եւ անօրինել չէ կամենում այնպէս, ինչպէս ես եմ կամենում: Ես եւս ոչինչ չեմ կարող անել ոչ նորան, ոչ կնոջս: . . . Եւ յազթութիւնը նորան է: Իսկ եթէ կինս չէ արել, այլ կամենումէ, առաւել վատէ — աւելի լաւ կլինէր, որ նա անէր, որպէսզի գիտենայի, որպէսզի անորոշութիւն չլինէր: Ես չէի կարողանայ ասել թէ ինչ էի ցանկանում: Ես ցանկանումէի, որ կինս չկամենար այն, ինչ որ պիտի կամենար: Այս կատարեալ խելագարութիւն էր:

ԻԶ.

Վերջընթեր կայարանում, երբ վերակացուն եկաւ տոմակներ ժողովելու, ես իրերս հաւաքած դուրս եկայ արգելակի վերա եւ այն գիտակցութիւնը թէ մօտ է վճիռը, առաւել եւս ինձ շփոթեցրեց: Ես սկսեցի մրսել եւ զողզողալ ծնօտներով այնպէս, որ ատամներս միմեանց էի խփում: Մեքենայաբար ամբոխի հետ դուրս եկայ կայարանից, կառք վարձեցի եւ գնացի: Ես գնումէի ուշի ուշով նայելով սակա-

ւաթիւ անցորդներին եւ դանապաններին եւ մթերանոցների վերնագրեր էի կարդում, առանց մի բանի վերա մտածելու: Կէս վերստ անցնելուց յետոյ, ոտներս սկսեցին մրսել եւ ես մտածեցի, որ վազօնում հանեցի բրդեայ գուլպաներս եւ պայուսակի մէջ դրի: Ո՞ր տեղ է պայուսակը: Այս տեղ է արդեօք: Այս տեղ է: Իսկ կողովը ո՞ր տեղ է: Ես մտաւրեցի, որ իրեղէններիս մասին բողբոջվին մտացել էի, բայց մտաբերելով եւ ստացագիրն հանելով, վճռեցի, որ չարժէ սորա համար յետ դառնալ եւ շարունակեցի գնալ: Ուրքան որ ջանք եմ անում յիշել այժմ, ամենեւին չեմ կարողանում բացատրել ինձ թէ ինչի էի շտապում այնքան: Յիշումս միայն, որ ես գիտակցութիւն ունէի թէ մի ինչ որ սարսափելի եւ ծանրակշիռ բան է պատրաստվում իմ կեանքիս մէջ: Արդեօք նորանից առաջացաւ այն ծանրակշիռ գործը, որ ես այնպէս էի մտածում, թէ նորանից, որ նախազգումէի — չգիտեմ: Կարող է այն եւս լինել, որ գործ պատահելուց յետոյ, բոլոր նախընթաց բոլակներն իմ յիշողութեանս մէջ մթին դոյն ստացան: Ես մօտեցայ նախազգութիւն: Առաջին ժամն էր: Քանի մի կառապաններ կանգնած էին նախազգութի մօտ, անցորդներին սպասելով լուսաւոր լուսամուտների առաջ (լուսաւոր լուսամուտները մեր բնակարանում, դահլիճի եւ հիւրասենեակի մէջ էին): Առանց ինձ հաշիւ տալու թէ ինչի դեռ եւս լոյս կայ այսքան ուշ մեր լուսամուտներում, ես մի եւ նոյն կացութեան մէջ սարսափելի մի բան սպասելով, բարձրացայ աստիճաններից եւ զանգալը խփեցի:

Սպասաւորը — բարի , ջանասէր եւ շատ յիմար —
 Գէորդը բացեց : Աչքին ընկնող առաջին բանը նա-
 խասնեակում ուրիշ հագուստների հետ կախված
 վերարկուն էր : Ես պէտք է զարմանայի , բայց չզար-
 մացայ , որովհետեւ սպասումէի այն : Իսկ եւ իսկ
 այնպէս է , ասացի ինձ ու ինձ : Երբ Գէորդից հար-
 ցրի , ո՞վ է այս տեղ եւ նա Տրուխաչէվսկու անունը
 տուեց , նս հարցրի . կայ արդեօք դարձեալ մի ու-
 րիշը : Նա ասաց . « ոչ ոք » : Մտաբերումեմ , նա
 ինչպէս պատասխանեց ինձ այս այնպիսի ձայնով ,
 որ կարծես թէ կամենումէր ուրախացնել ինձ եւ
 կասկածներ հեռացնել թէ կայ դարձեալ մի ուրիշը :
 Այդպէս է , այդպէս է , կարծես ասումէի ինքս ինձ :
 Իսկ մանուկները : « Փառք Աստուծուն , առողջ են :
 Վազուց քնած են » : Ես չէի կարողանում շունչ առ-
 նել շնչել եւ չէի կարողանում կանգնեցնել դողդո-
 ջուն ծնօտներս : Այո , ուրեմն այնպէս չէ , ինչպէս
 մտածումէի . երբեմն առաջ եւ մտածումէի թէ ան-
 բաղդութիւն կայ , բայց լաւ էր դուրս գալիս , սո-
 վորական կարգով : Իսկ այժմ հին կարգով չէ , այլ
 այն ամենն է , ինչ որ ներկայացնումէի ինձ , եւ
 մտածումէի թէ միայն ներկայացնումեմ , սակայն
 այն բոլորն ահա իրականութիւն է : Ահա այն բոլորը :
 Ես հազիւ չլացի , բայց իսկոյն դեւն մրմնջեց ինձ .
 դու լաց , ախտո՛իր , իսկ նոքա հանգիստ կբաժան-
 վին , ապացոյցներ չեն լինի , եւ դու յաւիտեան
 կկասկածիս եւ կտանջվիս : Եւ իսկոյն դիւրագգա-
 յութիւնն անյայտացաւ եւ առաջ հասաւ Ֆիզիքա-
 կան , յաջող , խորամանկ եւ վճռական ներգործու-
 թեան անասնական կարիք : Ես յիշումեմ , որ ես

զազան , խելացի գազան դարձայ : » Պէտք չէ , պէտք
 չէ , ասացի Գէորդին , որ կամենումէր հիւրասնե-
 եակ գնալ — « այլ դու ահա ինչ կանես . շուտ գնա
 կառք վարձիր եւ գնա , ահա քեզ ստացաղիր , ստա-
 ցիր իրերս : Դէհ գնա » : Նա գնաց նրբանցքի մէջով
 վերարկուն առնելու : Երկիւղ կրելով թէ նա նոցա
 կվախեցնէ , տարայ նորան մինչեւ իր սենեակը եւ
 սպասեցի մինչեւ իր հագնվելը : Հիւրասնեակիցմ իւս
 սենեակի մէջով լսվումէր խօսակցութիւն եւ դանակ-
 ների եւ ամանների ձայն : Նոքա ուտումէին եւ զան-
 զակի ձայն չէին լսել : Երանի այժմ դուրս չգային ,
 մտածումէի ես : Գէորդն իր աստրախանի ոչխարի
 բրդեայ վերարկուն հագաւ եւ գնաց : Ես դուրս թողի
 նորան եւ կողպեցի դուռը , մեծ դժուարութեան մէջ
 էի , երբ զգացի , որ միայնակ մնացի եւ թէ ես իս-
 կոյն պիտի ներգործեմ : Ի՞նչպէս : Ես դեռ եւս չգի-
 տէի : Ես գիտէի միայն , որ այժմ ամեն բան վերջա-
 ցած է , որ կասկածներ նորա անմեղութեան մասին
 չեն կարող լինել եւ թէ ես իսկոյն վերջացնումեմ
 իմ յարաբերութիւններս նորա հետ : Առաջ դեռ տա-
 տանման մէջ էի եւ ասումէի ինձ . « կարելի է այս
 ստոյգ չէ , կարելի է սխալվումեմ » : Այժմ այս ար-
 դէն չկար : Ամեն բան վճռված էր անդառնալի կեր-
 պով : Ինձանից գազանի , միայնակ նորա հետ դի-
 չերով : Ամեն բանն արդէն բոլորովին մոռացել է :
 Կամ աւելի վատ դիտմամբ այսպիսի համարձակու-
 թիւն , յանդգնութիւն յանցանքի մէջ : Որպէս զի
 այս յանդգնութիւնը անմեղութեան նշան հա-
 մարվի Ամեն բան պարզ է : Կտակած չկայ : Ես
 մի բանից միայն երկիւղ էի կրում , որ նոքա չվախ-

չէին, չհնարէին դեռ նոր խաբէութիւն եւ սորանով չզրկէին ինձ թէ յայտնի սպացոյցից, թէ պատժելու — այո, պատուհասելու տագնապալից վայելչութենից: Եւ նոցա վերա հասնելու համար, ես ոտի մասների վերա գնացի հիւրասենեակ, որ տեղ նստած էին նոքա, ոչ թէ դանիւնի մէջով, այլ նըրբանցքի եւ մանկանոցի մէջով: Առաջին մանկանոցում տղաները քնած էին, երկրորդ մանկանոցում դայեակը չարժվեցաւ, կամենումէր զարթել եւ ես ներկայացրի ինձ այն, ինչ որ նա կմտածէ, ամեն բան իմանալով, եւ այնպիսի անձնախնայութիւն տիրեց ինձ այս մտածելիս, որ չկարողացայ զսպել արտասուքս եւ մանուկներին չզարթեցնելու համար, դուրս վազեցի մասներիս վերա նըրբանցք եւ իմ առանձնասենեակում, ընկնելով բազմոցի վերա, սկսեցի լալ: — Ես ազնիւ մարդ, ես ծնօղների դաւախ, ես ամբողջ կեանքումս ընտանեկան կեանքի բարեբաղդութիւն խորհօղս, ես տղամարդս, երբէք նորան չդաւաճանողս . . . Եւ ահա: Հինգ զաւակի մայր, նա գգվումէ երաժշտին նորա համար, որ կարմիր չրթունքներ ունի: Ոչ, սա մարդ չէ: Սա չուն է, սա զարչելի չուն է: Մանուկների սենեակի կողքին, որոնց սիրելու մասին նա կեղծաւորվումէր ամբողջ իր կեանքում: Եւ գրելէ ինձ այն, ինչ որ գրելէ . . . Բայց ես ինչ գիտեմ: Կարելի է բոլոր ժամանակ այս այսպէս էր: Կարելի է նա վաղուց սպասաւորներից է յղացել բոլոր զաւակներին, որոնք իմս են համարվում: Եւ եթէ վաղիւ գայի, նա իր գլխի զարդերով, իր հասակով եւ յամբ շնորհալի շարժումներով (եւ տեսայ նորա հրապուրելի, ատելի

երեսը) իմ առաջս կգար եւ նախանձոտութեան այս դազանը յաւիտեան նստած կլինէր սրտումս եւ կը պատառոտէր նորան: Դայեակն ինչ կմտածէ: Գէօրգը . . . Եւ խեղճ կիզան: Սա արդէն հասկանումէ մի բան: Եւ այս յանգագնութիւնը, եւ այս ստուգութիւնը: Եւ այս անամուական ցանկատիրութիւնը, որ ես այնքան ճանաչումեմ, ասումէի ինձ ու ինձ:

Ես կամենումէի վերկենալ, բայց չէի կարողանում: Սիրտս այնպէս էր խփում, որ չէի կարողանում ոտի վերա կանգնած մնալ: Ես կմեռնեմ հարուածից: Կինս ինձ կսպանէ: Նորան այս եւ պէտք է: Ի՞նչ անեմ, իրան սպանեմ: Ոչ, այս նորան շատ շահաւէտ կլինէր եւ այս վայելչութիւնը նորան չէմ տայ: Այո, ես նստած եմ, իսկ նոքա այնտեղ նստած են եւ ծիծաղումեն եւ . . . Այո, չնայելով որ սա մատաղ հասակի մէջ չէ, նա չգարչեց սորանից, այնու ամենայնիւ սա տգեղ չէր, գլխաւորապէս գոնէ անվտանգ էր նորա թանկագին առողջութեան համար: Եւ ի՞նչի ես նորան չխեղդեցի այն ժամանակ, ասացի ինձ, մտաբերելով այն բոլորն, երբ մի շաբաթ ստաջ, դուրս ձգեցի առանձնասենեակիցս եւ յետոյ կուտրտումէի իրեր: Գլխաւորապէս միտքս եկաւ այն վիճակը, որի մէջ գտնվումէի այն ժամանակ: Ոչ միայն միտքս եկաւ, հապա նոյն դազանական վիճակի մէջ ընկայ: Յիշումեմ թէ ինչպէս ցանկացայ ներգործել, եւ ամենայն խորհրդածութիւններ, բացի նոցանից, որոնք հարկաւոր էին ներգործութեան համար, դուրս թռան գլխիցս եւ ես ընկայ զազանի կամ մարդու այն վիճակի մէջ

Ֆրիդլիքական գրգռման ազդեցութեան տակ վտանգի միջոցին, երբ մարդս ներգործումէ ճշուութեամբ, առանց շտապելու, բայց եւ առանց մի բոպէ կորցնելու, եւ բոլոր ժամանակ մի որոշ նպատակով: Իմ արած առաջին բանն էր — կօշիկներս հաննցի եւ գուլպաներով մօտեցայ պատին բազմոցի վերա, որ տեղ կախված էին զէնքերս եւ դաշոյններս, վերցրի ծռու դամասկեան դաշոյնս, որը երբէք գործադրված չէր եւ շատ սուր էր: Պատեանքից հաննցի: Պատեանքը, յիշումեմ, բազմոցի ետեւ ընկաւ եւ միտքս է, որ սասցի ինձ. «Պէտքէ յետոյ նորան գտնել, ապա թէ ոչ կկորչի»: Յետոյ հաննցի վերարկուս, որ վերաս էր ամբողջ ժամանակ, եւ կամաց քայլելով, գուլպաներով գնացի այն տեղ: Ես ոչ միայն չգիտեմ թէ ինչպէս, ինչ քայլով էի գնում, վազումէի արգեօք թէ միայն գնումէի, որ սենեակները մէջով էի գնում, ինչպէս էի մօտենում հիւրասենեակին, ինչպէս բացի դուռը, ինչպէս ներս մտայ եւ ոչինչ չեմ յիշում:

Իէ.

Յիշումեմ միայն նոցա զէմքերի արտայայտութիւնը, երբ ես բացի դուռը: Յիշումեմ այն արտայայտութիւնը, որը ինձ հոգեւորանջ ուրախութիւն տուեց: Նա սարսափի արտայայտութիւն էր: Իսկապէս այն էր ինձ հարկաւոր: Ես երբէք չեմ մոռանայ յուսահատ սարսափի արտայայտութիւնը, որն երեւեցաւ նոցա երկուսի զէմքերի վերա առաջին վայրկեանում, երբ ինձ տեսան: Մարդը նստած

էր կարծեօք սեղանի մօտ, բայց տեսնելով կամ լսելով իմ գալստ, վեր թռաւ եւ կանգնեց մէջքը պահարանին դէմ դնելով: Նորա երեսին կար միայն սարսափի խիստ անկասկածելի արտայայտութիւն: Կնոջ երեսի վերա սարսափի նոյն արտայայտութիւնն էր, բայց նորա հեռ կար մի ուրիշն եւս: Եթէ միայն սարսափ լինէր, կարելի է եւ չպատահէր այն, ինչ որ պատահեց, բայց նորա երեսի արտայայտութեան մէջ կար — գոնէ ինձ այնպէս թուեցաւ — առաջին վայրկեանում նոյնպէս տրտմութիւն, զժգոհութիւն նորա համար, որ խափանեցին նորա սիրահարական յափշտակութիւնը եւ միանգամայն նորա բազդաւորութիւնը: Նորան կարծես ոչինչ պէտք չէր, բայց եթէ չխանգարէին իրան այժմ բազդաւոր լինելու: Մին եւ միւս արտայայտութիւնները միայն մի ակնթարթ էին տեսում նոցա զէմքերի վերա: Սարսափի արտայայտութիւնը մարդու երեսին իսկոյն փոխվեցաւ հարցական արտայայտութեան: Կարելի է սուտ ասել թէ ոչ, եթէ կարելի է, ուրեմն պէտք է սկսել: Եթէ ոչ, ուրեմն մի ուրիշ բան պիտի սկսվի: Բայց ինչ բան: Նա հարցական հայեացքով նայեց կնոջը: Կնոջ երեսին սրտմտութեան եւ արտմտութեան արտայայտութիւնը փոխվեցաւ հոգածութեան նորա մասին, ինչպէս թուումէր ինձ երբ կինը նայեց մարդուն: Մի ակնթարթ ես դրան մէջ կանգնցի, դաշոյնը մէջքիս ետեւ պահելով: Նոյն վայրկեանում նա ժպտեց եւ ծաղրելի անտարբեր ձայնով սկսեց. «Իսկ մենք երաժըտումէինք ահա»... — «Ահա չէի սպասում» —

մի եւ նոյն ժամանակ սկսեց կլնը, հետեւելով նորա ձայնին: Բայց ոչ մին, ոչ միւսը չվերջացրին: Նոյն կատաղութիւնը տիրեց ինձ, որը զգուժէի եւ մի շաքաթ առաջ: Կրկին զգուժէի եւ բռնութիւն եւ կատաղման յափշտակութիւնս վճռելու կարիքը, եւ նորան անձնատուր եղայ:

Երկուքն եւս չվերջացրին խօսքը: Սկսվեցաւ այն միւսը, որից նա վախենումէր, եւ որը խորտակումէր, խզումէր մի անգամից այն ամենն, որի վերջին խօսքն ասել էին նոքա: Ես յարձակվեցայ կնոջ վերա, գեռ միշտ ծածկելով դաշոյնս, որպէսզի նա արգելք չլինի ինձ կնոջը կրծքի տակ, կողքին հարուած հասցնելու: Այն ըստէն, երբ ես յարձակվեցայ կնոջ վերա, նա տեսաւ եւ, ինչ որ ամենեւին չէի սպասում նորանից — բռնեց ձեռս եւ գոչեց. «Խելքի եկէք, ի՛նչ էք անում: Սպասաւորներ:» Ես դուրս քաշեցի ձեռս եւ լուռ նորա վերա յարձակվեցայ: Երեւի ես սարսափելի էի որովհետեւ նա յանկարծ կտաւի պէս գունատվեցաւ մինչեւ շրթունքը, աչքերը մի առանձին կերպով փայլեցին եւ, ինչ որ ես նոյնպէս ամենեւին չէի սպասում, — սրացաւ դաշնակի տակից դէպի դուռը: Ես ետեւից պիտի հասնէի, բայց ձախ ձեռիս վերա մի ծանրութիւն կախ ընկաւ — սա կլնն էր: Ես դուրս էի վազում, նա առաւել եւս ծանր կախ ընկաւ եւ չէր բաց թողնում: Այս անակնկալ արգելքը, ծանրութիւնը եւ նորա զգուհի չփփելը — եւս առաւել բորբոքեցին ինձ: Զգուժէի, որ ես բալորովին կատաղի եմ եւ զարհուրելի պիտի լինէի եւ ուրախանումէի սորանով: Ես թօթափեցի բոլոր ոյժովս ձախ ձեռս

եւ ձեռիս արմուկը դիպաւ ուղիղ նորա երեսին: Կլնը բացազանչեց եւ ձեռս բաց թողեց: Ես կամենումէի մարդու ետեւից վազել, բայց մտաբերեցի, որ ծիծաղելի կլնէր գուլպաներով վազել կնոջս սիրականի ետեւից, իսկ ես չէի կամենում ծիծաղելի լինել, այլ զարհուրելի: Չնայելով զարհուրելի կատաղութեանս, որի մէջ գտնվումէի, ամբողջ ժամանակ յիշումէի, թէ ինչ տպաւորութիւն եմ գործում ուրիշների վերա: Եւ մինչեւ անգամ այս տպաւորութիւնն էր մտտամբ առաջնորդում ինձ: Երեսս դարձրի կնոջը: Նա ընկել էր փոքրիկ բազմոցի վերա եւ արմուկիս ցաւեցրած աչքերը բռնելով նայումէր ինձ: Նորա դէմքի մէջ կար վախ եւ ատելութիւն դէպի ինձ — դէպի իր թշնամին, ինչպէս որ մկան մէջ, երբ վերցնում են որոգայթը, սրի մէջ ընկել էր: Ես գոնէ ոչինչ չտեսայ նորա մէջ բացի այս վախից եւ ատելութենից դէպի ինձ: Այս իսկապէս այն վախն էր եւ ատելութիւնը դէպի ինձ, որոնք ծնունդ պիտի առնէին ուրիշին սիրելուց: Բայց գեռ կարելի է, կրճէի ինձ եւ չէի սնի այն, ինչ որ արի, եթէ նա լուռ մնար: Բայց նա յանկարծ սկսեց խօսել եւ բռնել դաշոյն բռնած ձեռս. — Խելքի եկ, ի՛նչ է եղել քեզ: Ոչինչ չկայ, ոչինչ, ոչինչ, երզուումեմ:

Ես գեռ եւս կզանդաղէի, բայց նորա այս վերջին խօսքերը, որով ես հակառակն եզրակացրի այսինքն թէ ամեն բան եղել է, պատասխան էին պահանջում: Եւ պատասխանն համեմատ պիտի լինէր այն տրամադրութեանը, որի մէջ գտնվումէի, եւ որը հետեւեալ աւելանումէր crescendo եւ պիտի շա-

րունակվէր սաստկանալ : Կատաղութիւնն եւս իր օրէնքներն ունի : — Սուտ մի խօսեր , գարշելի կին , աղաղակեցի ես եւ ձախ ձեռով բռնեցի նորան ձեռներից , բայց նա դուրս պրծաւ : Այն ժամանակ , այնու ամենայնիւ դաշոյնը բաց չթողնելով , բռնեցի նորան ձախ ձեռով կոկորդից , տապալեցի մէջքի վերա եւ սկսեցի խեղդել : Նա երկու ձեռով բռնեց ձեռներիցս , մղելով ձեռներս իր կոկորդից , որ տեղից խեղդումէի , եւ մի եւ նոյն ժամանակ հարուած տուի նորան դաշոյնով կողերից ներքեւ ձախ կշախն : Երբ մարդիկ ասումեն թէ նոքա կատաղութեան բորբոքման մէջ չեն յիշում թէ ինչ են անում — սուտ է , անմիտ խօսքեր են : Ես ամեն բան յիշում էի , եւ ոչ մի վայրկեան յիշելուց չեմ դադարել : Որքան աւելի սաստիկ էի բորբոքում իմ մէջ կատաղութեան գողորչին , այնքան ավելի պայծառ էր վառվում իմ մէջ գիտակցութեան լոյսը , որով ես չէի կարող չտեսնել այն ամեն արածս : Չեմ կարող ասել , որ ես գիտէի առաջուց թէ ինչ պիտի անեմ , բայց նոյն վայրկեանին , երբ անումէի , նաեւ կարծեօք փոքր ինչ առաջադոյն — ես գիտէի արածս կարծես զղջալս հնարաւորելու համար , որպէս զի ինքս ինձ ասէի թէ ես կարող էի ինձ յետ պահել : Ես գիտէի , որ հարուած եմ հասցնում կշախն եւ թէ դաշոյնը կխրվի : Այն բոպէին , երբ այս անումէի , ես գիտէի , որ սարսափելի բան եմ անում — այնպիսի բան , որպիսին երբէք չէի արել եւ որպիսին սարսափելի հետեւանքներ կուեննայ : Բայց այս գիտակցութիւնը փայլեց կայծակի պէս եւ գիտակցութենից յետոյ իսկոյն առաջ եկաւ գործողութիւնը :

Իմ գործողութիւնս հասկանումէի գերօրինակ պայծառութեամբ : Ես լսեցի եւ յիշումեմ մի ակնթարթ սեղմիրանի (կօրսէտի) եւ դարձեալ ինչ որ մի ուրիշ բանի ընդդիմադրութիւնը եւ յետոյ դաշոյնի խրվելը մի փափուկ տեղ : Նա բռնեց ձեռներով դաշոյնից , կտրեց ձեռները , բայց չկարողացաւ արգիլել : Ես յետոյ բանտում , երբ իմ մէջ բարոյական յեղափոխութիւն կատարվեցաւ երկար մտածումէի այն բոպէի վերա , մտաբերումէի ինչ որ կարողանումէի , եւ խորհրդածումէի : Մտաբերումեմ , որ մի ակընթարթ , գործողութենիցս առաջ , հասկանումէի , որ սպանումեմ եւ սպանեցի կնոջը , իմ կնոջս : Այս գիտակցութեան զարհուրանքը մտաբերումեմ , ուստի եզրակացնումեմ եւ մինչեւ անգամ յիշումեմ թոյլ կերպով , որ դաշոյնը խրելուց յետոյ , իսկոյն դուրս քաշեցի նորան , ցանկանալով արածս ուղղել եւ դադարեցնել : Նա վեր թռաւ եւ բացագանչեց . « Դայեակ , նա սպաննեց ինձ » : Ազմուկը լսող դայեակը կանգնած էր դրան մէջ : Ես դարձեալ կանգնած էի , սպասելով եւ չհաւատալով : Բայց այն բոպէին նորա սեղմիրանի տակից , իբրեւ մի խողից , արիւնը ցայտեց : Այն ժամանակ միայն հասկացայ , որ ուղղել չէ կարելի եւ իսկոյն եւեթ վճռեցի , որ հարկաւոր եւս չէ , թէ ես իսկ այդ եմ կամենում եւ իսկ այդ պիտի անէի : Ես սպասեցի մինչեւ նա վայր ընկաւ եւ դայեակը « սարսափելի գործ » աղաղակով վազեց դէպի նա , այն ժամանակ միայն ձգեցի դաշոյնը եւ դուրս գնացի սենեակից : « Պէտք չէ շփոթվել , հարկաւոր է իմանալ թէ ինչ եմ անում » , ասացի ինքս ինձ , չնայելով նորան եւ դայ-

եակին : Դայեակը գոչումէր , աղախին էր կանչում :
 Ես անցայ նրբանցքի մէջով եւ աղախինն ուղարկե-
 լով գնացի սենեակս : Ի՞նչ պէտք է անել այժմ ,
 հարցրի ինձանից եւ իսկոյն հասկացայ թէ ի՞նչ :
 Առանձնասենեակս մտնելով , ես ուղղակի մօտեցայ
 պատին , հանեցի այն տեղից ատրճանակը , գննեցի
 նորան — լցված էր — եւ զրի սենդանի վերա : Յե-
 տոյ հանեցի պատեանը բազմոցի ետեւից եւ ամ-
 բողջ մարմնովս նստայ բազմոցի վերա : Երկար նըս-
 տած էի այսպէս : Ոչինչ չէի մտածում , ոչինչ չէի
 մտախորում : Լսումէի , որ այնտեղ մի բան էին ա-
 նում : Լսեցի ինչպէս եկաւ մին , յետոյ դարձեալ մի
 ուրիշը : Յետոյ լսեցի եւ տեսայ , ինչպէս Գէորդ
 ներս բերեց առանձնասենեակս իմ բերած կողովը :
 Կարծես թէ ում եւ իցէ հարկաւոր բան էր : « Լսեցիր ,
 ի՞նչ պատահեց » — ասացի ես , « ասա զո՞ւսականին ,
 որ ոստիկանութեանն իմացնեն » : Նա ոչինչ չասաց
 եւ գնաց : Ես վերկացայ , կողպեցի դուռը , հանեցի
 ծխախոտը եւ լուցկին եւ սկսեցի ծխել : Ես չէի
 վերջացրել զեռ ծխախոտս , որ քունս տարաւ յան-
 կարծ : Ես քնած էի երեւի երկու ժամ : Յիշումեմ ,
 երազումս տեսայ , որ մենք սէրով ենք կնոջս հետ ,
 կուռեցանք , բայց հաշտվումէինք , փոքր ինչ ար-
 գելք կար , բայց մենք բարեկամներ ենք դարձեալ :
 Ինձ զարթեցրեց զբանս բաղխումն : Սա ոստիկա-
 նութիւնն է , մտածեցի ես զարթելիս , չէ որ ես
 սպանեցի , կարծեօք : Բայց կարելի է այս կլնս է ,
 եւ ոչինչ չէ եղել : Դուռը դարձեալ բաղխեցին : Ես
 ոչինչ չպատասխանեցի , զճուռմէի հարցը , եղել է այս
 թէ չէ եղել : Այո , եղել է : Մտաբերեցի սեղմիրանի

ընդդիմադրութիւնը եւ յետոյ . . . այո , եղել է :
 Այո , եղել է : Հապա այժմ պէտք է ինձ եւս , ա-
 սացի ինձ ու ինձ : Բայց այս ասումէի եւ գիտէի ,
 որ ինձ չեմ սպանի : Սակայն վերկացայ եւ ատրճա-
 նակ վերցրի : Բայց օտարտոյ բան է . յիշումեմ ինչ-
 պէս առաջ շատ անգամ ես ինքնասպանութեան մօտ
 էի , ինչպէս այն օրն եւս երկաթուղու մէջ այս ինձ
 հեշտ էր թուում , հեշտ էր իսկապէս . որովհետեւ
 մտածումէի թէ սորանով որքան կղարմացնեմ կնո-
 ջը : Այժմ ես ամենեւին չէի կարողանում ոչ միայն
 սպանել ինձ , այլ եւ մտածել սորա մասին : Ի՞նչի
 եմ անում այս , հարցրի ինքս ինձ , եւ պատասխան
 չկար : Դուռս դարձեալ բաղխեցին : Այո , նախ պէտք
 է իմանալ , այս ով է բաղխում : Դեռ ժամանակ կու-
 նենամ : Ես վայր զրի ատրճանակը եւ լրագրով
 ծածկեցի : Մօտեցայ զբանը եւ յեռ քաշեցի սոճակը :
 Սա կնոջս քոյրն էր , մի բարի , յիմար այրի կին :
 « Վասօ , այս ի՞նչ բան է » ասաց , եւ սկսեցին թափ-
 վել միշտ պատրաստ արտասուքներ : — Ի՞նչ կայ
 կուպիտ կերպով հարցրի ես : Ես տեսայ , որ ամե-
 նեւին պէտք չէր եւ առիթ չկար նորա հետ կուպիտ
 լինելու , բայց ես չկարողացայ ուրիշ ոչինչ եղանակ
 գտնել : « Վասօ , նա մեռնումէ : Իվան Ֆէօօրօվինչն
 ասաց » — Իվան Ֆէօօրօվինչը բժիշկն էր , նորա
 բժիշկ , խորհրդատուն : « Մի՞թէ նա այստեղ է »
 հարցրի , եւ բոլոր զայրոյթս նորա դէմ նորից շարժ-
 վեցաւ : — « Լաւ , ի՞նչ կայ » : — « Վասօ , գնա նորա
 մօտ : Ո՛հ , ինչ սարսափելի բան է , ասաց նա : —
 Գնամ նորա մօտ , առաջարկեցի ինձ այս հարցը :
 Եւ իսկոյն պատասխանեցի թէ պէտք է գնալ նորա

մօտ, թէ երեւի միշտ այսպէս է լինում, թէ երբ ամուսինն ինձ պէս սպանել է կնոջը, անշուշտ պէտք է գնալ նորա մօտ: «Եթէ այսպէս են անում, պէտք է գնալ» — ասացի ինձ ու ինձ: Այո, եթէ հարկաւոր կլինի, միշտ ժամանակ կունենամ, մտածումէի ինքս ինձ սպանելու դիտաւորութեանս համար, եւ քնացի նորա հետ: Այժմ կսկսվին անիմաստ խօսքեր, ծածուկութիւններ, բայց ես չեմ գիշանի», ասացի ինքս ինձ: «Սպասիր», ասացի քրոջը «յիմարութիւն է առանց կօշիկների, թող գտնէ հողաթափներս հազնեմ»:

ԻԸ.

Եւ զարմանալի բան է: Կրկին, երբ ես դուրս եկայ սենեակից եւ անցնումէի մեր առօրեայ սենեակների մէջով, կրկին իմ մէջ երեւեցաւ սովորական յոյսը, թէ ոչինչ չէ եղել, բայց այս բժշկական զարշուժեան հոտը — Իօդօֆօրմ, կարբօլ սթափեցրեց ինձ: Ոչ, բոլորն եղել է: Նրբանցքից անցնելու անգամ, թէ այն տեղ էին բոլոր հինգ մանուկներն եւ նայումէին ինձ: Ես մօտեցայ դրանք, եւ աղախինք ներսից բացեց իմ առաջ դուռը եւ դուրս գնաց: Աչքին ընկած առաջին բանը նորա բաց մոխրագոյն հագուստն էր աթոռի վերա, արեւնից բոլորովին սեւացած: Մեր երկանձնեայ անկողնի վերա, մինչեւ անգամ իմ անկողնի վերա (սորան մօտենալն աւելի հեշտ էր) պառկած էր նա բարձրացած

ծնկերով: Շատ թէքված էր պառկած, միմիայն բարձերի վերա, կոճակներ արձակած բաձկոնով: Վէրքի տեղը մի բան զրված էր: Սենեակի մէջ Խօդօֆօրմի ծանր հոտ կար: Նախ եւ ամենից աւելի ինձ զարմացրեց նորա ուռած եւ ջրգողութեամբ կապուտացած երեսը, քթի մի մասը եւ աչքերի տակը: Սա արմուկովս տուած հարուածիս հետեւանքն էր, երբ նա կամենումէր բռնել ինձ: Ոչինչ զեղեցկութիւն չունէր, այլ մի զարշելի բան երեւեցաւ նա ինձ: Ես կանգ առի շէմքի մօտ: «Մօտեցիր, մօտեցիր նորան» — ասումէր ինձ քոյրը: Այո, երեւի նա կամենումէ զղջալ, մտածեցի: Ներքի: Այո — նա մեռնումէ, եւ կարելի է ներել նորան, մտածումէի, ջանալով վիհանձն լինել: Ես բոլորովին մօտեցայ: Նա դժուարութեամբ բարձրացրեց աչքերն իմ վերաս, որոնցից մին վնասված էր, եւ դժուարութեամբ, կակաղելով ասաց. «Հատար նպատակիդ, սպանեցիր», եւ նորա դէմքում ֆիզիքական տանջանքի եւ մինչեւ անգամ իր մահամբձ ժամում արտայայտվեցաւ նոյն հին, ինձ ծանօթ, սառն ատելութիւնը: «Չաւակներին . . . ես այնու ամենայնիւ . . . քեզ . . . չեմ տայ: Սա (իր քոյրը) կառնէ: Իսկ այն մատին, ինչ որ ինձ համար գլխաւորն էր, իր յանցանքի մասին, դաւաճանութեան մասին, նա կարծես արժան չէր համարում յիշելու: «Այո, վայելիր քո արածդ,» ասաց նա, դրանք նայելով, եւ հեկեկաց: Դրան մէջ կանգնած էր քոյրը մանուկների հետ: «Այո, ահա դու ինչ արիր»: Ես նայեցի մանուկներին, նորա ջրգողած, վնասված երեսին եւ առաջին անգամ մոռացայ ինձ, իմ իրաւունքներս,

իմ հպարտութիւնս , առաջին անգամ տեսայ նորա մէջ մարդուն , քրոջ : Եւ այնպէս չնչին երեւեցաւ ինձ այն բոլորն , ինչ որ վերաւորումէր ինձ — իմ բոլոր նախանձոտութիւնս — եւ այնպէս չափազանց երեւեցաւ իմ արածը , որ կամենումէի երեստ խոնարհեցնել նորա ձեռին եւ ասել «ներիւր» , բայց չէի համարձակուում : Նա լուռ էր , աչքերը փակած , երեւում էր , որ ոյժը չէր ներում այլ եւս խօսելու : Յետոյ նորա անձոնացած դէմքը յանկարծ դողաց , կնճովեցաւ : Նա թոյլ կերպով հրեց ինձ :

— Ի՞նչի — այս բոլորն եղաւ : Ի՞նչի :

— «Ներիւր ինձ » Ասացի ես : «Այո , եթէ դու ինձ չսպանէիր» , յանկարծ դոչեց նա , եւ նորա աչքերը տենդային ձեւով փայլեցին : — «Ներիւր» — «Այո բոլորն յիմարութիւն է «Միայն թէ չմեռնէի : Այո , դու հասար նպատակիդ : Ատումնս : » Յետոյ սկսվեցաւ զառանցութիւնը : Նա սկսեց վախենալ , գոչել . «Արձակիր , խփիր , ես չեմ վախենում . . . միայն ամենքինիս փիր : Գնաց , գնաց» : Զառանցութիւնը ամբողջ ժամանակ շարունակվումէր : Նա չէր կարողանում ճանաչել մանուկներին , նաեւ Լիզային , որը ներս էր սպրդել :

Նոյն օրը կէս օրին մօտ նա մեռաւ : Ինձ սորանից առաջ ութ ժամին տարան ոստիկանարան եւ այն տեղից բանտ : Այնտեղ մնացի տասն եւ մի ամիս , սպասելով դատաստանին , ես խորհումէի իմ եւ իմ անցեալի մասին եւ հասկացայ : Սկսեցի հասկանալ երրորդ օրը : Երրորդ օրն ինձ տանումէին այն տեղ . . . » :

Նա կամենումէր մի բան ասել , եւ անկարող լինելով պահել հեծկտանքը , կանգնեց : Ոյժերը հաւաքած , նա շարունակեց .

— «Ես սկսեցի հասկանալ միայն այն ժամանակ , երբ տեսայ նորան դադաղի մէջ» :

Նա հեկեկաց , բայց իսկոյն եւեթ շտապով շարունակեց .

«Միայն երբ տեսայ նորա մեռած դէմքը , ես հասկացայ այն բոլորն , ինչ որ արի : Հասկացայ , որ ես , ես սպանեցի նորան , որ ինձանից եղաւ այն , որ նա կենդանի , շարժուն , տաք էր , իսկ այժմ անշարժ , մեղրամոմի պէս , ամբողջապէս սառն էր , եւ որ այս ուղղելն ոչ երբէք , ոչ մի տեղ , ոչնչով չէ կարելի : Նա , ով սորա մէջ ով չէ անցել , չէ կարող եւ հասկանալ» :

Մենք երկար լուռ նստած էինք : Նա հեկեկումէր եւ լուռ դողդողում իմ առաջ : Նորա դէմքը բարակ , երկար դարձաւ եւ բերանը ամբողջ լայնութեամբ լայնացաւ :

— «Այո ասաց նա յանկարծ : Եթէ ես իմանայի , ինչ որ այժմ գիտեմ , այն ժամանակ բոլորովին ուրիշ բան կլինէր : Ես չէի ամուսնանայ նորա հետ , ոչ երբէք եւ ոչ մի կերպով չէի ամուսնանայ »

Կրկին մենք երկար լուռ էինք :

— «Այո : Ահա թէ ինչ արի եւ անա ինչ բանի մէջով անցայ : Այո , հարկաւոր է բուն նշանակութիւնն հասկանալ , որ Աւետարանի խօսքերը , Մատթէոս , Ե . 28 — թէ «ամենայն ոք , ով նայումէ կնոջը նորան ցանկանալով , շնանումէ» վերաբերվումն կնոջը , քրոջը , ոչ միայն ուրիշի , օտար կնոջը , այլ առաւելապէս սեփական կնոջդ : »

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

(Ա մ փ ո փ ու մ ն)

Շատ նամակներ ստացայ եւ ստանումեմ ինձ ան-
ծանօթներից , որոնք խնայրումեն ինձ բացատրել
պարզ խօսքերով թէ ինչ եւմ մտածում կրէյցէրեան
Սօնատի նիւթի մասին : Փորձեմ ուրեմն : Այս նիւթի
մասին հետեւեայն եւմ մտածում :

Նախ եւ կարծումեմ , որ մեր հասարակութեան
մէջ , սուս գիտութեան պաշտպանութեամբ , ստեղծ-
վել է ամեն գատակարգի ընդհանուր եւ հաստատուն
համոզումն թէ սեռական յարաբերութիւնը մարդիկ-
ների առողջութեանն անհրաժեշտ է , եւ բոլորովին
ներկի . ուստի ամուրիները կատարելապէս հանգիստ
խղճով անձնատուր են լինում անառակութեան : Ո-
ւմանք ծնօղներն եւս , բժիշկների խորհրդով , անա-
ռակացնումեն իրանց զուակներին , իսկ կառավա-
րութիւններն , որոնց միակ նշանակութիւնն իրանց
քաղաքացիների բարոյական բարեկացութեան հոգա-
տարութիւնն է , անառակութիւնն են հաստատում
այսինքն այնպիսի կանանց ամբողջ մի դասակարգ
են կանանաւորում , որոնք հոգով եւ մարմնով կոր-
ծանվումեն քաղաքացիների առողջութեան կարծեց-
եալ կարիքների համար :

Այս լաւ չէ , որովհետեւ անկարելի է , որ ումանց
առողջութեան համար հարկաւոր լինէր կորցնել
միւսների հոգին եւ մարմինը , ինչպէս որ անկարե-
լի է ումանց առողջութեան համար պէտք լինէր միւս-
ների արիւնը խմելը :

Ուրեմն նախ պէտք չէ հաւատալ անբարոյական
վարդապետութիւններին , ինչ գիտութիւններով եւս
որ հաստատվում լինին , եւ սպա գրամով կամ ձրի
սեռական յարաբերութիւն ունենալ եւ պատասխա-
նատուութիւնը միայն կնոջ վերա թողնել , հետե-
ւանքներից իրան ազատ համարելով , անարգութիւն է :
Ուստի անարգաբար ապրել չկամեցող ամուրիները
պիտի զսպեն իրանց ամեն կանանց վերաբերմամբ
նոյնպէս , ինչպէս որ պիտի զսպէին իրանց եթէ նո-
ցա շուրջ միմիայն իրանց մայրերն եւ քոյրերը լի-
նէին : Իսկ զսպվել կարողանալու համար մարդիկ
բնական կեանք պիտի վարեն , չարքեհան , չափա-
զանցօրէն չուտեն , միս չուտեն , չխուսափեն ոչ թէ
մարմնամարդութիւնից , այլ վաստակարեկ աշխատու-
թիւնից : Իսկ թէ զսպելն հնարաւոր է եւ այնքան
վասնդաւոր եւ վնասակար չէ առողջութեան
համար , որքան չզսպելն , իւրաքանչիւր մարդ հա-
րիւրաւոր ազոցոյցներ կզանէ իր շուրջ : Այս ա-
ռաջին :

Երկրորդ եւ կարծումեմ , որ մեր հասարակու-
թեան մէջ — սիրային յարաբերութեան մասին կազ-
մված հայեացքի պատճառով թէ որպէս կեանքի
բանաստեղծական վեւմ բարիք , թէ որպէս ա-
ռողջութեան անհրաժեշտ պայման — ամուս-
նական անհաւատարմութիւնը հասարակութեան
ամեն խաւերի մէջ (գիւղացիների մէջ առաւել
եւս ,) ամենատարական , ամենահաճելի եւ կեան-
քը զարգարող գործ է դարձել , ինչպէս նկարա-
գրվումէ բանաստեղծութիւնների , պատումների ,
սիրապատումների , օպերաների եւ պատկերների

մէջ : Ուստի հարկաւոր է , որ սիրահարութեան եւ մարմնական սէրի վերա հայեացքը փոխվի . մաքրիկ եւ կանայք այնպէս պիտի կրթվին թէ ընտանիքներում եւ թէ հասարակական կարծիքով , որ այս անասնական յատկութիւնը — սիրահարութիւն եւ մարմնական սէրը — թէ ամուսնանալուց առաջ եւ թէ յետոյ , չհամարէին բանաստեղծական վսեմ վիճակ կամ պարծենալու արժանի ճարպիկութիւն , ինչպէս համարումն պժմ , այլ մարդու համար առարգական ցած անասնական վիճակ : Այս երկրորդ :

Երրորդ եւ կարծումեմ , որ մեր հասարակութեան մէջ սիրահարութեան եւ մարմնական սէրի միեւնոյն սուտ նշանակութեան պատճառով որդէծնութիւնը կորցրած է իր իմաստը : Փոխանակ ամուսնական յարաբերութիւնների նպատակ եւ արդարացումն լինելու սիրահարական հաղորդակցութիւնների հաճելի շարունակութեան խափանառիթ է եղել : Ուստի թէ ամուսնութեան մէջ եւ թէ ամուսնութենից դուրս , գիտութեան — այսինքն բժիշկների անբարոյական միջամտութեան շնորհով , կամ սկսեցին կանանց որդէծնութենից ազատելու միջոցներ գործ դնել , կամ սովորութիւն դարձրին յղութեան եւ մուսնանելու միջոցում մերձաւորութիւններ շարունակելու , ինչ որ չկար առաջ եւ ինչ որ դեռ եւս չկայ գիւղացիների նահապետական ընտանիքներում : Այս լաւ չէ , որովհետեւ կործանումէ կնոջ մարմնական եւ առաւելապէս հոգեկան ոյժերը : Եւ այս շանելու համար պէտք է հասկանալ , որ ժուժկալութիւնը մարդկային արժանաւորութեան անհրաժեշտ պայման լինելով ամուրի վիճակի մէջ , առաւել պարտաւորա-

կան է ամուսնութեան մէջ եւ թէ խոհականութիւնը շնորհված է մարդուն ոչ թէ անասնից ստոր լինելու համար , այլ նորանից բարձր լինելու : Իսկ սաղմը ոչնչացնելը վայելչութեան համար եւ յղութեան եւ մուսնանելու միջոցում մերձաւորութեան շարունակութիւնը նշանակումէ անասնից գերազանցել անասնականութեան մէջ : Այս երրորդ :

Չորրորդ եւ կարծումեմ , որ մեր հասարակութեան մէջ , զաւակներն արգելք լինելով յայտնի վայելչութեան , կրթվումն ոչ թէ կեանքի առաջիկայ խնդիրներն ինկատի ունենալով , այլ միայն ծնօղների ակնկալած զուարճութիւնների համար :

Ուստի մարդիկները զաւակները կրթվումն անասունների պէս , եւ ծնօղների գլխաւորն հոգն (սուտ գիտութիւնը — բժիշկներն եւս օգնումն) է , որ շատ լաւ մտկին , աւելայնն նոցա միւր , հասակը , մաքուր , սպիտակ , կուշտ , սիրուն դարձնեն նոցա : Նոցա ամենայն կերպով լուսնումն , ինսամում , կերակրում եւ չեն ստիպում աշխատելու , եւ պարարած մանուկների մէջ , ինչպէս ամին պարարած անասունների մէջ , անբնականապէս վաղ է զարթում անյաղթելի , տանջող ցանկասիրութիւնը :

Չարդարանքներ , ընթերցանութիւն , հանդէսներ , երաժշտութիւն , պարեր , քաղցր կերակուր , կեանքի բոլոր սարք ու կարգ , արկղիկների պատկերներից սկսած մինչեւ սիրաստուտներ , պատումներ , վէպեր եւս առաւել վառումն այս ցանկասիրութիւնը , եւ այս պատճառով սեռական արատներ եւ հիւանդութիւններ երկուքեան սեռի մանուկների պատանեկան հասակի

սովորական պայմաններ են դառնում եւ յաճախ
մնումն հատուն հասակում եւս :

Պէտք է դադարել մարդկային զաւակներին կըր-
թել իբրեւ անատունների զաւակներին եւ կրթու-
թեան նպատակը միայն սիրուն , պարարված մար-
մինը չհամարել : Այս չորրորդ :

Հինգերորդ եւ կարծումն , որ մեր հասարակու-
թեան մէջ մարմնական սէրին եւ սիրահարութեանը
տրված սուս նշանակութեան պատճառով , մարդիկ-
ների գլխաւոր ոյժերը կորչումն կեանքի լաւագոյն
միջոցում , այրելն — իրանց սէրի առարկան զիտե-
լով , որի համար ներելի են համարվում ստութիւն
եւ խաբէութիւն , կանայք եւ օրիորդներն այս մար-
դիկներին գրաւելով դէպի մերձաւորութիւն կամ
ամուսնութիւն , որի համար կանայք չեն գարչում
ամենատար միջոցներ գործադրելուց . — պոռնիկների
նորածեւութիւններին նմանելուց եւ ցանկասիրու-
սիրութիւնը գրգռող մարմնի մասները մերկ ցոյց
տալուց :

Այս լաւ չէ , որովհետեւ մարմնական սէրի վայել-
չութեան հասնելու նպատակը , որքան եւ բանաս-
տեղծված լինի , մարդուն անարժան անասնական
նպատակ է եւ ծագումէ կոպիտ եւ անասնական
հայեացքից կեանքի վերա , ինչպէս որ քաղցր եւ
առատ անուղը բարձրագոյն բարիք եւ մարդու
գործունէութեան արժանաւոր նպատակ է համար-
վում : Հարկաւոր չէ այս անել եւ որպէս զի այս
չանեն , մարդիկ պիտի հասկանան , որ մարդուն ար-
ժանաւոր նպատակը — մարդկութեան , թէ երկ-
րին , թէ գիտութեան , թէ գեղարհետին ծառա-

յութիւնը (չասենք արդէն Աստուծուն ծառայելու
մասին) սրպիտի եւ իցէ , եթէ միայն մարդու համար
արժանի ենք համարում այն ծառայութիւնը , անշուշտ
անձնական վայելչութենից դուրս է գանվում ,
ուստի սիրահարութիւնն եւ մարմնական սէրը , (թէ
եւ շատ աշխատէին հակառակն ապացուցանել ոտանա-
ւոր եւ արձակ գրվածներով) , երբէք չեն թիթեւա-
ցնում մարդուն արժանաւոր նպատակին հասնելը ,
այլ միշտ դժուարացնումն նորան : Այս հինգերորդ :
Ահա մտաւորապէս այն գլխաւորն , ինչ որ ես
մտածումէի պատու միս նիւթի մասին :

« Իսկ մարդկային ա՞ղզը » : Եթէ ընդունումն թէ
անամուսնութիւնն ամուսնութենից առաւել լաւ է
եւ թէ մարդկութեան նպատակը ժուժկալութեան
ձգտելն է , ուրեմն մարդկային աղզը կսպառվի :
Իսկ եթէ ըզոր դատողութենից եզրակացութիւնն
այն է , որ մարդկային աղզը պիտի սպառվի , ուրեմն
ամբողջ գատողութիւնն ուղիղ չէ » :

Սակայն այս գատողութիւնն իմս չէ : Ես չեմ
հնարել սորան : Թէ մարդ պիտի ձգտէ ժուժկալու-
թեան եւ անամուսնութիւնն ամուսնութենից լաւ է
— այս ճշմարտութիւնն յայտնեց Քրիստոս 1900 տա-
րի առաջ , որը գրված է մեր վարդապետարաննե-
րում եւ ամենքս զաւանուսնեք : Աւետարանի մէջ
պարզ եւ առանց յեղաշրջելու հնարաւորութեան
սոված է , որ ամուսնացածը , որին ճշմարտութիւն
ձանաչելու ժամը ամուսնացած կգտնէ , իր ամուսնի
հետ պիտի մնայ , չամուսնացածը թող բնաւ չա-
մուսնանայ եւ ժուժկալ լինել շարունակէ » (Մատթ .
ժ. Թ . 8 եւայլն) :

Այս ասաց Քրիստոսն , եւ սոյն այս է վկայում մարդկութեան պատմութիւնը , եւ իւրաքանչիւր մասնաւոր մարդու թէ խիղճը թէ բանականութիւնը : Պատմութիւնը ցոյց է տալիս ամենահին ժամանակներին թէ մարդկութիւնը միշտ դիմել է անառակութենից դէպի ժուժկալութիւն : Սեռերի խառնակութենից դէպի բազմակնութիւնը , բազմակնութենից դէպի միակնութիւնը , անժուժկալ միակնութենից դէպի ժուժկալ ամուսնութիւնը : Մեր խիղճը հաստատում է մի եւ նոյնը , նոյնպէս միշտ դատապարտում է անժուժկալութիւնը , գովում է ժուժկալութիւնը եւ բարոյապէս միշտ բարձր է դասում ժուժկալ մարդուն : Մի եւ նոյն բանն է հաստատում բանականութիւնն եւս , ցոյց տալով , որ երկրիս չափազանց բնակիչներով լցվելու անխուսափելի խնդիրը մարդու զգացման համաձայն լուծելու միակ հնարն է ձգտումն դէպի ժուժկալութիւնը , թէպէտ այս հնարը , մարդու համար բնական լինելով , հակառակ է կենդանուն :

Եւ զարմանալի է , որ կային եւ կան Մալտուսի տեսութիւններ , որ հեազհետէ տարածվում է պոստկոլութիւնը (ամենայն սեռական մերձաւորութեան առանց որդէծնութեան չգիտեմ այլապէս անուանել , եթէ ոչ պոստկոլութիւն) , որ միլիոնաւոր մանուկներ կորչում են ցրտից եւ աղքատութենից , որ բազմաթիւ միլիոն մարդիկ մեռնում են պատերազմի մէջ , որ տէրութիւնների գլխաւոր գործունէութիւնն դարցրած է որքան կարելի է բազմացնել մարդիկներին սպանելու հնարաւորութիւնը , այս ամենն ոչինչ է եւ վտանգաւոր չէ մարդկային ազգի համար : Բայց

մարդս ձայն կհանէ թէ չէ կրքերը զսպելու եւ ժուժկալ լինելու մասին , — մարդկային ազգն արդէն վտանգի մէջ է :

Երկու եղանակ կայ ճանապարհ ցոյց տալու ճանապարհ պտռոզ մարդուն : Մին թէ գնա գէպ ի այն ծառը , ծառից դէպի գիւղը , գիւղից գետի ափով դէպի բլուրը եւ այլն . Միւս եղանակն է ուղղութիւնը ցոյց տալ . գնա գէպի արեւելք , անմերձեւալի արեգակը կամ աստղը քեզ միշտ ցոյց կտան ուղղութիւնը :

Առաջին եղանակը ժամանակաւոր , արտաքին , կրօնական բացատրութիւններն եղանակ է : Միւս եղանակը յաւիտենական անփոփոխելի ճշմարտութեան ներքին գիտակցութեան եղանակ է : Առաջին եղանակը մարդուն ցոյց է տալիս այն գործերի որոշ նշանները , որոնք նա պարտական է կամ չէ պարտական կատարելու : Երկրորդ եղանակը ցոյց է տալիս մարդուն յաւիտենական անհասանելի , բայց իրան հասկանալի նպատակը եւ այս նպատակը ուղղութիւն է տալիս նորա բոլոր մտաւորական գործունէութեանը . « Յիշիր շաբաթ օրը , թլիսաովիր , մի՛ արբենար , մի՛ գողանար , տուր աղքատներին տասանորդը , մի՛ չնար , միտովիր , հաղորդվիր եւ այլն » : Այսպէս են բրահմական , բուդդայական , եբրայական , եւ եկեղեցական (որ քրիստոնէական է կոչվում) արտաքին վարդապետութիւնները :

« Միբիր Աստուծուն բոլոր սրտով եւ բոլոր հոգով , իսկ ընկերիդ իբրեւ քո անձիդ : — Ինչպէս կամենում էք , որ ձեզ հետ վարվին մարդիկ , այնպէս

վարվեցէ՞ք եւ դուք : — « Սիրիբ թշնամուդ » : Այս է Քրիստոսի վարդապետութիւնը : Սա մարդիկներին զործերին ոչինչ որոշմունք չէ տալիս : Սա միայն ցոյց է տալիս մարդիկներին այն անփոփոխելի կատարելատիպը (իգէտը) , որը իւրաքանչիւր մարդս գտնուով իր սրտով , երբ կրացվի նա իր առաջ :

Արտաքին վարդապետութիւնը դաւանողի համար օրէնքի ճիշտ կատարումն հասունացած կատարելութիւն է , եւ այս հասունութիւնը դադարեցնումէ յետագայ ամենայն ձգտում : Ահա փարիսեցիին դոհանումէ Աստուծուց նորա համար , որ ինքն ամեն բան կատարումէ : Հարուստ պատանին եւս ամեն բան կատարեց : Եւ նոքա չեն կարող շարունակել ձգտել : Բայց քրիստոնէական վարդապետութիւնը դաւանողի համար կատարելութեան մի աստիճանին հասնելն զարթեցնումէ բարձրագոյն աստիճան անցնելու կարիքը , որից բացվումէ առուել բարձր աստիճանը եւ այսպէս առանց վերջանալու :

Քրիստոնեան միշտ մաքսաւորի վիճակի մէջ է : Նա միշտ զգումէ իրան անկատար , իր առաջ տեսնելով այն ճանապարհը , որ պէտք է անցնէ եւ դեռ եւս չէ անցել : Արտաքին օրէնք դաւանողն այն մարդն է , որ կանգնած է ցցի վերա կախված լսատերի լոյսի մէջ . այս լոյսի մէջ կանգնած լինելով , այլ եւս գնալու տեղ չունի : Ներքին զիտակցութեան վարդապետութիւնը դաւանող մարդը նման է այն մարդուն , որը տանումէ լսատեր իր առաջ եւ երկար ձողի վերա . լոյսը միշտ առաջն է եւ միշտ ստիպումէ նորան գնալ ետեւից եւ նորից նորա առաջ նորանոր գրաւօղ լուսաւորված տարածութիւն-

ներ է բանում : Ասումեն թէ մարդկային ազգի կատարելատիպը չէ կարող ժուժկալութիւն եւ անամուսնութիւն լինել , սրովհետեւ ժուժկալութիւնը ոչնչացնումէ զէպի կատարելատիպը ձգտողին : Մարդկային ազգի կատարելատիպը չէ կարող իր ոչնչացումն լինել : Բայց կատարելատիպը միայն այն ժամանակն է կատարելատիպ , երբ նա անհատանելի է եւ երբ նորան մօտենալու հնարաւորութիւնն անվերջ է : Այսպէս է Աստուծու թագաւորութիւնն հաստատելու քրիստոնէական կատարելատիպը — ամեն կեանք ունեցողի սէրով միանալը : Նորան հասնելու գաղափարը հակառակ է կեանքի շարժման գաղափարին : Ինչ կեանք կարող է լինել , երբ ամենայն կեանքը հնարաւոր է միայն անհատանելի կատարելատիպին ձգտելիս : Եւ մինչև անգամ եթէ կատարեալ ժուժկալութեան քրիստոնէական կատարելատիպն իրազորովէր , այն ժամանակն եւս մենք մեր ամենաժամօթ եզրակցութիւններին կը յանդէինք մի կողմից կրօնի , որի դաւանութիւններից մին աշխարհի վերջն է , միւս կողմից զիտութեանը , որը հաստատումէ թէ արեգակը հեռզհեռէ պիտի ստուչէ եւ սորա անխուսափելի հետեւանքը մարդկային ազգի վերջն է : Քրիստոնեաներա իրականութեան եւ մեր զիտակցութեան սարսափելի հակառակութեան մէջ ենք սպրում , որ եկեղեցակաւ վարդապետութիւններն , որոնք անիրաւաբար քրիստոնէական են կոչվում , առանց հասկանալու անհատանելի յաւիտենական կատարելատիպը ցոյց տուող Քրիստոսի վարդապետութիւնը , այս քրիստոնէական կատարելատիպը արտաքին ծէսերով են փոխանակել ժամատացու-

թեան, վարդապետութեան, իշխանութեան եւ ուրիշ շատ բաների, նոյնպէս եւ ամուսնութեան վերաբերմամբ: Քրիստոս ոչ միայն երբէք չէ սահմանել ամուսնութիւնն, այլ եթէ որոնեւք արտաքին սրոշումը, կիմանանք, որ աւելի մերժումէր նորան («Թող կնոջը եւ եկ իմ ետեւից» ասումէր նա): Նա միայն պատուիրեց թէ ամուսնացածներին եւ թէ ամուրիներին ձգտել կատարելութեանն, որ բովանդակումէ իր մէջ ժուժկալութիւն ամուսնութեան մէջ եւ ամուսնութեանից զուրս: Իսկ եկեղեցիները Քրիստոսի վարդապետութեան հակառակ կամենալով սահմանել ամուսնութիւնն որպէս Քրիստոնէական հաստատութիւն այսինքն այն արտաքին պայմանները որոշել, երբ մարմնական սէրը կարող էր իբր թէ անմեղ եւ բոլորովին օրինաւոր լինել, բայց չը կարողանալով հիմնաւոր արտաքին հաստատութիւնն սահմանել, զրկեցին մարդիկներին Քրիստոսի առաջնորդող կատարելատիրաց: Առաջացաւ այն, որ մեր աշխարհի մարդիկը մի ափից հեռացան եւ միւսին չհասան. Քրիստոսի աւանդած ժուժկալութեան ճշմարիտ կատարելատիրայը կորցրին, եւ միայն արտաքուստ ընդունեցին հնարած, ոչնչի վերա չհիմնված ամուսնութեան խորհրդի եկեղեցական վարդապետութիւնը եւ չեն հաւատում նորան: Սորանից է առաջացել, որ ընտանեկան սկզբունքը եւ ամուսնական հաւատարմութիւնն անհամեմատ հաստատուն են արտաքին կրօնական ձեւեր դաւանող ազգերի — Հրէաների, եւ այլոց մէջ քան թէ քրիստոնեայ կոչված ազգերի մէջ: Նոքա ունին ամուսնութեան պարզ, որոշ արտաքին որոշմունք

քրիստոնեաներն ոչինչ որոշումն չունին: Ուստի եկեղեցական պսակ անունով հանդէսը կատարելուց յետոյ հոգեւորականների ձեռով, մեր հասարակութեան մարդիկը բազմակնութեան եւ բազմայրութեան կատարեալ անկարգութեան մէջ են ապրում, երեւակայելով թէ իրանց դաւանած միակնութեան մէջ են:

Քրիստոնէական պսակ չէ կարող լինել, ինչպէս չէ կարող լինել քրիստոնէական ժամասացութիւն (Մատթ. Ե. 12, Յովհ. Գ. 21), ոչ քրիստոնէական վարդապետներ եւ հայրեր (Մարկ. ԻԳ. 8-10), ոչ քրիստոնէական զօրք, ոչ դատաստան, ոչ տէրութիւն: Այսպէս են հասկանում այս միշտ թէ առաջին եւ թէ յետագայ դարերի ճշմարիտ քրիստոնեաները: Քրիստոնէութեան կատարելատիրայը ամուսնութիւնն չէ, այլ Աստուծու եւ ընկերի սէրն է:

Ուստի քրիստոնեայի համար մարմնական յարաբերութիւնը ամուսնութեան մէջ ոչ միայն չէ կարող օրինաւոր, արդար եւ բազմաւոր համարվել, ինչպէս համարվումէ մեր հասարակութեան մէջ մեր եկեղեցիներից, այլ միշտ անկումն, թուլութիւն, մեղք:

Քրիստոնէական ամուսնութիւն երբէք չէ եղած եւ չէ կարող լինել, բայց կայ քրիստոնէական յարաբերութիւն դէպի ամուսնութիւնը: Ահա այդ յարաբերութիւնը. քրիստոնեան, — խօսումն ոչ թէ այն մարդու մասին, որը իրան քրիստոնեայ է համարում այն պատճառով, որ նորան մկրտել են եւ հաղորդվումէ ամեն տարի, այլ իր կեանքում Քրիստոսի վարդապետութեամբ առաջնորդվող քրիստոնէի


մասին — քրիստոնեական չէ կարող մարմնական յարաբերութիւնը մեզք չհամարել, ինչպէս եւ սովածէ (Մատթ. Ե. 28) (Քրիստոնէական սոված ամուսնութեան եղանակը չէ կարող մի մազի չափ փոխել այս)։ Ուստի երբէք չի ցանկանայ ամուսնութիւն, այլ միշտ կիսուսափէ նորանից։ Իսկ եթէ քրիստոնեան կճանաչէ ճշմարտութիւնը, արդէն ամուսնացած լինելով, կամ թէ չկարողանալով սէրի քաղցրութեանն յաղթել, քրիստոնեան սեռական յարաբերութիւններ կսկսէ եկեղեցական ամուսնութեան միջնորդութեամբ կամ առանց նորան, այդ միջոցում նա կարող է մի միայն, առանց թողնելու կնոջը (կամ կինը մարդուն, եթէ խօսենք կանանց մասին) մեղտակցի հետ ձգտել դէպի ազատելն իրան մեղքից — դէպի առաւել մեծ փոժկայութիւնն ամուսնութեան մէջ, դէպի վերջնական կատարելատիպը, մարմնական սէրը փոխարինելով եղբօր եւ քրոջ մաքուր յարաբերութիւններով Այս է քրիստոնէական յարաբերութիւնը դէպի ամուսնութիւնն եւ ուրիշ չկայ եւ չէ կարող լինել այն մարդու համար, որը կեանքի մէջ Քրիստոսի վարդապետութեամբ է առաջնորդվում։ Շատ շատերի համար այս պատումի մէջ յայտնած գաղափարներն այս տեղ եւս օտարոտի եւ անիմաստ կերեւին, նաեւ հակասական, եւ արգարեւ հակասական են, բայց ոչ թէ միմեանց, այլ ամբողջ մեր կեանքին, եւ ակամայ կասկած է յայտնվում. ով է իրաւացի, գաղափարներն արդեօք, որոնք արդար են երեւում, թէ միլիօնաւոր մարդիկների եւ իմ կեանքը։

Ես եւս այս զգացումն էի զգում հօրաբազմի չա-

փով, երբ դրամէի պատումս. ես ամենեւին չէի սպասում թէ մտքերիս ընթացքը այս տեղ կհասցնէ ինձ։ Ես սարսափումէի իմ եզրակացութիւններից, կամենումէի չհաստատւի նոցա։ Բայց չհաստատւի չէ կարելի թէ բանականութեան, թէ խղճմանքին, եւ սրբան օտարոտի, սրբան հակառակ որ լինին այս եզրակացութիւնները մեր կեանքի ամբողջ կազմակերպութեանը, նոյնպէս եւ առաջագոյն իմ մտածած եւ յայտնած մտքերին, եւ պիտի նոցա ընդունէի»։ Բայց մարդս թոյլէ, հարկաւոր է նորան լուծելու խնդիր տալ իր ոյժերի համեմատ», ասումն։ Այս միեւնոյնն է թէ ասէին. «Իմ ձեռքս թոյլէ, ես չեմ կարող այնպիսի դիմ քաշել, որը ուղիղ լինէր այսինքն, երկու կէտերի մէջ ամենակարճը, ուստի ինձ թեթեւացնելու համար, ցանկանալով ուղիղ գիծ քաշել, ես իբրեւ օրինակ ծուռ կամ բեկեալ դիմը կաննեմ»։ Որքան աւելի թոյլ է ձեռս, այնքան առաւել պէտք է ինձ կատարեալ օրինակ։

6 Ապրիլի 1890 թ.

S. L.



ԵՈՐԷՆ ԾՕՅՐ ՎՍԵՐԱՊԵՏ ԱՏԵՓՈՆԷԻ

ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. **Հայկական Աւետարհ**, Աւետարհ 1865 թուից մինչեւ 1871 թիւը եւ 1874 թ. մինչեւ 1878 թ.:
2. **Աւետարհ** Աւետարհի խմբագրութիւնը 1879 եւ 1880 թ. Ա. Էջմիածնում:
3. **Մանկավարժանոց**, Մանկավարժական Աւետարհ 1884 թ. մինչեւ 1886 թ.:
4. **Համակերպական Պրոգրամներ** — ծրագիրներ (առաջին փորձ) աշակերտական կանոններով եւ դասխարակների հրահանգներով, Հայկ. Հոգ. Միակն եւ Միջնակարգ դպրոցների համար, 1883 թ. Գիճն է 50 կողմէլ:
5. **Մի կողով երակ**, Մանկական քաստեանկան հասուած, 1885 թուին, Գիճն է 20 կողմ:
6. **Մովսէս Խորենացու** Հայոց պատմութեան աշխարհաբար քարգմանութիւն եւ լուսարանութիւն: 1889 թուին: Գիճն է 1 ման. 50 կողմ:
7. **Ղարիպի Ա. Խաչի վանք**, վանքի լուսանկարով, 1891 թ. Գիճն է 30 կողմ:
8. **Լիճհարց եւ Պերտրոպ**, Մեծ մանկավարժ Պէսարլոցցիի պատմութիւն քարգմանութիւն: 1892 թ. Գիճն է 30 կողմ:
9. **Լ. Տօքսօյի Կրկնգրեան Սօցիալ** Քարգմանութիւն, 1893 թ. Գիճն է 1 Շրանկ-40 կողմ:



10. Ընդհանուր Պատմութիւն, Հին դար, Ս. Էջմիածնի Գ. ձեմարանում դասախօսված, (Շուլցիկինից)։
11. Ընդհանուր Պատմութիւն, Միջին դար, Գ. ձեմարանում դասախօսված, (Շուլցիկինից)։
12. Ռուսիայի Պատմութիւն, (Իլովայսկուց)։
13. Տրամադրանութեան համառօտ ձեռնարկ, նոյնպէս Փետրգեան ձեմարանում դասախօսված։
14. Մանկավարժական կադանդիք (Հրահանգիչ կրթական յօդուածներ)։
15. Ի՞նչպէս պէ՛տ է ապրել բաղդա՞ւոր լինելու համար (Սմայլսից)։
16. Լեւոն Առաջին, Ողբերգ, նոր արագրված։
17. Մանկավարժական յիշատակարան (Մի արի եվրոպական դպրոցների մէջ)։
18. Փաւսոսոս Բիզանդացու Հայոց Պատմութեան աշխարհաբար քարգմանութիւն։
19. Մեր գործածած արարատեան կամ արեւելեան աշխարհաբար լեզուի հոլովմունք, Խոնարհմունք, հոլովառու եւ հոլովվող նախադրութիւններ եւ քանի մի քննիչանուր կանոններ։
20. Տարսիւճ, Մօլլիէրի կասակերգ, Ֆրանսերէնից քարգմանութիւն։
21. Բեմքասացութեան հրահանգ, (անաւարտ)։

4362

24587

24588

5.90

2013

